

ԱՐԱՄ ՄԻՄՈՆՅԱՆ

ԵՊՀ ՌԵԿՏՈՐ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

2013/2014 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՈՒՄ

ԵՐԵՎԱՆ – 2014

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան	4
Կրթական գործունեություն.....	7
Գիտահետազոտական գործունեություն	29
Գիտական գրադարան	35
Հրատարակչական գործունեություն	39
Միջազգային համագործակցություն	44
Հանրային կապեր և տեղեկատվական համակարգեր	48
Աշխատանք ուսանողների և շրջանավարտների հետ	58
Սոցիալական քաղաքականություն.....	69
Տնտեսական գործունեություն	71
ԵՊՀ Իջևանի մասնաճյուղ	73
Հավելված	81

ԵՊՀ խորհրդի մեծարգո՝ նախագահ:

Խորհրդի հարգարժան անդամներ:

2013/2014 ուսումնական տարին հիշարժան և բազմաբնույթ իրադարձություններով հագեցած ժամանակահատված էր Երևանի պետական համալսարանի համար: 2014 թ. մայիսի 16-ին լրացավ մայր բուհի հիմնադրման 95-ամյակը: Այդ առիթով համալսարանի գործունեության բոլոր բնագավառներում տեղի ունեցան բազմաթիվ միջոցառումներ, որոնցից շատերը շարունակվեցին նաև այս ուսումնական տարում:

Հաշվետու ժամանակաշրջանում համալսարանի գործունեությունը բոլոր բնագավառներում կազմակերպվել և իրականացվել է ԵՊՀ 2010-2014 թթ. զարգացման ռազմավարական ծրագրով նախատեսված խնդիրներին ու նպատակներին համապատասխան:

Զգալի աշխատանք է կատարվել ուսումնական գործընթացի բարելավման ու զարգացման, կրթության որակի ներքին ապահովման համակարգի կատարելագործման, ուսուցման տեխնոլոգիական հենքի նորացման և ծավալման, գիտահետազոտական գործունեության ընդլայնման, ուսանողական միջոցառումների ակտիվացման և այլ ուղղություններով: Իրականացվել են կրթության կազմակերպման աշխատանքների բարելավման և մեթոդների նորացման, կրթության բովանդակության հարստացման և որակի բարձրացման, միջազգային չափանիշներին դրանց համապատասխանեցման ուղղությամբ մի շարք գործընթացներ: Կատարվել են կառուցվածքային մի շարք փոփոխություններ, ներդրվել են նոր մասնագիտություններ ու կրթական ծրագրեր, բացվել, վերանվանվել, վերակազմավորվել կամ լուծարվել են առանձին կառուցվածքային ստորաբաժանումներ:

Գիտական գործունեության բնագավառում իրականացվել են բազմաթիվ ձեռնարկումներ, կյանքի են կոչվել մի շարք ծրագրեր, ձեռք են բերվել տարբեր չափերի դրամաշնորհներ, ակտիվացել է ուսանողների ու ասպիրանտների մասնակցությունը գիտահետազոտական աշխատանքներում: Տեղի են ունեցել հանրապետական և միջազգային գիտաժողովներ, կոնֆերանսներ, գիտագործնական սեմինարներ ու քննարկումներ, որտեղ համալսարանականները ներկայացրել են կատարված ուսումնասիրությունների արդյունքները, արժանացել բարձր գնահատականների:

Լուրջ և արժեքավոր ուսումնասիրություններ են կատարվել ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտում: Ուշադրության կենտրոնում եղել են մեր երկրի ու ժողովրդի, ողջ հայության համար կարևոր մի շարք հիմնահարցեր, մասնավորապես՝ Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացների, Ղարաբաղյան հիմնախնդրի կարգավորման, հայ-թուրքական հարաբերությունների և այլնի վերաբերյալ:

Բնականոն ռիթմով շարունակվել է ԵՊՀ հրատարակչական գործունեությունը, կանոնավոր պարբերականությամբ լույս են տեսել գիտական հանդեսները:

Արդյունավետորեն շարունակվել է համագործակցությունը արտերկրի բազմաթիվ գիտակրթական ու մշակութային կենտրոնների հետ, կնքվել են համագործակցության նոր պայմանագրեր: Իրականացվել են համատեղ կրթական, գիտական, մշակութային ծրագրեր ու միջոցառումներ, դասախոսների և ուսանողների փոխանակություն, փոխայցելություններ և այլն: Շարունակվել է համագործակցությունը նաև Հայաստանում գործող կրթական միջազգային կազմակերպությունների հետ, կազմակերպվել են հանդիպումներ մեր երկրում հավատարմագրված դեսպանների հետ, ԵՊՀ են այցելել Հայաստան ժամանած օտարերկրյա բարձրաստիճան պաշտոնյաներ, դիվանագիտական կենտրոնների ներկայացուցիչներ, գիտության և մշակույթի գործիչներ:

ԵՊՀ վարչակազմն ու արհեստակցական կազմակերպությունը հաշվետու ժամանակաշրջանում ևս իրականացրել են մի շարք աշխատանքներ սոցիալական քաղաքականության ուղղությամբ: Առավել ուշադրություն է դարձվել համալսարանի աշխատակիցների հանգստի, առողջության պահպանման, սոցիալական այլևայլ խնդիրների լուծմանն ուղղված ծրագրերի իրագործմանը:

Ծավալուն աշխատանքներ են իրականացվել տնտեսական և ենթակառուցվածքների զարգացման ոլորտում: Էապես բարելավվել է ԵՊՀ նյութատեխնիկական բազան: Հիմնովին վերակառուցվել է ԵՊՀ կապի համակարգը, ձեռք են բերվել նոր թվային հեռախոսակայաններ, մեծացել է ներքին և ֆիքսված հեռախոսահամարների թիվը: Շարունակվել են ԵՊՀ մասնաշենքերը WiFi ազատ ինտերնետ կապով ապահովելու աշխատանքները: Ձեռք են բերվել ժամանակակից սարքավորումներ: Իրականացվել են բարեկարգման ու վերանորոգման ծավալուն աշխատանքներ և այլն:

Շարունակական աշխատանքներ են տարվել հասարակության հետ կապերի արդյունավետ զարգացման, ԵՊՀ վարկանիշի և հեղինակության բարձրացման ուղղությամբ:

Համալսարանական բոլոր գործընթացներին ակտիվորեն մասնակցել են ուսանողական կառույցները:

Բոլոր բնագավառներում ակտիվ ու հետևողական աշխատանքներ են իրականացվել նաև ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում, որտեղ ևս արձանագրվել են լուրջ ձեռքբերումներ, զգալի առաջընթաց:

ԵՊՀ խորհրդի նիստի հարգելի՛ մասնակիցներ, ստորև հանգամանորեն ներկայացվում է Երևանի պետական համալսարանի՝ 2013/2014 ուսումնական տարվա գործունեությունը՝ ըստ ոլորտների:

ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Հաշվետու ուսումնական տարում համալսարանում կրթական գործընթացը կազմակերպվել է ԵՊՀ 2010-2014 թթ. զարգացման ռազմավարական ծրագրով նախատեսված խնդիրներին ու նպատակներին և դրանց իրականացման ժամանակացույց-պլանին համապատասխան:

Շարունակվել են աշխատանքները ծրագրային բարեփոխումների, ուսումնական գործընթացի կատարելագործման, որակի ներքին ապահովման համակարգի զարգացման, կրթության կազմակերպման աշխատանքների բարելավման և մեթոդների նորացման, կրթության բովանդակության հարստացման և որակի բարձրացման և մի շարք այլ ուղղություններով:

Հաշվետու ժամանակահատվածում համալսարանի ուսումնակրթական գործունեությունն իրականացվել է հետևյալ հիմնական ուղղություններով:

1. Որակի ապահովում

2013/2014 ուստարում ԵՊՀ-ում շարունակվել են որակի ապահովմանը միտված գործընթացները (որակի ապահովման չափանիշների, չափորոշիչների և ընթացակարգերի ներդրման, որակի շարունակական բարելավման ուղղությամբ), որոնք համատեղ կազմակերպել և իրականացրել են ԵՊՀ որակի ապահովման կենտրոնը (ՈԱԿ) և այլ ստորաբաժանումներ:

Հաշվետու ժամանակահատվածում լրամշակվել և հրատարակվել են ԵՊՀ գիտխորհրդի 2014 թ. հունվարի 30-ի թիվ 4 նիստում հաստատված «ԵՊՀ կրթական ծրագրերի հաստատման կարգը» և «ԵՊՀ կրթական ծրագրերի մոնիթորինգի և վերանայման կարգը»: Առաջինը սահմանում է ԵՊՀ կրթական ծրագրերի արտոնման, ներքին փորձաքննության և հաստատման գործընթացների նպատակները և խնդիրները, դրանց ներկայացվող պահանջները, կիրառվող ընթացակարգերը և համապատասխան ժամանակացույցները: Այդ փաստաթղթում տրվում են նաև նոր կրթական ծրագրի ստեղծման հայտի ձևաթերթը և ծրագրի հաստատման փաստաթղթային փաթեթի կազմը: Երկրորդ փաստաթղթով սահմանվում են ԵՊՀ կրթական ծրագրերի ընթացիկ մոնիթորինգի և պարբերական վերանայման գործընթացներին ներկայացվող հիմնա-

կան պահանջները, կիրառվող ընթացակարգերը, ժամանակացույցները և այլն: Դրանում տրվում է նաև ծրագրի ընթացիկ մոնիթորինգի հաշվետվության ձևաթերթը:

ՀՀ ԿԳՆ «Կրթության որակ և համապատասխանություն» վարկային ծրագրի «Որակի ապահովման ներքուհական համակարգերի ներդրում կամ դրանց հետագա բարելավում» դրամաշնորհային ծրագրով 2012 թ-ից ԵՊՀ-ում իրականացվող «ԵՊՀ որակի ներքին ապահովման համակարգի զարգացում և ինքնագնահատման գործընթացի ներմուծում» նախագծի շրջանակներում հաշվետու ուստարում իրականացվել են մի շարք աշխատանքներ: Մասնավորապես՝ կազմվել է ԵՊՀ որակի ապահովման և շարունակական բարելավման ձեռնարկը, որը ներառում է ԵՊՀ որակի ապահովման քաղաքականությունը, կրթական ծրագրերի որակի ապահովումը և շարունակական բարելավումը, ուսանողների արժանահավատ գնահատման կազմակերպումը, դասախոսական կազմի որակի ապահովումը և շարունակական բարելավումը, ուսումնառության ռեսուրսների և ուսանողների աջակցության ծառայությունների որակի ապահովումը, ուսանողների և այլ շահակիցների հետ հետադարձ կապի ապահովումը, համալսարանի և նրա կրթական ծրագրերի ինքնագնահատումը, ինստիտուցիոնալ և ծրագրային հավատարմագրման պետական չափանիշները և կարգերը: Մշակվել է ԵՊՀ դասախոսական կազմի տարեկան գործունեության գնահատման ղեկավար ձեռնարկը, որը ներառում է դասախոսի ինքնագնահատման ընթացակարգը և ձևաչափը (դասախոսի ինքնագնահատման տարեկան զեկույցի ձևաթերթի տեսքով), գործընկեր դասախոսների և անմիջական ղեկավարի (ամբիոնի վարիչի) կողմից դասախոսի գնահատման ընթացակարգը և ձևաչափը, ինչպես նաև դասախոսի գնահատման չափանիշները՝ ներկայացված երեք հիմնական ոլորտներում (դասավանդում և ուսումնամեթոդական գործունեություն, գիտահետազոտական և ստեղծագործական գործունեություն, հասարակական և վարչական գործունեություն) տարբեր տարակարգերի դասախոսների գնահատման անալիտիկ ռուբրիկի տեսքով:

Իրականացվել է ֆակուլտետային ՈԱ հանձնաժողովների ղեկավարների և դեկանների տեղակալների վերապատրաստում՝ արդյունահեն երկմակարդակ կրթական ծրագրերի և դասընթացների մշակման, արտոնման, փաստաթղթավորման, ներքին փորձաքննության, հաստատման, մոնիթորինգի և վերանայման գործընթացների, ուսանողների և դասախոսական կազմի գնահատման մեթոդաբանության ուսուցման նպատակով:

Կազմվել է ուսումնառության ռեսուրսների և ուսանողների աջակցության ծառայությունների գործունեության գնահատման ցուցանիշների լրակազմ և միջոցառումների պլան՝ դրանց բարելավմանն ուղղված կոնկրետ գործողություններով և ժամանակացույցով: Այն ներկայացնում է ԵՊՀ ուսումնառության ռեսուրսների և ուսանողների աջակցության ծառայությունների նպատակը և կազմը, դրանց պլանավորումը, այդ ծառայություններին ներկայացվող պահանջները, գնահատումը և գնահատման չափանիշները, ծառայությունների փաստաթղթային փաթեթը:

Նախագծի շրջանակներում ստեղծվել է որակի ապահովման և հավատարմագրման Web-հենքով վիրտուալ շտեմարան՝ ուսանողների, դասախոսների, շրջանավարտների և արտաքին շահակիցների հետ հետադարձ կապի ապահովման հնարավորությամբ: Համակարգի հիմնական նպատակը ԵՊՀ դասընթացների և կրթական ծրագրերի որակի և արդյունավետության գնահատման հետադարձ կապի առցանց մեխանիզմների (ուսանողական հարցումներ և այլն) ապահովումը, ծրագրերի և դասընթացների որակի բարելավմանն ուղղված միջոցառումների և դրանց արդյունքների վերաբերյալ ԵՊՀ և լայն հանրության իրազեկումն է: Համակարգի խնդիրներն են.

- առանձին դասընթացների որակի և արդյունավետության առցանց գնահատում ուսանողական հարցումների օգնությամբ,
- կրթական ծրագրերի որակի և արդյունավետության գնահատում՝ բաղկացուցիչ դասընթացների գնահատման արդյունքների հիման վրա,
- դասընթացների և ծրագրերի գնահատման արդյունքների վերաբերյալ հաշվետվությունների կազմում և համապատասխան օգտվողներին առցանց իրազեկում,
- դասընթացների և ծրագրերի որակի բարելավմանն ուղղված միջոցառումների և/կամ գործողությունների պլանի առցանց կազմում և հրապարակում,
- ԵՊՀ որակի ապահովման և հավատարմագրման գործընթացների արդյունավետ իրականացման համար վիրտուալ ռեսուրս-շտեմարանի տրամադրում:

Որակի ապահովման կենտրոնը (ՈԱԿ) մշակել և ԿԳՆ-ի ու ՀՀ մի շարք պետական բուհերի և արտասահմանյան գործընկեր կազմակերպությունների հետ համատեղ 2014 թ. հունվարից իրականացնում է TEMPUS “ARMENQA” ազգային նշանակու-

թյան եռամյա ծրագիրը, որն ուղղված է որակավորումների ազգային և ոլորտային շրջանակների (ՈԱՇ և ՈՈՇ) իրականացմանը ՀՀ-ում: Նախագիծը ֆինանսավորվում է Եվրոպական հանձնաժողովի կողմից, որի նպատակն է բարձրացնել ՀՀ բուհերի շրջանավարտների զբաղվածությունը և նպաստել ՀՀ որակավորումների ճանաչմանը աշխատաշուկայում՝ ազգային և միջազգային մակարդակներում: Նախագծի հիմնական խնդիրներն են.

- ՀՀ ՈԱՇ-ի գործնականացում՝ օրենսդրական, կանոնադրական և մեթոդաբանական հենքի ու մի շարք գործիքների ստեղծման և կիրարկման միջոցով,
- ՈԱՇ-ի մասին հիմնական շահակիցների՝ բուհերի, ուսանողների և շրջանավարտների, գործատուների ու աշխատաշուկայի ներկայացուցիչների, ոլորտը կարգավորող պետական մարմինների ու հանրային գործընկերների կարողությունների զարգացում,
- ՀՀ-ում ՈՈՇ-ների ստեղծման և փորձարկման նպատակով ազգային մոդելի և մեթոդաբանական հենքի մշակում,
- ՀՀ բուհերին ծրագրային կողմնորոշիչների, մեթոդաբանական հենքի և պրակտիկ գործիքների տրամադրում՝ կրթական վերջնարդյունքների վրա հիմնված բազմամակարդակ կրթական ծրագրերի մշակման համար, որոնք համահունչ են ՀՀ ՈԱՇ-ի, ՈՈՇ-ի և աշխատաշուկայի պահանջներին:

2012-2013 թթ. ԵՊՀ-ում իրականացվեց ինստիտուցիոնալ և ծրագրային փորձնական հավատարմագրում: Այդ նպատակով համալսարանը նախաձեռնեց ինքնագնահատման գործընթաց՝ գնահատելու իր գործունեության արդյունավետությունը բոլոր հիմնական ոլորտներում, վեր հանելու ձեռքբերումներն ու բացթողումները, նախանշելու վերջիններիս շտկման ու լրացման ուղիները: Բոլոր շահագրգիռ շրջանակների ներկայացուցիչներից կազմված աշխատանքային խմբերի տևական ու ջանադիր աշխատանքի արդյունքում կազմվեց ԵՊՀ ինստիտուցիոնալ ինքնագնահատման զեկույցը, որը հրապարակվեց և տարածվեց ԵՊՀ ներքին և արտաքին շահակիցների շրջանում, ինչպես նաև ներկայացվեց միջազգային փորձագիտական խմբին՝ ծանոթանալու և առաջարկություններ ու դիտողություններ ներկայացնելու համար: Այնուհետև, վերջնամշակված զեկույցը ներկայացվեց Որակի ապահովման ազգային կենտրոն (ՈԱԱԿ) և միջազգային փորձագիտական խմբին՝ ուսումնասիրության համար:

2013 թ. հունիսի 16-19-ը փորձագիտական խումբը, որում ներգրավված էին երկու միջազգային և երեք տեղական փորձագետներ, այցելեց ԵՊՀ՝ վերջնական գնահատական տալու բուհի գործունեությանը: Այցից հետո՝ արդեն 2013 թ. սեպտեմբերին, փորձագիտական խումբը ԵՊՀ-ին ներկայացրեց իր զեկույցը՝ հավատարմագրման վերաբերյալ: Փորձագիտական պետական հավատարմագրման 10 չափանիշներից 9-ի գծով ԵՊՀ գործունեությունը գնահատվել է դրական: Անբավարար է գնահատվել միայն գիտահետազոտական գործունեությունը՝ կրթության և հետազոտության անբավարար կապի և հումանիտար գիտություններում միջազգային հրապարակումների սահմանափակ քանակի պատճառով: Սակայն համալսարանի գործունեության բոլոր հիմնական ոլորտներում էլ առկա են որոշ թերացումներ և բացթողումներ, որոնց մասին նշել է նաև միջազգային փորձագիտական խումբը: Դրանց անդրադարձ կարվի համապատասխան բաժիններում:

Ամփոփելով ԵՊՀ գործունեության ձեռքբերումները և բացթողումները՝ փորձագիտական խումբը համալսարանին է ներկայացրել բուհի հետագա արդյունավետ գործունեությանը միտված մի շարք երաշխավորություններ:

Հաշվետու ժամանակաշրջանում ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորի ղեկավարությամբ և ՈԱԿ-ի աջակցությամբ ու մասնակցությամբ՝ աշխատանքային խմբերում մշակվել, այնուհետև համակարգվել և վերջնական տեսքի է բերվել «ԵՊՀ ինստիտուցիոնալ հավատարմագրման փորձագիտական գնահատման երաշխավորությունների իրականացման գործողությունների ծրագիրը», որը հաստատվել է ԵՊՀ գիտխորհրդի 2014 թ. հունվարի 30-ի նիստում: Ծրագրում, ըստ հավատարմագրման չափանիշների, ներկայացված են համապատասխան փորձագիտական երաշխավորությունները, տվյալ խնդրի ընթացիկ վիճակը, բարելավող գործողությունները/միջոցառումները, վերջիններիս իրականացման ժամանակացույցը, պատասխանատուները, պահանջվող ռեսուրսները, ինչպես նաև վերջնարդյունքները և դրանց ձեռքբերման ցուցիչները:

ԵՊՀ-ում կրթության որակի շարունակական բարելավմանը նպաստող կարևոր գործոններից են դասավանդման արդյունավետության վերաբերյալ ուսանողական կիսամյակային հարցումները և համալսարանում ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության ամենամյա հարցումները:

2013/2014 ուստարում դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողական կիսամյակային հարցումներին մասնակցել է բակալավրիատի և մագիստրատուրայի առկա ուսուցման համակարգի 8634 ուսանող, որը կազմում է այդ համակարգի ուսանողության 70,4 %-ը: Հարցումների արդյունքում թե՛ հումանիտար, թե՛ բնագիտական մասնագիտությունների գծով միջին թվաբանական միավորը կազմել է 4,52: Ինչպես նախորդ, այս ուստարում ևս ուսանողական հարցման արդյունքներն օգտագործվել են դասախոսների պաշտոնավարման և առաջխաղացման համար անցկացվող մրցույթներում: ԵՊՀ-ում ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության գնահատման հարցումներին 2013/2014 ուստարում մասնակցել է բակալավրիատի 1571 և մագիստրատուրայի 690 շրջանավարտ, որոնց արդյունքները որոշակի դեր են ունեցել ուսումնական ծրագրերի և ուսումնական միջավայրին ուղղված միջոցառումների մշակման համար:

Կրթության որակի ապահովման և բարելավման կարևորագույն պայմաններից մեկը աշխատաշուկայի պահանջունքներին համապատասխան մասնագետների պատրաստումն է գործընկերության շրջանակներում: Հաշվետու ժամանակաշրջանում շարունակվել է «Մինոփսիս-Արմենիա» ձեռնարկության հետ ձևավորված համալսարան-գործատու փոխշահավետ համագործակցությունը, որտեղ գործատուն անմիջականորեն մասնակցում է իր ապագա կադրերի պատրաստման գործընթացին: Համագործակցության շրջանակներում իրականացվող կրթական գործընթացներում 2013/2014 ուստարում ընդգրկվել են ԵՊՀ բակալավրիատի, մագիստրատուրայի, ինչպես նաև ասպիրանտուրայի 37 սովորողներ:

Ուսման որակի բարձրացման կարևոր ուղիներից է նաև կրկնակի դիպլոմով ծրագրերի իրականացումը ԵՊՀ-ում: Ռոստոկի համալսարանի հետ համատեղ 2010 թվականից իրականացվում է «Վիզուալ հաշվարկ» մագիստրոսական ծրագիրը, որը արդեն տվել է 14 շրջանավարտ: ԵՊՀ-ն 2010 թ-ից ներգրավված է նաև ԱՊՀ «Ցանցային համալսարան» ծրագրում, որի շրջանակներում Ժողովուրդների բարեկամության ռուսական և Ուրալի դաշնային համալսարանների հետ համատեղ 6 մասնագիտությունների գծով իրականացնում է կրկնակի դիպլոմով ծրագրեր և արդեն տվել է շուրջ 30 շրջանավարտ:

2. Ուսումնական գործընթացի ընթացիկ կազմակերպում և բարելավում

Հաշվետու ժամանակաշրջանում շարունակվել են ուսումնական գործընթացի բնականոն ընթացքի ապահովմանը և բարելավմանն ուղղված աշխատանքները:

Վերապատրաստված ֆակուլտետային ՈԱ հանձնաժողովների ղեկավարները և ղեկանների տեղակալները իրենց ֆակուլտետների կրթական ծրագրերի համար մշակել են կրթական վերջնարդյունքների վրա հիմնված ուսումնական ծրագրեր և դրանց մասնագրերը (սպեցիֆիկացիաները): Դրանցում ներկայացված են ծրագրի և նրա բաղկացուցիչ դասընթացների նպատակը, կրթական վերջնարդյունքները, դասավանդման, ուսումնառության և գնահատման կիրառվող մեթոդները և ուսումնական պլանի քարտեզը: Մշակված մասնագրերը ներկայացվել են ՈԱԿ-ի գնահատմանը՝ հեղինակներին համապատասխան կրեդիտներ հատկացնելու նպատակով:

Ֆակուլտետներում տպագրվել է համաեվրոպական ձևաչափի դիպլոմի հավելվածը առկա և հեռակա ուսուցման բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի ուսանողների համար: Միաժամանակ, լրամշակվել են ԵՊՀ առկա և հեռակա ուսուցման համակարգերի բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով սովորող ուսանողների համար նախատեսված միասնական ֆակուլտետային «Կրեդիտային համակարգով ուսումնառության ուղեցույց և դասընթացների տեղեկագիրք» տեղեկատվական ձեռնարկները, որոնք տեղադրվել են ԵՊՀ պաշտոնական կայքում՝ ներբեռնելու հնարավորությամբ:

Իրականացվել է բակալավրիատի ու մագիստրատուրայի առկա և հեռակա ուսուցման առաջին կուրսի ուսանողների և ԵՊՀ-ի միջև ուսումնական գործընթացի կազմակերպման վերաբերյալ պայմանագրերի կնքման գործընթացը:

Շարունակվել են աշխատանքներն ուսանող-դասախոս թվաքանակի հարաբերակցության օպտիմալացման ուղղությամբ: Ավտոմատացված համակարգի կիրառումը թույլ է տվել կատարելագործել ուսումնական գործընթացի պլանավորումը, կառավարումը և կատարողականի վերահսկումը: Կրթության որակի բարելավման, ուսումնական գործընթացի արդյունավետության բարձրացման նպատակով միջոցներ են ձեռնարկվել պրոֆեսորադասախոսական կազմի աշխատածավալների օպտիմալացման ուղղությամբ:

Ուսումնական գործընթացը կազմակերպելու համար հաշվետու ուստարում ևս հաշվառվել է լսարանային ֆոնդը, իրականացվել են աշխատանքներ այն արդյունավետ օգտագործելու և դասերի կանոնավոր կայացման ուղղությամբ:

2013/2014 ուստարվանից ուսանողի ուսումնական քարտի էլեկտրոնային տարբերակը ներդրվել է ֆակուլտետներում և կենտրոններում դեկանատների գործավարությունը առավել հստակեցնելու և գործառույթները օպտիմալացնելու համար:

Նշված ուստարում ևս իրականացվել է ԵՊՀ ուսանողական նպաստների, պետական և ներբուհական կրթաթոշակների հատկացման գործընթացը կրթության որակի ապահովման պահանջներով՝ առաջնորդվելով փոփոխված կանոնակարգով: Ուսանողական նպաստների հատկացումը կատարվել է ՀՀ պետական բյուջեով նախատեսված միջոցների և ԵՊՀ ֆինանսական միջոցների հաշվին: Ըստ առաջադիմության արդյունքների՝ նպաստ է տրվել բակալավրիատի և մագիստրատուրայի 1316 ուսանողի, որոնցից 354-ը բակալավրիատի 1-ին, 347-ը՝ 2-րդ, 240-ը՝ 3-րդ կուրսերից են, իսկ 387-ը մագիստրատուրայի 1-ին տարվա սովորողներ են: Համակարգի փոխատեղման են ենթարկվել (վճարովիից՝ անվճար և հակառակը) բակալավրիատի 1-ին կուրսի 101 (30,1 %), 2-րդ կուրսի 84 (24,9 %), 3-րդ կուրսի 41 (21,9 %) և մագիստրատուրայի 1-ին կուրսի 76 (20,3 %) ուսանողներ:

Հասարակական ակտիվություն և ուսման բարձր առաջադիմություն ցուցաբերած ուսանողներին հատկացվել է կրթաթոշակ: Պետական կրթաթոշակից բացի՝ հատկացվել է նաև ԵՊՀ-ի և այլ կազմակերպությունների կողմից սահմանված անվանական 58 կրթաթոշակ: «Կրթության մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ վճարովի համակարգի ուսանողներին հատկացվել են ուսման վարձի զեղչեր, որոնցից 1-ին կիսամյակում օգտվել է 1984 ուսանող, 2-րդ կիսամյակում՝ 2874-ը: 1-ին կիսամյակում նրանցից 1423 եղել են բակալավրիատի, 372-ը՝ մագիստրատուրայի ուսանողներ, իսկ 2-րդ կիսամյակում 2118-ը եղել են բակալավրիատի, 581-ը՝ մագիստրատուրայի ուսանողներ: Ուսման զեղչերից օգտվողներից 1-ին և 2-րդ կիսամյակներում համապատասխանաբար 189-ը և 175-ը եղել են համալսարանի աշխատակիցների երեխաներ: Երկու կիսամյակներում կիրառված զեղչերի ընդհանուր գումարը կազմել է ավելի քան 263 մլն դրամ: Կատարված գործընթացը՝ ըստ ուսուցման ձևի, ֆակուլտետների, մասնագիտությունների, կուրսերի, զեղչված տոկոսի չափի, կարգավիճակի և գումարների, մանրամասն ամփոփվել է առանձին գրքույկում, որը տրամադրվել է նաև ԿԳՆ-ին:

Տեղեկատվական տեխնոլոգիաների կրթական և հետազոտական կենտրոնում (SSԿՀ) մշակված «SuperVision YSU» ծրագրի միջոցով ուսումնամեթոդական վարչությունը շարունակել է առաջադիմության վերահսկման աշխատանքները՝ զեղչերի կիրառման և նպաստների հատկացման գործընթացն առավել հստակ և անթերի կազմակերպելու նպատակով: Ինչպես նախորդ, այս ուստարում ևս SSԿՀ կենտրոնում և ուսումնամեթոդական վարչությունում շարունակվել են քննությունների արդյունքների մշակման ավտոմատացման խնդիրների վերաբերյալ ուսուցողական աշխատանքները ֆակուլտետների և կենտրոնների դեկանատների աշխատակիցների հետ՝ միտված համակարգչային այդ ծրագրից օգտվելու նրանց հմտությունների զարգացմանը:

Ուսանողների գիտելիքների գնահատման գործընթացի թափանցիկության և հրապարակայնության ապահովման նպատակով բոլոր գործողություններն իրականացվել են՝ հետևելով ՀՀ կառավարության, ԿԳ նախարարության և ԵՊՀ կանոնակարգերին ու պահանջներին:

Շարունակվել են լսարաններում տեսախցիկների տեղադրման աշխատանքները՝ տեսագրելու ամփոփիչ ատեստավորման ընթացքը և ապահովելու ամփոփիչ ատեստավորման արդյունքների բողոքարկման գործընթացը:

Կազմակերպվել և իրականացվել է էլքային արդյունքների վերահսկման գործընթացը: Ամփոփվել և ԿԳՆ են ներկայացվել ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների նախագահների հաշվետվությունները:

2013/2014 ուստարում պատրաստվել և շրջանավարտներին է հանձնվել 4904 դիպլոմ, որից 2430-ը՝ առկա ուսուցման համակարգի բակալավրիատում, 1352-ը՝ մագիստրատուրայում, 750-ը՝ հեռակա ուսուցման համակարգի բակալավրիատում, 343-ը՝ մագիստրատուրայում, 1-ը՝ նախորդ տարիների 5-րդ կուրսի շրջանավարտի: Վերականգնվել և տրվել է շրջանավարտների 28 դիպլոմի կրկնօրինակ:

Հաշվարկվել և վերահսկվել է ուսանողական շարժը: Ձևակերպվել են ՀՀ զինված ուժերում ծառայելու, ազատման, տեղափոխման, վերականգնման, արտերկիր գործուղման, հիվանդությունների պատճառով տարկետման, ինչպես նաև ուսումնական գործընթացին առնչվող այլ հրամաններ:

Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն և ՀՀ ԿԳՆ են ներկայացվել 1-ԳՄ և 3-ԳՄ ձևաչափերով վիճակագրական հաշվետվությունները, որոնք ներառում են քննությունների արդյունքները և շրջանավարտների

վերաբերյալ այլ տվյալներ, ինչպես նաև ԵՊՀ պրոֆեսորադասախոսական կազմին առնչվող տեղեկատվություն: Մշակվել են ամբիոնային բեռնվածությունների, զեղչերի, տեղափոխությունների և քննաշրջանի արդյունքների տվյալները, որոնք ամփոփվել են առանձին գրքույկի ձևով:

Ուսումնական գործընթացի կարևոր բաղադրիչներից մեկը պրակտիկան է, որի ճիշտ կազմակերպումն ու արդյունավետ անցկացումը կրթության որակի գրավականներից են: Հաշվետու ուստարում նախապատրաստական աշխատանքներից հետո ուսումնական պլաններով նախատեսված պրակտիկաներն իրականացնելու համար համալսարանը տարբեր պետական և ոչ պետական հաստատությունների, հիմնարկների, կազմակերպությունների հետ կնքել է պայմանագրեր, որոնց համապատասխան՝ կազմակերպվել են ուսումնական, արտադրական ու մանկավարժական պրակտիկաներ: Արտադրական (այդ թվում՝ մանկավարժական) պրակտիկա է անցել 5243 ուսանող (բակալավր և մագիստրոս), ուսումնական պրակտիկա՝ 1390 ուսանող, որոնցից 897-ը՝ դաշտային:

3. Ընդունելության նախապատրաստում

Ելնելով նրանից, որ դիմորդների հավաքագրման գործում առկա են որոշակի դժվարություններ՝ կապված մի շարք օբյեկտիվ իրողությունների հետ (դեպի բուհեր դիմորդների թվի նվազում, պետական բուհերի միջև մրցակցության ուժեղացում, Ամերիկյան համալսարանում բակալավրիատի ընդունելություն, հաջորդ տարի արդեն Մոսկվայի պետական համալսարանի մասնաճյուղի բացում Երևանում, ԵՊՀ կազմում ավագ դպրոցի և քոլեջի բացակայություն և այլն), մինչհամալսարանական կրթության վարչության ջանքերով հաշվետու ուստարում ընդլայնվել և ակտիվացվել է համալսարանի գովազդարշավը ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատություններում: Վարչությունը հաշվետու ժամանակաշրջանում ևս սկիզբ է դրել մի շարք նոր նախաձեռնությունների՝ «դպրոց-բուհ» փոխադարձ կապի ամրապնդման, շարունակական կրթության ապահովման, ավագ դպրոցների աշակերտների, ինչպես նաև քոլեջների սովորողների մասնագիտական կողմնորոշման ուղղությամբ:

Հաշվի առնելով մեր երկրի զարգացման հիմնական միտումները և միջազգայնորեն ընդունված կրթական չափանիշները՝ 2013/2014 ուստարում նույնպես մեծ

ուշադրություն է դարձվել ավագ դպրոցի ինստիտուցիոնալ համակարգի կատարելագործմանը, հանրակրթության արդյունավետության բարձրացմանը՝ դրանով իսկ նպաստելով ավագ դպրոցի կայացման գործին, օգտագործելով ԵՊՀ-ի և՛ պրոֆեսորադասախոսական, և՛ նյութատեխնիկական ներուժը: Հանրակրթության համակարգում առկա հիմնախնդիրների լուծման նպատակով մեր ռեսուրսներն ավելի նպատակային օգտագործելու համար 2013/2014 ուստարում ԵՊՀ-ն համագործակցության պայմանագրեր կնքեց Երևանի ևս 6 և ՀՀ մարզերի 4 ավագ դպրոցների հետ՝ դրանց թիվը հասցնելով 29-ի:

Առկա հաջողություններից ակնառու է հատկապես համագործակցությունը ավագ դպրոցներում, խորացված գիտելիքների մատուցումը 14 լրացուցիչ կրթական դասընթացների միջոցով, որ պարբերաբար իրականացնում է ԵՊՀ պրոֆեսորադասախոսական կազմը՝ 32 ամենափորձառու դասախոսների աջակցությամբ, որոնց վարձատրությունն իրականացվում է ԵՊՀ միջոցների հաշվին: Այս ծրագիրը մեծ հավանության է արժանացել աշակերտության, դպրոցների տնօրինության, ինչպես նաև ծնողական խորհուրդների կողմից, քանզի այն նպաստում է աշակերտների մասնագիտական կողմնորոշմանը:

Համալսարանի հետ պայմանագիր կնքած ՀՀ մարզերի դպրոցների համար ԵՊՀ մինչհամալսարանական կրթության վարչության կողմից մշակվել և հաջողությամբ իրականացվում է առանձին ծրագիր: Բարի ավանդույթի տեսքով անցյալ ուստարում ևս, ինչպես գարնանը, այնպես էլ աշնանը, կազմակերպվեց ակնարկային դասախոսությունների շարք ՀՀ մարզերի պայմանագրային ավագ դպրոցներում:

Հարկ է նշել, որ հաշվետու ուստարում բազմաբովանդակ աշխատանք է տարվել նաև թվով 28 հիմնական և ավագ դպրոցներում ու վարժարաններում, որոնց հետ ԵՊՀ-ն ունի համագործակցության երկարաժամկետ համաձայնագրեր:

ԵՊՀ վարկանիշի բարձրացման, կրթօջախի մասին լիարժեք պատկերացում կազմելու համար և խիստ կարևորելով հանրակրթական ավագ դպրոցների աշակերտների մասնագիտական կողմնորոշման ուղղությամբ տարվող աշխատանքները՝ 2013/2014 ուստարվա ընթացքում մայրաքաղաքի և մարզերի ավագ դպրոցների շուրջ 2700 աշակերտների համար կազմակերպվել են «Բաց դռների օր» և նպատակային ճանաչողական այցեր ԵՊՀ՝ աշակերտներին հնարավորություն ընձեռելով հանդիպելու համալսարանի և ֆակուլտետների ղեկավարության, ինչպես նաև դասախոսական

կազմի հետ, ծանոթանալու ուսումնական ծրագրերին և ուսումնառության առկա հնարավորություններին:

Շարունակվում է կարևորվել ավանդույթ դարձած՝ ավագ դպրոցների աշակերտների համար հանրակրթական տարբեր առարկաների գծով օլիմպիադայի անցկացումը ԵՊՀ-ում և ՀՀ մարզերում: Ամեն տարի նախորդի համեմատությամբ զգալի մեծանում են մասնակից դպրոցների աշխարհագրությունը և աշակերտ մասնակիցների թիվը: Բերենք միայն մեկ օրինակ. եթե 2009 թ. օլիմպիադային մասնակցել է 600 աշակերտ՝ միայն Երևանի դպրոցներից, և դիպլոմների ու գովասանագրերի արժանացել 167-ը, ապա 2014 թ. մասնակիցների թիվը Երևանի և ՀՀ մարզերի 197 դպրոցներից 2822 էր, իսկ պարգևատրվածների թիվը՝ 393:

Նշենք, որ ԵՊՀ մինչհամալսարանական կրթության վարչության աշխատանքային ծրագրերում ներառված է նաև դիմորդների հետ տարվող աշխատանքների գծով հենակետերի ստեղծումը հանրապետության բոլոր մարզերում: Հաշվետու ուստարում ԵՊՀ ներկայացուցչություն է ստեղծվել նաև Արագածոտնի մարզում, որն էլ ակտիվ աշխատանքներ է տանում դպրոցներում ԵՊՀ կրթական ծրագրերի և մասնագիտությունների մասին անհրաժեշտ տեղեկատվություն ապահովելու ուղղությամբ:

Կրթական համակարգի զարգացումների համատեքստում կարևորվում է պետական մասնագիտական քոլեջների շրջանավարտների որակյալ կրթության շարունակականության լուրջ խնդիրների լուծմանն աջակցելը, որը կապահովի նաև նրանց կրթամակարդակի ակադեմիականությունն ու պրոֆեսիոնալիզմը: Հարկ է նշել նաև, որ դեպի համալսարան դիմորդների հոսքի պահպանման նպատակով հաշվետու ուստարում ծավալուն աշխատանք է կատարվել քոլեջների շրջանավարտների հետ. նրանց ներկայացվել են համալսարանական մասնագիտությունները, շարունակական կրթության և ընդհանուր հիմունքներով բակալավրի ծրագրով բուհ ընդունվելու կարգերը: Արդյունքում, ներկա ուստարում ԵՊՀ-ն ևս 3 պետական մասնագիտական քոլեջների հետ կնքեց շարունակական կրթության վերաբերյալ համագործակցության պայմանագիր՝ դրանց թիվը հասցնելով 15-ի: Ըստ այդ պայմանագրի՝ ԵՊՀ-ն կաջակցի քոլեջներին ուսումնական պլանների և առարկայական ծրագրերի բարելավման գործում, ինչպես նաև կիրականացնի կադրերի որակավորման բարձրացման գործառույթ: Այս ամենի արդյունքում, շարունակական կրթություն ստանալու նպատակով նշված քոլեջներից ԵՊՀ-ն 14 մասնագիտությունների գծով շուրջ 100 հայտ է ստացել:

Վարչությունը ձգտել է նախապատրաստական դասընթացների բաժին դիմորդների հոսք ապահովել, այնուհետ ձևավորել դասընթացների լայն ընտրանի՝ ըստ կրթական ծրագրերի, և ապահովել դրանց իրականացման ճկուն ժամանակացույց:

Նախապատրաստական դասընթացների կրթական ծրագրերի բովանդակությունն ու որակն ապահովելու, ինչպես նաև ունկնդիրների համար ավարտական քննությունների թեստեր պատրաստելու նպատակով ԵՊՀ պրոֆեսորադասախոսական կազմի առավել հմուտ և փորձառու ներկայացուցիչներից ձևավորվել է փորձագիտական խորհուրդ՝ ըստ հանրակրթական առանձին առարկաների:

Ունկնդիրների ուսուցումը նույնպես կազմակերպվել է փորձագիտական խորհրդի կողմից նախապես քննարկված և հաստատված ուսումնական պլաններով: Արդյունքում, ունկնդիրների մեծ մասը, հաջողությամբ հանձնելով 2014 թ. ընդունելության միասնական և կենտրոնացված քննությունները, ընդունվել է առկա ուսուցման համակարգ, իսկ 17-ը՝ ավարտական քննությունների արդյունքներով՝ հեռակա ուսուցման համակարգ:

4. Ընդունելություն

Ինչպես նախորդ, այս ուստարում ևս վերանայվել են առկա և հեռակա ուսուցմամբ բակալավրի և մագիստրոսի պատրաստման կրթական ծրագրերը՝ հաշվի առնելով դրանց արդիականությունը և ուսանողների նախասիրությունները: Մասնավորապես՝ Հայագիտական հետազոտությունների ինստիտուտում բացվել է առկա ուսուցմամբ մագիստրոսական մեկ նոր ծրագիր՝ «Ցեղասպանագիտություն», որտեղ ուսուցումն ԱՊՀ և արտերկրի հայազգի դիմորդների համար անվճար է:

ՀՀ-ում հեռուստալրագրության ոլորտում ժամանակակից և որակյալ մասնագետներ պատրաստելու նպատակով ԵՊՀ և Հանրային հեռուստաընկերության խորհրդի համատեղ նախաձեռնության արդյունքում, ԵՊՀ գիտխորհրդի որոշմամբ բացվել է Մասս-մեդիայի կրթական կենտրոնը: Կենտրոնի հիմնական նպատակն է պատրաստել կադրեր հեռուստատեսության և ռադիոյի ոլորտների համար: Կենտրոնում «Ռեժիսուրա», «Օպերատորություն», «Լրագրություն» և «Կառավարում» մասնագիտություններով իրականացվում են «Հեռուստառեժիսուրա», «Պրոդյուսերական գործ» և «Հաղորդավարական գործ» մագիստրոսական ծրագրերը:

2014/2015 ուստարում ԵՊՀ դիմորդների թիվը առկա ուսուցման համակարգի բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերում կազմել է համապատասխանաբար 3723 և 1549: Կենտրոնացված ընդունելության համակարգի դիմորդների ընդհանուր հոսքում համալսարանի բակալավրիատի դիմորդների բաժնեմասը կազմել է 31 %:

Ընթացիկ ուստարում ԵՊՀ բակալավրիատ ընդունվածների թիվը կազմել է 3224 (անվճար՝ 408, վճարովի՝ 2816), իսկ մագիստրատուրա՝ 1249 (անվճար՝ 394, վճարովի՝ 855): Մայր բուհի բակալավրի կրթական ծրագրի ընդունելության բաժնեմասը կենտրոնացված ընդունելության համակարգի ընդհանուր ծավալում կազմել է 31,2 %: Համալսարանի դիմորդների և ընդունվածների ընդհանուր հոսքերում իգական սեռի հաշվեկշիռը կազմել է համապատասխանաբար՝ 65,1 % և 64,3 %:

Օտարերկրյա դիմորդների թիվը բակալավրիատում եղել է 60, իսկ մագիստրատուրայում՝ 13: ԵՊՀ ընդունված օտարերկրյա քաղաքացիների թիվը բակալավրիատում կազմել է 51, մագիստրատուրայում՝ 13:

2014/2015 ուստարում հեռակա ուսուցման համակարգում դիմորդների թիվը բակալավրիատում կազմել է 603, որից ընդունվել է 523-ը, իսկ մագիստրատուրայում՝ 500, որից ընդունվել է 385-ը:

5. Հիմնական ուսանողական համակազմ և շրջանավարտներ

2013/2014 ուստարում ԵՊՀ առկա ուսուցման համակարգի ուսանողների թիվը կազմել է 12272, որից 9578-ը՝ բակալավրիատում (այդ թվում՝ 8021-ը վճարովի ուսուցմամբ), 2658-ը՝ մագիստրատուրայում (այդ թվում՝ 1727-ը վճարովի ուսուցմամբ), իսկ 36-ը միջազգային կրթական կենտրոնի ուսանողներ են:

ԵՊՀ հեռակա ուսուցման համակարգում հաշվետու ժամանակահատվածում սովորել է 4944 ուսանող, որից 3989-ը՝ բակալավրիատում, իսկ 955-ը՝ մագիստրատուրայում:

Օտարերկրյա ուսանողների ընդհանուր թիվը կազմել է 383, որից 338-ը՝ առկա ուսուցմամբ, իսկ 45-ը՝ հեռակա:

ԵՊՀ հիմնական ուսանողական թվակազմում (17216՝ առանց Իջևանի մասնաճյուղի) մագիստրոսական համակազմի հաշվեկշիռը 15,4 % է, իսկ օտարերկրյա և հեռակա ուսուցման ուսանողներինը՝ համապատասխանաբար 2,2 % և 28,7 %:

2013/2014 ուստարում համալսարանը տվել է առկա ուսուցմամբ 3763 շրջանավարտ, որից 2424-ը՝ ֆակալավրի կրթական ծրագրով, 1339-ը՝ մագիստրոսի, իսկ հեռակա ուսուցմամբ՝ 1111 շրջանավարտ, որից 754-ը՝ ֆակալավրի կրթական ծրագրով, 357-ը՝ մագիստրոսի: Առկա ուսուցմամբ ֆակալավրիատը գերազանցության դիպլոմով ավարտել է 397 (16,4 %) շրջանավարտ, մագիստրատուրան՝ 487 (36,4 %): Հեռակա ուսուցմամբ ֆակալավրիատը գերազանցության դիպլոմով ավարտել է 20 (2,7 %) շրջանավարտ, իսկ մագիստրատուրան՝ 8 (2,2 %):

6. Դասախոսական կազմ և ուսումնական բեռնվածություն

2013/2014 ուսումնական տարում համալսարանի հիմնական դասախոսական կազմում եղել է 1288 դասախոս, որից պրոֆեսոր՝ 162 (12,6 %), դոցենտ՝ 491 (38,1 %), ասիստենտ և դասախոս՝ 635 (49,3 %): Այդ կազմի 66,3 %-ը ունի գիտական աստիճան: Իզական սեռի հիմնական դասախոսների հաշվեկշիռը կազմել է 56 %:

Շարունակվել է ԵՊՀ դասախոսական կազմի երիտասարդացման գործընթացը, մասնավորապես՝ բարձր տարիքի դասախոսների ուսումնական բեռնվածության նվազեցման և դասավանդման գործընթացում երիտասարդ դասախոսների ներգրավման միջոցով: Հաշվետու ուստարում դասախոսական կազմը համալրվել է 22 նոր դասախոսներով, որոնցից 3-ը՝ ԵՊՀ ասպիրանտուրայից: Հիմնական դասախոսական կազմում մինչև 35 տարեկան դասախոսների թիվը կազմել է 222, 35-65 տարեկաններինը՝ 817, իսկ 65-ից բարձր՝ 241:

Լրիվ հաստիքային համարժեքով ուսանող/դասախոս հարաբերակցությունը 2013/2014 ուստարում կազմել է 12,7 (նախորդ ուստարում եղել է 12,8):

7. Դասախոսների որակավորման բարձրացում և մասնագետների վերապատրաստում

ԵՊՀ-ն մշտապես ձգտում է գերազանցության և նորարարության ոչ միայն ուսուցման և գիտական հետազոտությունների, այլև հանրությանը մատուցվող ծառայությունների ոլորտում: Նա իր աշխատակիցներին, ուսանողներին և շրջանավարտներին պատրաստում է հարատև ուսումնառության՝ գլոբալացված հասարակության և աշխատաշուկայի պահանջներին համապատասխան: Ռազմավարական այս նպա-

տակների իրականացմանն է միտված նաև լրացուցիչ կրթությունը, որը կայացած իրողություն է համալսարանում:

ԵՊՀ-ում իրականացվում է լրացուցիչ կրթության երկու ծրագիր՝ դասախոսների որակավորման բարձրացում և մասնագիտական վերապատրաստում: Ի դեպ, առաջինը նաև առանցքային դերակատարում ունի համալսարանում հարատև կրթության մշակույթի ձևավորման հարցում:

2011/2012 ուստարվանից ԵՊՀ-ում գործում է պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման բարձրացման հնգամյա նոր ծրագիր, որի կառուցվածքն ու բովանդակությունը ձևավորված են համալսարանի զարգացման ռազմավարական նպատակներին համահունչ: Ծրագրի արդյունավետությունն ակնկալելի էն դարձնում հետևյալ գործոնները.

- Դասախոսի մասնագիտական և ընդհանուր պատրաստությանը ներկայացվող պահանջների հստակ սահմանում,
- Ծրագրում հետազոտական բաղադրիչի կարևորում,
- Ծրագրի վերջնարդյունքների չափելիություն՝ կրեդիտային համակարգի կիրառումով, ընդ որում՝ նախատեսելով կրեդիտների ոչ միայն կուտակում, այլև փոխանցում:

Հաշվետու ուստարում ամփոփվել են ծրագրի եռամյա արդյունքները, որոնց վերլուծությունը վեր է հանել մի շարք դրական իրողություններ.

1. ԵՊՀ դասախոսական հիմնական կազմն ընդգրկված է ծրագրում (1000-ից 900-ը),
2. Նրանց ընդհանուր պատրաստության մակարդակի բարձրացումը ակնհայտ է՝ համակարգչային գրագիտություն, մանկավարժական-հոգեբանական հմտություններ, անգլերենով հաղորդակցվելու ունակություն:
3. Կարևորագույն ձեռքբերում պետք է համարել ծրագրի մոտիվացիոն ներուժը: Դրա վկայությունն է, որ պահանջվող 30 կրեդիտը արդեն վաստակած դասախոսները կամավոր շարունակում են իրենց «կուտակումները»:
4. Ակնհայտորեն խթանվել է դասախոսների հետազոտական գործունեությունը:

Անշուշտ, առկա են նաև մտահոգիչ իրողություններ: Այսպես, եթե մի շարք ֆակուլտետներում (ֆիզիկայի, կենսաբանության, դեղագիտության և քիմիայի, ռադիո-

ֆիզիկայի) բարձր են դասախոսների հետազոտական գործունեության արդյունքները, ապա որոշ ֆակուլտետներում շարունակվում է կրավորական կեցվածքը:

Չնայած ծրագիրը խրախուսում է դասախոսների կրթական և գիտական նախաձեռնողականությունը, սակայն դեռևս ցածր է նրանց ակադեմիական շարժունությունը:

Ծրագրի եռամյա արդյունքներով դասախոսի ձեռք բերած միջին կրեդիտը ԵՊՀ-ում 16,4 է (նորմատիվը՝ 18). նորմատիվից բարձր միջին կրեդիտ ունի ընդամենը 7 ֆակուլտետ՝ ֆիզիկայի, կենսաբանության, ռադիոֆիզիկայի, դեղագիտության և քիմիայի, իրավագիտության, միջազգային հարաբերությունների և հայ բանասիրության: Սա նշանակում է, որ ծրագիրը հաջողությամբ ավարտելու համար (2016 թ.) առաջիկա 2 տարում շատ են լինելու անելիքները:

ԵՊՀ-ում իրականացվող լրացուցիչ կրթության երկրորդ ծրագիրը մասնագետների վերապատրաստումն է: Հաշվետու ուստարում ոլորտում առաջատարը եղել է ՀՀ քաղծառայողների վերապատրաստումը: Այստեղ ևս ունենք և՛ ձեռքբերումներ, և՛ թերացումներ:

Ձեռքբերումները վերաբերում են լրացուցիչ կրթության ծրագրերի հարստացմանը: ԵՊՀ-ում հանրային ծառայողները վերապատրաստվում են շուրջ 20 ծրագրով: Այս առումով պետք է խրախուսել ֆակուլտետների հետ հետբուհական լրացուցիչ կրթության վարչության աշխատանքը: ԵՊՀ նախաձեռնության շնորհիվ ՀՀ քաղծառայության խորհրդի որոշմամբ նրան է վերապահվել մի շարք մասնագիտություններով հանրային ծառայողների վերապատրաստման կրթական ծրագրերի իրականացումը: Համալսարանում է վերապատրաստվել ՀՀ Ազգային անվտանգության խորհրդի, Պաշտպանության նախարարության և պետական կառավարման այլ մարմինների շուրջ 300 աշխատող:

Գնահատելով հանդերձ լրացուցիչ կրթության ոլորտում արված աշխատանքը՝ պետք է նշել, որ առկա են նաև խնդիրներ, որոնք հրատապ լուծում են պահանջում:

1. Լրացուցիչ կրթությունը չունի օրենսդրական բավարար ապահովվածություն: «Կրթության մասին» ՀՀ օրենքում կատարված վերջին փոփոխությունները հարցերը չեն լուծում: Առկախ է մնում է լրացուցիչ կրթության փաստաթղթերի ճանաչումը: Այս պատճառով, օրինակ, համալսարանում մարում է գործնական հոգեբանների վերապատրաստման 20-ամյա ծրագիրը:

2. Հաշվետու ժամանակահատվածում մեր իսկ փորձը ցույց տվեց, որ դեռևս պատրաստ չենք դիմագրավելու արտաքին միջավայրի ազդեցությանը: Գնումների գործընթացում ծագած խնդիրը բացասաբար ազդեց ավանդաբար բարձր վարկանիշ ունեցող կրթական ծրագրերի վրա:
3. Աշխատաշուկա-կրթաշուկա փոխհարաբերությունները նպաստավոր չեն լրացուցիչ կրթության զարգացման համար: Մինչդեռ պետք է խթանել գործատուների ներդրումը այս համակարգում: Դա պետական կարևորության խնդիր է: ԵՊՀ-ն իր դասախոսների որակավորման բարձրացման ծրագրով, որի վրա բավական ծախսումներ է անում, լավագույն գործատուի օրինակ է ծառայում:
4. ԵՊՀ ֆակուլտետները նախապատրաստական մեծ աշխատանք պետք է կատարեն՝ ապահովելու իրենց իսկ շրջանավարտների հարատև ուսումնառությունը:

ԵՊՀ-ն, 2000 թվականից նախաձեռնելով լրացուցիչ կրթության ծրագրերի իրականացումը, ներգրավելով հանրապետության տարբեր բուհերի դասախոսների և ոլորտում փաստորեն իրականացնելով միջբուհական ուսուցում, ակնկալում է, սակայն, խնդրի համակարգային և համապարփակ լուծում: Դա ոչ միայն կխթանի հանրապետությունում լրացուցիչ կրթության ոլորտի զարգացումը, այլև նպատակամետ կդարձնի հարատև ուսումնառությունը՝ ի նպաստ բազմաստիճան բարձրագույն կրթության համակարգի կայացման, երկրում սոցիալական հավասարության ձևավորման և տնտեսության հզորացման:

8. Տեղեկատվական ռեսուրսների զարգացում

2013/2014 ուսումնական տարում Երևանի պետական համալսարանում շարունակվել են աշխատանքները տեղեկատվական արդի տեխնոլոգիաների մշակման, ներդրման և գործարկման ուղղությամբ: Այս առումով ԵՊՀ տեղեկատվական տեխնոլոգիաների կրթական և հետազոտական կենտրոնը (ՏՏԿՀ) իրականացրել է լայնածավալ գործունեություն:

Շարունակվել են աշխատանքները նոր կրթական տեխնոլոգիաների օգտագործման և մշակման, SS բնագավառում մագիստրոսական կրթական ծրագրերի և առանձին դասընթացների իրականացման, գիտահետազոտական աշխատանքների կատարման, համալսարանական կրթության կառավարման և որակի ապահովման, տեղեկատվական համակարգերի մշակման և ներդրման ուղղությամբ:

Գերմանական ակադեմիական փոխանակության գործակալության (DAAD) կողմից 2009 թ. վերջին հաստատված՝ Երևանի պետական համալսարանի և Ռոստոկի համալսարանի համատեղ մագիստրոսական ծրագրերի նախագիծը՝ ԵՊՀ-ում 2011 թ. հոկտեմբերից գործող «Վիզուալ հաշվարկ» մագիստրոսական ծրագիրը, ավարտվել է 2013 թ.: Ծրագրի ավարտից անմիջապես հետո Ռոստոկի համալսարանը, նկատի ունենալով Երևանի պետական համալսարանը որպես գործընկեր, կրկին դիմել է DAAD՝ նոր «Ինֆորմատիկա» մագիստրոսական ծրագրի նախագծով: Նախագիծը հաջողությամբ անցել է փորձաքննության առաջին փուլը, ներկայումս պատրաստվում է մանրամասն նախահաշիվը DAAD ներկայացնելու համար:

«Բաց հասարակության հիմնադրամ» ԲՀԻ N-18293 դրամաշնորհի շրջանակում մշակվել և իրականացվել են առցանց ուսուցման հետևյալ դասընթացները՝ «Էկոլոգիայի և բնության պահպանության հիմունքներ», «Ժամանակակից բնագիտության հիմունքներ», «Բնապահպանություն» (Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի հետ համատեղ), «Բժշկական էկոլոգիա» (Երևանի պետական բժշկական համալսարանի հետ համատեղ): Առաջին երկու դասընթացները ներդրվել են ԵՊՀ փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետում, երրորդը՝ ՀՊՃՀ-ում, չորրորդը նախապատրաստվում է ներդրման ԵՊԲՀ-ում:

Մշակվում են ծրագրային գործիքներ հեռախոսների, թաբլետների և այլ շարժական սարքերի միջոցով դասընթացների հասանելիության համար, ինչպես նաև մշակվել են միջհամալսարանական էլեկտրոնային կուրսերի կիրառման և կրեդիտների փոխանցման մեխանիզմներ:

Շարունակվում է «Համացանցային համալսարանի» ներկառուցվածքի միջազգային չափորոշիչներին հարմարեցման գործընթացի իրականացումը:

Մշակվում է մուլտիմեդիա հարթակի վրա ստեղծված մեդիա էլեկտրոնային գրքերի նոր շարք: Համացանցային համալսարանի մուլտիմեդիա էլեկտրոնային գրքերի շարքը հասանելի է յոթ լեզուներով: Բաժանորդագրությունն անվճար է:

Համացանցային համալսարանի և Հայաստանի շախմատի ակադեմիայի հետ համատեղ վերամշակվել է սկսնակ մակարդակի երկու մասերից կազմված շախմատի ռազմավարության էլեկտրոնային անիմացիոն առցանց դասընթացը՝ ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից մշակված դասագրքերի հիման վրա:

Սփյուռքի լսարանի համար թեմատիկ մասնագիտական կրթությունն ապահովելու նպատակով, ԵՊՀ հայագիտական հետազոտությունների կենտրոնի հետ համատեղ, «Հայոց պատմության հիմնահարցեր» հեռաուսուցման ծրագրի շրջանակներում մշակվել են էլեկտրոնային ուսուցման կրթական գործընթացի կառավարման ունիֆիկացված ներկառուցվածք և տասնմեկ թեմատիկ դասախոսություններից բաղկացած էլեկտրոնային առցանց դասընթաց: Վերջինս ներդրվել է 2014 թ. զարնանը Բեյրութի Հայ կաթողիկե Մեսրոպյան բարձրագույն վարժարանում մեկնարկած «Հայոց պատմության հիմնահարցեր» հեռաուսուցման ծրագրի ընթացքում:

9. Պլանավորում և կառավարում

2013/2014 ուստարում շարունակվել են աշխատանքները ԵՊՀ ռազմավարական պլանի իրականացման մոնիթորինգի ուղղությամբ: Այս նպատակով կատարվել է ԵՊՀ 2010-2014 թթ. զարգացման ռազմավարական ծրագրի իրականացման կատարողականի ամբողջական գնահատում, որի արդյունքում նախատեսված գործողությունների և միջոցառումների կատարողականը հիմնականում գնահատվել է բավարար:

Նախապատրաստական աշխատանքներ են տարվել ԵՊՀ զարգացման նոր ռազմավարական ծրագրի մշակման ուղղությամբ: Մասնավորապես՝ ԵՊՀ ռեկտորի հրամաններով կազմվել և հաստատվել են ԵՊՀ 2016-2020 թթ. զարգացման ռազմավարական ծրագրի մշակման աշխատանքները համակարգող հանձնաժողովը (Հր. N 92Ֆ37, 23.05.2014 թ.) և աշխատանքային խմբերը (Հր. N 94Ֆ1, 27.05.2014 թ.): Մշակվել և ռեկտորի կողմից 2014 թ. հուլիսի 3-ին հաստատվել է ԵՊՀ 2016-2020 թթ. զարգացման ռազմավարական ծրագրի մշակման աշխատանքների ժամանակացույցը:

Լրամշակվել և հաշվետու ուստարում հրատարակվել են «ԵՊՀ գործունեության գնահատման առանցքային ցուցանիշներ (ԳԱՑ)» 3-րդ հրատարակության հայերեն և

անգլերեն տարբերակները՝ 2008-2013 թթ. համար, որոնք ներառում են ԵՊՀ գործունեության հիմնական յոթ ոլորտների ԳԱՑ-երը:

Անշուշտ, անցած ուստարում ԵՊՀ-ն կրթական ոլորտում ունեցել է առաջընթաց: Այդուհանդերձ, եղել են նաև բացթողումներ ու թերացումներ, որոնցից կարելի է առանձնացնել հետևյալը.

- Որակի ներքին մշակույթը դեռևս լիովին չի ձևավորվել, ինչը պայմանավորված է ՈԱ գործընթացներում ֆակուլտետների և ամբիոնների ներգրավվածության դեռևս ցածր մակարդակով:
- Որակի կառավարման պլանավորում-իրագործում-գնահատում-բարելավում դասական շրջափուլային գործընթացը դեռևս ոչ բոլոր գործընթացներում է լիարժեք իրականացվում: Թույլ են գործում հատկապես գնահատման և բարելավման փուլերը:
- Եվրոպական չափորոշիչների և ուղենիշների պահանջներին համահունչ որակի ապահովման (ՈԱ) համակարգը ԵՊՀ-ում դեռևս կայացման փուլում է, ուստի ներկայումս ՈԱ ոչ բոլոր ընթացակարգերն են գործում, մասնավորապես՝ ուսանողների գնահատման, ուսումնառության ռեսուրսների և ուսանողների օժանդակության ծառայությունների, հետազոտական աշխատանքների ոլորտներում:
- Կրթական ծրագրերի ընթացիկ մոնիթորինգի, գնահատման և պարբերական վերանայման գործընթացները դեռևս լիարժեք չեն գործում:
- Ուսանողներին մատուցվող կրթական, խորհրդատվական և այլ օժանդակ ծառայությունների մշտադիտարկման և գնահատման համար դեռևս ներդրված չէ համալիր ինտեգրացված համակարգ:
- ԵՊՀ դասախոսների զգալի մասը դեռևս չունի կրթական վերջնարդյունքների վրա հիմնված երկմակարդակ կրթական ծրագրերի մշակման և իրականացման բավարար փորձ:
- Դասախոսական կազմի գնահատումը հիմնված է միայն ուսանողական հարցումների արդյունքների վրա, դեռևս չեն գործում դասախոսների ինքնա-

գնահատման և անմիջական ղեկավարի ու գործընկեր դասախոսների գնահատումների մեխանիզմները:

- Ուսանողական հարցումների արդյունքները դեռևս լիարժեք չեն օգտագործվում դասախոսների վերապատրաստման ծրագրերն ուղղորդելու և անհատականացնելու համար:
- Բացակայում է սկսնակ դասախոսների մենթորության համակարգը:
- Որակյալ կրթության ապահովումը մեծապես կախված է բարձրորակ դասախոսական կազմի ներգրավումից, ինչն առաջին հերթին ենթադրում է պատշաճ վարձատրություն: Չնայած ԵՊՀ ծախսերի գրեթե 70 %-ը բաժին է ընկնում դասախոսական կազմի վարձատրությանը, այնուամենայնիվ այն դեռևս հնարավոր չէ հասցնել բավարար մակարդակի՝ պայմանավորված ցածր պետական ֆինանսավորմամբ և ուսման ցածր վարձաչափերով:
- ԵՊՀ կարևորագույն արտաքին շահակիցները՝ նախկին շրջանավարտները, հիմնական գործատու կազմակերպությունները և աշխատաշուկայի ներկայացուցիչները հանձնառություն չունեն մասնակցելու կրթական ծրագրերի մշակման, գնահատման և վերանայման գործընթացներին՝ նպաստելու համար ԵՊՀ-աշխատաշուկա համագործակցության կայացմանը:
- Արտաքին շահակիցների ներգրավվածությունը բարելավման կարիք ունի:

ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Երևանի պետական համալսարանը հաշվետու ուսումնական տարում արդյունավետ գործունեություն է ծավալել գիտահետազոտական աշխատանքների բնագավառում: Բազմաթիվ համալսարանականներ ընդգրկվել են գիտական նոր ծրագրերում, մրցույթով շահել տարբեր դրամաշնորհներ:

2013/2014 ուստարում Երևանի պետական համալսարանում գիտական աշխատանքներն ընթացել են երեք հիմնական ուղղություններով՝ պետական բազային («Գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքի պահպանում ու զարգացում»), թեմատիկ և դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում: ԵՊՀ նոր ձեռքբերումներից էր բազային ծրագրերի ոլորտում 2 նոր հետազոտական լաբորատորիայի ստեղծումը:

Հաշվետու ուստարում ԵՊՀ գիտական ստորաբաժանումներում կատարված աշխատանքների գիտական արդյունքներն ու ձեռքբերումները ներկայացված են 1953 հոդվածներում, 86 մենագրություններում: Ավելի քան 485 թեզիսներ ներկայացվել են միջազգային և տեղական տարբեր գիտաժողովներում:

Աշխատանքները շարունակվել են նաև 2005 թվականից գործող պետական բազային ֆինանսավորմամբ գիտահետազոտական ստորաբաժանումներում, այդ թվում՝ Հայագիտական հետազոտությունների ինստիտուտում, 10 գիտահետազոտական կենտրոններում և 26 գիտահետազոտական լաբորատորիաներում:

2013/2014 ուստարում դրամաշնորհային (թեմատիկ, հայ-բելառուսական, հայ-ֆրանսիական, հայ-գերմանական և ասպիրանտական) ծրագրերի հաշվետվությունները տրվել են գիտական փորձաքննության, որի շրջանակներում գնահատվել են եզրափակիչ հաշվետվության գիտական և գիտատեխնիկական նորույթը և արդիականությունը, գիտության տվյալ բնագավառում հետազոտական խմբի ձեռքբերումները և նրանց մասնագիտական որակավորման համապատասխանությունը:

Երևանի պետական համալսարանում 2013 թ. հոկտեմբերից գործում են նոր՝ 6 (Երիտասարդ գիտաշխատողների հետազոտությունների աջակցության ծրագիր-2013), 2014 թ. փետրվարից՝ 3 (Հայ-Ռուսական հումանիտար), մարտից՝ 1 (Հայ-Ֆրանսիական) ապրիլից՝ 8 (Ասպիրանտների և երիտասարդ հայցորդների հետազոտու-

թյունների աջակցության ծրագիր - 2013), հուլիսից՝ 3 (Հայ-Բելառուսական) դրամաշնորհային ծրագրեր: Ընդհանուր առմամբ, ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի կողմից հայտարարված դրամաշնորհային ծրագրերի մրցութային շեմը հաղթահարած ծրագրերի 24 %-ից ավելին բաժին է ընկնում Երևանի պետական համալսարանին, իսկ բուհերի կողմից մրցութային շեմը հաղթահարած ծրագրերում այդ մասնաբաժինը կազմում է մոտ 44 %: Այսօր ԵՊՀ-ում դրամաշնորհային ծրագրերում ընդգրկված գիտաշխատողների թիվը 523 է:

Անցած ուսումնական տարում կազմակերպվել են մրցույթներ «Գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման ենթակառուցվածքի պահպանման և զարգացման ծրագրերի» թափուր պաշտոնների համար: Մրցութային գործընթացը շարունակվում է:

Հաշվետու ժամանակաշրջանում ԵՊՀ գիտակազմակերպական բաժնի անմիջական աջակցությամբ ձևակերպվել և պետական գրանցում են ստացել 4 արտոնագիր, որոնցից 2-ը՝ քիմիայի բնագավառում, 1-ը՝ ռադիոֆիզիկայի, 1-ը՝ երկրաբանության: Բաժնի աշխատակիցների կողմից պարբերաբար ուսումնասիրվում է արտոնագրային գրականությունը՝ «Մտավոր սեփականության գործակալության» տրամադրած գյուտերի մեթոդական նկարագրությունները և օրենսդրական ակտերը: Աշխատանքներ են տարվել «Եվրասիական արտոնագրային տեղեկատվական բազայից» ԵՊՀ գիտահետազոտական ստորաբաժանումների ազատ օգտվելու ուղղությամբ:

Անցած ուսումնական տարին հարուստ էր նաև տարբեր գիտական միջոցառումներով: Դրանցից պետք է առանձնացնել տարբեր բնագավառների վերաբերող մի շարք գիտաժողովներ, մասնավորապես՝ «Մաթեմատիկան Հայաստանում: Ձեռքբերումները և հեռանկարները» II գիտաժողովը՝ նվիրված ՀՀ ԳԱԱ հիմնադրման 70-ամյակին (օգոստոսի 31 - սեպտեմբերի 7, 2013 թ., ԵՊՀ, ՀՀ ԳԱԱ մաթեմատիկայի ինստիտուտ), «Գրավիտացիայի տեսություն և ռելյատիվիստական աստղաֆիզիկա» խորագրով գիտաժողովը՝ նվիրված ակադեմիկոս Գուրգեն Սահակյանի ծննդյան 100-ամյակին (ՀՀ ԿԳՆ, ԵՊՀ, սեպտեմբերի 22-26, 2013 թ. Երևան), «Լեռնային շրջանների գեոմորֆոլոգիայի և երկրաբանության կիրառական հիմնախնդիրներ» գիտաժողովը (ՀՀ ԿԳՆ, ԵՊՀ, հոկտեմբերի 1-3, 2013 թ.), «Իրավագիտության արդի հիմնախնդիրները» վերտառությամբ գիտաժողովը՝ նվիրված ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի 80-ամյա հոբելյանին (ՀՀ ԿԳՆ, ԵՊՀ, նոյեմբեր, 2013 թ.), «Եվրոպա և Կովկաս, միջտա-

րածաշրջանային կապերն ու ինքնության հարցը» (ՀՀ ԿԳՆ, ԵՊՀ, 7-8 մայիսի, 2014 թ.) «Օտարերկրացիների ուսուցումը Հայաստանում. հիմնախնդիրներ և լուծումներ» (ՀՀ ԿԳՆ, ԵՊՀ, 14-18 մայիսի, 2014 թ.), «Քիմիան այսօր` 2014» (ՀՀ ԿԳՆ, ԵՊՀ, 7-11 հունիսի, 2014 թ.) գիտաժողովները:

Գիտակազմակերպական բաժնի կողմից շարունակական աշխատանքներ են տարվել նաև ԵՊՀ ողջ գիտական և վերջինիս օժանդակ աշխատակազմի կադրային գործերի վարման թվայնացման ուղղությամբ:

Հաշվետու ժամանակահատվածում գիտակրթական ակտիվ գործունեություն է ծավալել ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը (ՀՀԻ): Ինստիտուտը ԵՊՀ պատմության ֆակուլտետի սփյուռքագիտության ամբիոնի հետ համատեղ 2014 թ. սեպտեմբերից իրականացնում է «Հայագիտություն» մագիստրոսական ծրագիրը, որում ներգրավված ուսանողների ուսման վարձը տրվում է Համագգային հայ կրթական և մշակութային միության կողմից: Ծրագրի նպատակն է Սփյուռքի հայկական կրթօջախների համար պատրաստել հայոց լեզի և գրականության, հայոց պատմության ուսուցիչներ: Զուգահեռ շարունակում է հաջողությամբ իրականացվել «Ցեղասպանագիտություն» մագիստրոսական ծրագիրը, որում արդեն սովորում են 14 ուսանողներ: Կրթական դաշտում հետզհետե տարածում գտնող հեռաուսուցման համակարգերը ևս ինստիտուտի ուշադրության կենտրոնում են: Հաշվետու ժամանակահատվածում հաջողությամբ մեկնարկեց ՀՀԻ «Հայոց պատմության հիմնահարցեր» հեռաուսուցման եռամսյա ծրագիրը: Որպես հիմնական լսարան դիտարկելով Սփյուռքը` տարված աշխատանքի արդյունքում հնարավոր եղավ վճարովի հեռաուսուցում տրամադրել Լիբանանի 18 հայ ուսանողների համար: Ներկայումս աշխատանքներ են իրականացվում ուսանողների թիվն ու աշխարհագրությունը ընդլայնելու, ինչպես նաև նոր ծրագրեր մշակելու և գոյություն ունեցող ծրագիրը հայերենից մի շարք օտար լեզուների վերածելու ուղղությամբ:

Հրատարակվել են 6 մենագրություն, 1 դասագիրք, 66 գիտական հոդված, 17 գեկուցումների թեզիս: Զուգահեռ արդեն հրատարակության են ներկայացվել շուրջ երկու տասնյակ մենագրություններ: Ինստիտուտի գիտաշխատողները մասնակցել են հանրապետական և միջազգային` հայագիտական ուղղվածության բազմաթիվ գիտաժողովների, կլոր սեղանների:

Հայագիտության և մասնավորապես հայ պատմագիտության ասպարեզում խոշոր ներդրում է նշանավոր պատմաբան, ակադեմիկոս Հրաչիկ Միմոնյանի «Ազատագրական պայքարի ուղիներում» հինգհատորյա ծավալուն ուսումնասիրությունը, որը հաշվետու ժամանակաշրջանում արժանացել է Հայաստանի Հանրապետության պետական բարձրագույն մրցանակի:

2013/2014 ուստարում շարունակվել են հետազոտություններ իրականացվել Հայոց ցեղասպանության՝ մասնավորապես օտարազգի ականատեսների քիչ ծանոթ հուշագրությունների, օտարալեզու թեմատիկ քարտեզների պատրաստման, համացանցում հայագիտության ներկայացվածության հիմնախնդիրների, հայ-վրացական հարաբերությունների որոշ պատմագիտական հարցերի, Արցախյան հիմնահարցի առանձին պատմական ժամանակաշրջանների, հայ-օսմանական առնչությունների, հնագիտական առանձին պեղումների արդյունքում ստացված նյութերի և հայ-քրդական առնչությունների ուղղությամբ: Ինստիտուտի հայագիտական ութ թեմատիկ կայքերը հաշվետու ժամանակահատվածում համալրվել են **307** գրքերով, **232** հոդվածներով, **567** հանրագիտարանային նյութերով, **42** քարտեզներով, **1101** նկարներով: Ինստիտուտի գործունեության հիմնական ուղղություններից նախանշվում է արտերկրի առավել հոծ հայկական համայնքներում հայագիտական հետազոտական, կրթական ծրագրերի իրականացումը: Ինստիտուտի ջանքերով շարունակվում են հրատարակվել առանձին օտարերկրյա հայագետների ուսումնասիրություններ: Փորձ է կատարվում նրանց կապել տեղի հայագիտական ուժերի հետ: Նմանօրինակ աշխատանք արդեն տարվում է Ռուսաստանի Դաշնության «Նոր Նախիջևան» հայկական համայնքի, Լիբանանի հայկական կրթամշակութային մեկ տասնյակից ավելի կառույցների հետ, զուգահեռ նոր կապեր են հաստատվել Մոչիի և Ռյազանի հայկական համայնքների ու նրանց հետ գործակցող տեղի ռուսական բուհերի հետ՝ հայագիտական դաշտում համագործակցելու ուղղությամբ:

ԵՊՀ տեղեկատվական տեխնոլոգիաների կրթական և հետազոտական կենտրոնում շարունակվել են թեստային լուծումների և դրանց վրա հիմնված տեղեկատվական տեխնոլոգիաների մշակման աշխատանքները նանոչափական բյուրեղի-վրահամակարգերի (ԲՎՀ-ների) համար: Հիմնական արդյունքները, որոնք ստացվել են ակադեմիկոս Ս. Շուքուրյանի ղեկավարած հետազոտողների խմբի կողմից 2013-2014 թվականների ընթացքում, նանոչափական բյուրեղների նախագծման և արտադրման

Ժամանակակից տեխնոլոգիաներին համահունչ զարգացում են տվել այդ խմբի կողմից առաջարկած հիերարխիկ թեստավորման, վերականգնման և ախտորոշման ամբողջական լուծմանը, ինչպես ԲվՀ-ների, այնպես էլ ԲվՀ-ների մեջ ներդրված մտավոր սեփականություն պարունակող բլոկների համար: Ս. Շուքուրյանը և նրա գործընկեր Ե. Զորյանը (Կանադա) համատեղ արժանացել են ՀՀ Պետական մրցանակի «Թեստային լուծումներ նանոչափական բյուրեղի-վրա-համակարգերի համար. ալգորիթմներ, մեթոդներ և թեստային ներկառուցվածք» աշխատանքի համար: 2014 թ. խմբի աշխատակիցները ստացել են մեկ ԱՄՆ արտոնագիր, ևս երկու ԱՄՆ արտոնագրի դիմումներ տպագրության փուլից տեղափոխվել են արտոնագրի վերջնական շնորհման փուլ:

Ռուսաստանի Գիտությունների ակադեմիայի համակարգային ծրագրավորման ինստիտուտի և ԵՊՀ-ի համատեղ համակարգային ծրագրավորման լաբորատորիայում կատարվել են աշխատանքներ Webkit դինամիկ կոմպիլյատորի համար ռեգիստրների գլոբալ բաշխման, ինչպես նաև ռեգիստրների պարունակությունը հիշողության մեջ գրելու արդյունավետության գնահատականների մշակման ուղղություններով:

ԵՊՀ կարևոր խնդիրներից մեկը երիտասարդ գիտական կադրային ներուժի կայացման գործին նպաստելն է: 2010 թվականից ԵՊՀ ասպիրանտուրան անցել է կրեդիտային համակարգով ուսուցման: Ուսումն ասպիրանտուրայում իրականացվում է առկա և հեռակա ձևերով՝ 78 մասնագիտությամբ: 2014 թ. սեպտեմբերի դրությամբ ԵՊՀ ասպիրանտուրայում սովորել է 102 ասպիրանտ՝ առկա ուսուցմամբ և 313-ը՝ հեռակա ուսուցմամբ: 2013 թ-ից հայցորդության ինստիտուտը նույնպես անցել է կրեդիտային համակարգի: 2013-2014 թթ. ԵՊՀ հայցորդ է ձևակերպվել 31 հոգի: 2014 թ. սեպտեմբերի դրությամբ հայցորդների թիվը եղել է 282:

Հաշվետու ժամանակաշրջանում ԵՊՀ ասպիրանտուրան առկա ուսուցմամբ ավարտել է 32 հոգի, իսկ հեռակա ուսուցմամբ՝ 38-ը, նրանցից ատենախոսություն պաշտպանել են համապատասխանաբար՝ 25-ը և 10-ը:

Չնայած ԵՊՀ-ն երկրի առաջատար գիտական հաստատություններից է, այնուհանդերձ, համալսարանի գործունեության գիտահետազոտական ոլորտում ևս առկա են բացթողումներ և թերություններ, որոնցից հարկ է նշել հետևյալը.

- Ժամանակակից փորձարարական բազայի/սարքավորումների պակասը բնագիտական հետազոտություններ կատարող մի շարք լաբորատորիաներում:
- Հետազոտական ծրագրերի կատարման մոնիթորինգի և արդյունքների գնահատման ներքին ընթացակարգերի և չափանիշների ոչ լիարժեքությունը:
- Քանի որ ԵՊՀ ֆինանսական աղբյուրները բազմազանեցման կարիք ունեն, ուստի պետք է արձանագրել, որ գիտական մշակումները և դրանց արդյունքի առևտրայնացումը դեռևս լուրջ ֆինանսական մուտքեր չեն ապահովում, ցածր է պետական ֆինանսավորման մակարդակը:
- Զարգացման ծրագրերը թերի են ֆինանսավորվում, քանի որ ֆինանսական միջոցների գերակշիռ մասն ուղղվում է աշխատավարձի ֆոնդ և ուսումնական գործընթացի ռեսուրսային ապահովվածությանը:
- Հետազոտական գործունեությունը սահմանափակ է՝ հաշվի առնելով և՛ արդյունքները, և՛ հետազոտության մեջ ներգրավված ուսանողների և դասախոսների թիվը:
- Դեռևս չկա այն ընկալումը, որ հետազոտությունը կրթության մեջ ուսումնառության հիմնական մեթոդը պետք է լինի: Այդ համատեքստում ուսանողներին հետազոտական գործունեության նախապատրաստելը պետք է բոլոր կրթական ծրագրերի բաղկացուցիչ մասը կազմի:

ՄԱՐԳԻՍ ԵՎ ՄԱՐԻ ԻԶՄԻՐԼՅԱՆՆԵՐԻ ԱՆՎԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

Գիտակրթական գործընթացների կայացման կարևորագույն նախապայմաններից մեկը համապատասխան գրական տեղեկատվությամբ և տեղեկությամբ կրիչներով ապահովվածությունն է: Այս գործառույթը հիմնականում կատարում է գրադարանը: Հաշվետու ուստարում ԵՊՀ գրադարանն աշխատել է հնարավորինս բավարարել համալսարանական ընթերցողի պահանջները՝ կատարելով գրադարանային գործընթացների արդիականացմանն ուղղված աշխատանքներ:

Գրադարանի 6 բաժինների փոխկապակցված գործունեությունը ընթերցողներին ապահովել է ինչպես ծրագրային, գիտական, գեղարվեստական գրականությամբ, այնպես էլ էլեկտրոնային տեղեկատվությամբ:

Համալսարանի գրադարանն ունի գրքային ունեցվածքի հարուստ պաշար (շուրջ 2.122.000 միավոր), սակայն գիտության և, հատկապես, նորագույն տեխնոլոգիաների սրընթաց զարգացման արդի շրջանում, հրատարակվող նյութերի և տեղեկույթի այլ կրիչների համալրման պահանջարկն է՛լ ավելի է մեծանում:

Հաշվետու շրջանում գրադարանային ֆոնդերը համալրվել են 1525 անուն 9126 միավոր տպագիր նյութերով, որոնք ներառում են գիտական (7016 միավոր), ուսումնական (483 անուն 1702 միավոր) և գեղարվեստական (468 միավոր) գրականություն: Դրանց թվում առանձնակի ուշադրության է արժանի հեղինակավոր հրատարակչություններում տպագրված՝ ցեղասպանությանը նվիրված շուրջ 100 միավոր օտարալեզու (անգլերեն, գերմաներեն, ֆրանսերեն և այլն) գրականությունը, որը համալսարանական գրատան համար մեծ հարստություն է՝ հատկապես Հայոց ցեղասպանության 100-ամյակի նախաշեմին:

Գրադարանի համալրման աղբյուրները հիմնականում նույնն են եղել, ինչ՝ անցած տարիներին՝ պետական հատկացումներ, նվիրատվություններ, գրքափոխանակություն, ԵՊՀ հրատարակչությունների պարտադիր օրինակներ, կորցրած գրքերի փոխարեն արված փոխհատուցումներ, արտերկրի հայտնի գրադարանների (Բոննի, Ռոստոկի, Կալիֆոռնիայի, ԱՄՆ Կոնգրեսի), ՄԱԿ-ի, ԵԱՀԿ-ի, Միջազգային դրամական ֆոնդի, ՀՀ-ում Գերմանիայի, Մեծ Բրիտանիայի դեսպանատների օժանդակություններ:

Հաշվետու ուստարում կազմավորված ԵՊՀ գրադարանային խորհուրդը, որի կազմում ընդգրկված են վարչական և ուսումնական տարբեր կառույցների ներկայացուցիչներ, փորձում է ավելի նպատակային դարձնել գրականության համալրումը, որը հատկապես խնդրահարույց է ուսումնական գրականության առումով: Քանի որ հանձնարարելի գրականությունը ծրագրային փոփոխությունների պահանջով պարբերաբար փոփոխվում է, ժամանակ առ ժամանակ այդ գրքերը դառնում են քիչ օգտագործելի: Ուստի նպատակահարմար է ուսումնական գրականության թվայնացման ծավալների մեծացումը, որը ուսանողներին հնարավորություն կտա՝ համալսարանական համացանցում օգտվելու անհրաժեշտ նյութերից:

Համալրված գրականությունը զուգահեռաբար մշակվել է և՛ ավանդական (թղթային քարտազրման), և՛ էլեկտրոնային տարբերակներով, որը ընթերցողական տարբեր շերտերին հնարավորություն է տալիս փնտրումն իրականացնել ըստ իրենց ունեցած հմտությունների:

Հաշվետու ժամանակահատվածում գրապահոցի և աբոնեմենտի համատեղ գործունեությամբ 1.900 պահանջագրի դիմաց կատարվել է 830 սպասարկում: Զուգահեռաբար տարվել են նաև ֆոնդերի վերադասավորման աշխատանքներ՝ պայմանավորված ինչպես ընթերցողների վերադարձրած, այնպես էլ մուտքագրման և թվայնացման նպատակով համակարգչային բաժին ուղարկված-վերընդունված գրականության տեղաշարժով: Դասագրքային առձեռն ֆոնդի 90.000 միավորից 49.442-ը հաշվետու շրջանում սպասարկվել է: Զգալիորեն բարձրացել են նաև կազմարարական աշխատանքի ցուցանիշները. վերանորոգվել է ավելի քան 15.500 գիրք:

Գրադարանի տեղեկատվական գործառնություններն իրականանում են սպասարկման գործընթացների օգնությամբ, որոնց արդյունավետությունն ապահովվում է հատկապես ընթերցասրահների միջոցով: ԵՊՀ գրադարանում գործող 5 ընթերցասրահներում առկա առձեռն գրականության պաշարները հաշվետու շրջանում ծառայել են հատկապես գրադարանից օգտվողների այն շերտերին, որոնք կա՛մ նախընտրել են ընթերցել գրադարանային հարմարավետ պայմաններում, կա՛մ չեն կարողացել գրապահոցից օգտվել՝ գրականության պակասուրդի պատճառով: Երկու դեպքում էլ ընթերցասրահների միտումն է եղել ֆոնդերն ապահովել ուսումնական ծրագրերին համապատասխան գրականությամբ, որից 115.031 միավորը սպասարկվել է 201.837 հաճախումների դիմաց:

Զգալի աշխատանք է կատարվել նաև առանձնացված ֆոնդերում: Հնաստիպ, հազվագյուտ և արվեստի գրականության բաժնում վերահաշվառվել և մատյաններում վերագրանցվել է 3.000 միավոր ռուսերեն հնաստիպ, մուտքագրվել 815 և էլեկտրոնային քարտագրման է ենթարկվել 1.700 միավոր գիրք: Այստեղ կատարվել են նաև տեղեկատվական-մատենագիտական և հրատարակչական աշխատանքներ: Լույս է տեսել «Երևանի պետական համալսարանում պաշտպանված աստենախոսությունների մատենագիտության (2010-1012)» 10-րդ պրակը:

Համակարգչային ծառայությունների և ավտոմատացման բաժնի գործունեությունն ուղղված է եղել գրադարանային գործընթացների արդիականացմանը՝ դրանց քիչ թե շատ համապատասխանեցմանը զարգացած երկրների առաջադրած պահանջներին: Հաշվետու ուստարում բաժնի աշխատանքները ներառել են հետևյալ աշխատափուլերը. էլեկտրոնային մուտքագրում (9.314 գիրք), մատենագիտական գրառում (3.090), գիտական էլեկտրոնային հոդվածների պատվիրում՝ Ֆրեզնոյի համալսարանի շտեմարաններից (1.800), գերմանական «SUBITO» ծառայությունից (183), գրքի թվայնացում (1.265) և կայքէջում տեղադրում, առկա և հեռակա ուսուցման ուսանողների ընթերցողական տոմսերի պատրաստում (շուրջ 6.000), համալսարանականների տվյալների մուտքագրում ԵՊՀ էլեկտրոնային բազայում, գրադարանի կայքէջի շարունակաբար հարստացում գրադարանի գործունեությունն արտացոլող տեղեկույթով, գրադարանային նոր՝ «KOHA» ծրագրի ներդրման աշխատափուլային գործընթացներ: Շարունակվել է ռուսական էլեկտրոնային ամսագրերի բաժանորդագրությունը, որի արդյունքում ավելի քան 200 ռուսական բարձրորակ ամսագրերի ամբողջական տեքստեր հասանելի են դարձել ԵՊՀ-ի և Իջևանի մասնաճյուղի համացանցերում:

Հաշվետու ուստարում, ի հաշիվ գրադարանից ավանդական եղանակով օգտվող ընթերցողների, գրանցվել է էլեկտրոնային պաշարներից օգտվողների զգալի աճ, որը պետք է համարել դրական տեղաշարժ, քանի որ դա արդյունքն է առավել ժամանակակից այնպիսի մեթոդների ներդրման ու կիրառման, ինչպիսիք են գրադարանային գործընթացների ավտոմատացումն ու գրականության թվայնացումը:

Գրադարանում կազմակերպվել են նաև գրքի ցուցահանդեսներ, շնորհանդեսներ:

Մասնագիտական հմտությունների ձեռքբերման, որակավորման բարձրացման և փորձի փոխանակման նպատակով գրադարանային աշխատողները մասնակցել են

հանրապետական սեմինարների, այցելել Հայաստանի ազգային և ՀՀ-ում ամերիկյան դեսպանատան գրադարաններ:

Այնուհանդերձ, հարկ է նշել, որ դեռևս թույլ է գրադարանի և ուսումնական ու գիտական ստորաբաժանումների կապն ու համագործակցությունը, ուսանողները և գիտամանկավարժական կազմը քիչ են ներգրավված տեղեկատվական ռեսուրսների պլանավորման և ձեռքբերման աշխատանքներում:

ՀՐԱՏԱՐԱԿԶԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

ԵՊՀ հրատարակչություն

ՀՀ-ում գործող ամենահին հրատարակչությունը՝ ԵՊՀ հրատարակչությունը, հաշվետու ժամանակաշրջանում հրատարակել է 87 անուն գիրք՝ 11.670 տպաքանակով, 1110.075 տպագրական մամուլ ընդհանուր ծավալով:

Հրատարակվել են բազմաթիվ դասագրքեր, ուսումնամեթոդական ձեռնարկներ, բառարաններ և այլ ակադեմիական գրականություն:

Հայոց մեծ եղեռնի 100-ամյա տարելիցին ընդառաջ ԵՊՀ ֆինանսավորմամբ լույս է տեսել Սեդա Գասպարյանի «Հայոց ցեղասպանությունը. լեզվաճանաչողական մեկնակետ» աշխատությունը, որը Հայոց ցեղասպանությունը վերլուծում է լեզվաճանաչողական տեսանկյունից և հարցի վերաբերյալ տարբեր կարծիքների տեքստային մեխանիզմներն ուսումնասիրելու հնարավորություն է տալիս:

Հրատարակվել է Ջուլիա Եսայանի «Հայոց տեղանունները. թուրքական այլափոխումներ» երկլեզվյան (հայերեն, անգլերեն) մենագրությունը, որտեղ առաջին անգամ փորձ է արված ներկայացնելու հայկական տեղանունների անվանափոխության մեթոդները հատկապես թուրքական տիրապետության շրջանում՝ տալով թուրքականացված տեղանունների ստուգաբանությունները:

Կարևոր է նաև Էդիկ Մինասյանի «Հայաստանի երրորդ Հանրապետության պատմություն. 1991-2011 թթ.» մենագրությունը: Առաջին անգամ փորձ է արվել գիտականորեն ներկայացնել հայկական անկախ երկու հանրապետությունների՝ Հայաստանի երրորդ Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հասարակական-քաղաքական ու սոցիալ-տնտեսական ոլորտի ձեռքբերումները, բացթողումներն ու թերությունները: Հրատարակվել է Հակոբ Զորյանի «Պատմագիտական ուսումնասիրություններ» ժողովածուն (կազմող՝ Պ. Հովհաննիսյան), որը ընդգրկում է ԵՊՀ հիմնադիր դասախոսներից մեկի՝ Հայոց պատմության ամբիոնի վարիչ, պատմության ֆակուլտետի դեկան, պրոֆեսոր Հ. Զորյանի (1894-1942)՝ միջնադարյան Հայաստանի սոցիալ-տնտեսական հարաբերություններին ու հայ պատմագրությանը նվիրված ուսումնասիրությունները: Նման ընդգրկումով ու բովանդակությամբ Հակոբ Զորյանն առաջին անգամ է ներկայացվում:

Սկսվել և ներկայումս ընթացքի մեջ են իսպանացի հանրաճանաչ գրող Գոնսալո Գուարչի «Սպիտակ լեռը» վեպի (թարգմանիչ՝ Մերի Սուքիասյան) որը հեղինակի՝ Հայոց ցեղասպանությանը նվիրված եռագրության վերջին գիրքն է, հրատարակման աշխատանքները: Գրքում նկարագրվում են Մեծ եղեռնի սահմուկեցուցիչ դեպքերը, թուրքերի կողմից կատարված աննկարագրելի ոճրագործությունները: Ներկայացվում են Ցեղասպանության ընթացքում հայերի հոսքը դեպի Լիբանան և նրանց ներդրումը Լիբանանի Հանրապետության կայացման գործում:

ԵՊՀ-ի կողմից ֆինանսավորված գրքերից հիշատակման է արժանի նաև Արման Կիրակոսյանի «ԱՄՆ-ի արտաքին քաղաքականությունը և արևմտահայությունը (19-րդ դար – 1914 թ.)» աշխատանքը:

Պետք է առանձնացնել նաև Արման Եղիազարյանի «Աշոտ Ա Բագրատունի. թագավոր Հայոց» մենագրությունը՝ նվիրված Բագրատունյաց թագավորության հիմնադրմանը և Հայոց թագավոր Աշոտ Ա Բագրատունու գահակալությանը, Նորայր Պողոսյանի «Նոր բառեր վաղաշխարհաբարյան աղբյուրներում» և Ռուբեն Սաքապետյանի «Բառգրքույկ» բառարանները, Վոլոդյա Հովսեփյանի և Մարգարիտա Եղիազարյանի «Ազգային տնտեսություն» ուսումնական ձեռնարկը, Գեղամ Գևորգյանի և այլ համահեղինակների «Մաթեմատիկական անալիզի խնդրագիրք» ուսումնական ձեռնարկը՝ 2 մասով, Գայանե Թոքմաջյանի և Լուսինե Կարապետյանի «Միջազգային կատալիզոր որոշ օրգանական ռեակցիաներում», Կառլեն Գրիգորյանի և Ծովինար Ադամյանի «Մարդու էկոլոգիա և էկոլոգիական ֆիզիոլոգիա», Վիգեն Բարխուդարյանի «Մոլեկուլային ֆիզիկա» ուսումնական ձեռնարկները, Արմեն Թոչունյանի և այլ համահեղինակների «Մանրէաբանության լաբորատոր աշխատանքներ» գիրքը և այլ աշխատություններ:

Մեծ եղեռնի 100-ամյա տարելիցին ընդառաջ գրքեր են լույս տեսել նաև պետական պատվերով: Դրանք են՝ Ալեքսեյ Ջիվելեգովի «Թուրքիան և Հայկական հարցը» (կազմող՝ Էդիկ Մինասյան) հոդվածների ժողովածուն, Լեոյի «Հայկական հարցը վավերագրերում» (վերատպություն, կազմող՝ Էդիկ Մինասյան): Իսկ Հասմիկ Ստեփանյանի «Հայերի ներդրումը Օսմանյան կայսրությունում» գիրքը (թուրքերենով), որն օսմանյան կայսրության դիվանագիտության, պալատական, վարչական, դատական, գիտության, ճարտարապետության, բժշկության և այլ ասպարեզներում արևմտահայության ունեցած դերի մասին է, լույս է տեսել «Գալուստ Գյուլբենկյան» հիմնար-

կության հովանավորությամբ: Նախկին հրատարակությունը (հայերեն) արժանացել էր ՀՀ Նախագահի մրցանակի:

«Գալուստ Գյուլբենկյան» հիմնարկության հովանավորությամբ լույս են տեսել ևս մի քանի սովորաձավալ գրքեր, որոնք խոշոր ներդրում են հայագիտության ասպարեզում: Դրանցից է Գարեգին Հովսեփյանի «Երկեր» ժողովածուն, որն ականավոր հայագետի, Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսի (1943-1952 թթ.) մեծարժեք ստեղծագործությունների ընտրանին է: Այն ընթերցողին է ներկայացնում Գարեգին Հովսեփյանի «Նյութեր և ուսումնասիրություններ հայ արվեստի և մշակույթի պատմության» Ա, Բ, Գ պրակները և «Հավուց թառի ամենափրկիչը և նույնանուն հուշարձաններ հայ արվեստի մեջ» պատմագիտական ուսումնասիրությունը: Հայագիտական շարքից են նաև Վարդ Բոյանի «Ջավախքի հայոց ազգագրությունը և ժողովրդական բանարվեստը» ժողովածուն, որը ներկայացնում է Ջավախք աշխարհի ժողովրդական բանարվեստի գոհարները, ինչպես նաև Անահիտ Բեքարյանի «Բայրոնը և հայ իրականությունը» գիրքը, որտեղ ուսումնասիրված են հատկապես Բայրոնի և Մխիթարյան միաբանության կապերը, բայրոնիզմի դրսևորման նշանակալից երևույթները հայ գրականության մեջ: Գիրքը երկլեզվյան է՝ հայերեն և անգլերեն:

ԵՊՀ հրատարակչությունը 2014 թ. մայիսի 16-ից հունիսի 10-ը մայր բուհի 95-ամյակի միջոցառումների շրջանակում կազմակերպել է «Գրքի տոնավաճառ 2014» ցուցահանդեսը, որի ընթացքում տեղի են ունեցել ավելի քան 200 անուն գրքերի ցուցադրություն-նվիրատվություններ ՀՀ մարզային, ՊՆ ռազմաուսումնական բուհերի, Արցախի պետական համալսարանի գրադարաններին, Մայր Աթոռի Մատենադարանին, Երևանի Ավ. Իսահակյանի անվան քաղաքային գրադարանին: Նվիրատվություններն ուղեկցվել են մշակութային միջոցառումներով:

2014 թվականի հունիսի 10-ին ԵՊՀ կենտրոնական մասնաշենքի բակում տեղի է ունեցել գրքի տոնավաճառ, որի ընթացքում ԵՊՀ հրատարակչության հետ իրենց ուսումնագիտական գրականությունն են ներկայացրել նաև Հայաստանի առաջատար հրատարակչությունները՝ «Անտարես», «Էդիթ Պրինտ», «ՄանՄար», «Զանգակ-97», «Պրինտինֆո»: Վերոնշյալ ծրագիրն աննախադեպ միջոցառում էր ԵՊՀ հրատարակչության բազմամյա պատմության մեջ:

Իսկ այս ուստարում՝ 2014 թ. հոկտեմբերի 8-12-ը, ԵՊՀ հրատարակչությունը մասնակցել է Ֆրանկֆուրտի գրքի միջազգային ցուցահանդեսին, որին ներկայացրել է

ԵՊՀ հրատարակչության ընտրված գրքերի կատալոգը (անգլերենով), որը պարունակում է ավելի քան 100 անուն գիրք՝ համառոտ բնութագրերով: ԵՊՀ հրատարակած գրքերը ցուցադրվել են նաև վերջերս՝ նոյեմբերի 8-16-ը կայացած Ստամբուլի գրքի միջազգային ցուցահանդեսում:

ԵՊՀ հրատարակչությունում ձեռնարկվել և ընթացք է տրվել ինտերնետային կայքի ստեղծման, հրատարակված գրքերի թվանշայնացման, ինչպես նաև Android, iOS օպերացիոն համակարգերի և Kindle-ի համար նախատեսված էլեկտրոնային գրքերի ստեղծման աշխատանքներին:

Համալսարանի հրատարակչական գործունեության ոլորտում առկա են հետևյալ բացթողումները.

- «Գալուստ Գյուլբենկյան» հիմնարկության կողմից վարվող գրահրատարակչական քաղաքականության փոփոխության արդյունքում նվազել է հայագիտական հրատարակչությունների թիվը: Այս բացը պետք է լրացնել ֆինանսական աղբյուրների բազմազանեցման և այլ աշխատանքների միջոցով:
- Էլեկտրոնային հրատարակումների ոլորտում համալսարանականների գործունեությունը ակտիվ չէ, չկա այս խնդիրների լուծման ուղղությամբ համակարգված մոտեցում:
- Գրքերի տպագրման և հրատարակման գործընթացում եղել են որոշ կազմակերպական խնդիրներ՝ կապված գնումների գործընթացի հետ:

ԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՄՆԵՐ

«Բանբեր Երևանի համալսարանի»

2013-2014 թթ. հաշվետու ժամանակաշրջանում «Բանբեր Երևանի համալսարանի» հասարակական գիտություններ, քառամսյա գիտական հանդեսը շարունակել է լույս ընծայվել մասնագիտական 6 շարքով («Հայագիտություն», «Բանասիրություն», «Իրավագիտություն», «Փիլիսոփայություն, հոգեբանություն», «Սոցիոլոգիա, տնտեսագիտություն», «Միջազգային հարաբերություններ, քաղաքագիտություն»), որոնցից հրատարակվել է երեքական համար (N 141, 142, 143):

Շարքերի յուրաքանչյուր համարը հրատարակվել է 5 մամուլ ծավալով, 100 օրինակ տպաքանակով:

«Բանբերում» հայերենից և ռուսերենից բացի՝ հոդվածներ են տպագրվում նաև անգլերեն, ուստի յուրաքանչյուր հոդված ունենում է երկու լեզվով ամփոփում:

Հանդեսի հրատարակությանը զուգահեռ իրականացվում են ԵՊՀ կայքում հանդեսի էլեկտրոնային տարբերակի զետեղման աշխատանքները: Հաշվետու ժամանակաշրջանում կայքում տեղադրվել են 2000-2014 թթ. լույս տեսած համարները: «Բանբերի» ավելի վաղ շրջանի համարների տեղադրումը կշարունակվի հետագայում ևս:

Հանդեսը նաև համագործակցության պայմանագիր է կնքել ռուսաստանյան «Էլեկտրոնային գիտական գրադարան» ՄՊԸ-ի հետ՝ տեղեկատվության փոխանակման վերաբերյալ: Այն հնարավորություն կընձեռի «Բանբերին»՝ ընդլայնելու տարածման շրջանակները, ինչը կնպաստի հանդեսի հեղինակության աճին:

«Գիտական տեղեկագիր»

«Գիտական տեղեկագիր» (բնական գիտություններ) հանդեսը 2009 թ-ից ԵՊՀ գիտխորհրդի որոշմամբ տրոհվել և լույս է տեսնում 3 առանձին շարք-հանդեսների տեսքով:

2013 թ. երրորդ քառամսյակում լույս է տեսել «Գիտական տեղեկագրի» (Proceedings of YSU) «Ֆիզիկամաթեմատիկական գիտություններ» և «Քիմիա և կենսաբանություն» շարքերի (անգլերեն), ինչպես նաև «Երկրաբանություն և աշխարհագրություն» շարքի (հայերեն, ռուսերեն) 3-րդ համարները:

2014 թ. արդեն լույս են տեսել նշված 3 հանդեսների 1-ին և 2-րդ համարներ: Եվս մեկական համար լույս կտեսնի մինչև տարեվերջ:

2014 թ. մայիսից «Գիտական տեղեկագրի» «Ֆիզիկամաթեմատիկական գիտություններ» հանդեսը ներկայացված է Գերմանիայի Դաշնային Հանրապետությունում հրատարակվող zbmMATHJournal հանդեսում:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Երևանի պետական համալսարանը միջազգային համագործակցության պայմանագրեր և համաձայնագրեր ունի աշխարհի շուրջ 50 երկրների 229 համալսարանների, գիտակրթական հաստատությունների և միջազգային կազմակերպությունների հետ: Առկա պայմանագրերի շրջանակներում յուրաքանչյուր ուսումնական տարվա ընթացքում տեղի են ունենում պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողների փոխանակումներ: ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի ուսանողները վերապատրաստման կարգով մասնակցում են Քուվեյթում գործող արաբերեն լեզվի կենտրոններում կազմակերպվող և տարբեր տևողություն ունեցող դասընթացներին (3 ամիս, 10 ամիս): Ռոստոկի համալսարանի հետ գործող պայմանագրի շրջանակում ԵՊՀ ֆիզիկայի և քիմիայի ֆակուլտետներից դասախոսներ և ուսանողներ նշված բուհ են գործուղվում մինչև 1 տարի ժամկետով՝ համատեղ գիտահետազոտական աշխատանք կատարելու և ուսումնական վերապատրաստում անցնելու նպատակով: Ռուսաստանի Դաշնության Միջուկային հետազոտությունների միացյալ ինստիտուտում ԵՊՀ ֆիզիկայի ֆակուլտետի լավագույն ուսանողներին գիտահետազոտական համատեղ աշխատանք կատարելու հնարավորություն է տրվում:

ԵՊՀ ուսանողներն ակտիվորեն մասնակցում են փոխանակման ծրագրերին՝ անցնելով լեզվի վերապատրաստման դասընթացներ: Ռուս բանասիրության ֆակուլտետի ուսանողները բուլղարերենի վերապատրաստում են անցնում Բուլղարիայի Սուրբ Կլիմենտ Օհրիդսկու անվան համալսարանում, ինչպես նաև հունարեն լեզվի դասընթացների են մասնակցում Հունաստանում՝ Սալոնիկի Արիստոտելի անվան համալսարանում: Վերջին դասընթացներին մասնակցում են նաև պատմության ֆակուլտետի լավագույն ուսանողները: Ի դեպ, ուսանողները մասնակցում են նաև հունական «Ցատն» կրթամշակութային ծրագրին: Իտալիայի Կա՛ Ֆոսկարի համալսարանում իտալերենի վերապատրաստման դասընթացներին մասնակցում են ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետի ուսանողները:

ԵՊՀ-ի և ԱՊՀ երկրների Ցանցային համալսարանի միջև համագործակցության շրջանակում 2013/2014 ուստարում Ռուսաստանի Ազգերի բարեկամության համալսարան են գործուղվել 7 ուսանողներ՝ միջազգային հարաբերությունների, աշխարհա-

գրության և երկրաբանության, ռուս բանասիրության ֆակուլտետներից: 2013/2014 ուսումնական տարում Ռուսաստանի Ազգերի բարեկամության համալսարանի հետ համագործակցության շրջանակում ավելացել է նոր մասնագիտացում՝ «Տուրիզմի միջմշակութային հաղորդակցություն և տուրիզմ» մասնագիտությամբ:

Շարունակվել է համագործակցությունը Մոնպելյե-1, Մոնպելյե-3, Պրովանսի համալսարանների հետ (Ֆրանսիա):

Հաշվետու ուսումնական տարվա ընթացքում ստորագրվել են 10 պայմանագրեր արտասահմանյան բուհերի հետ: Դրանցից են՝ Բուխարեստի համալսարան (Ռումինիա), Ֆ. Մ. Դոստոևսկու անվան՝ Օմսկի պետական համալսարան (Ռուսաստան), Տյումենի պետական համալսարան (Ռուսաստան), Բելգորոդի պետական ազգային հետազոտական համալսարան (Ռուսաստան), «Տնտեսագիտության բարձրագույն դպրոց» ազգային հետազոտական համալսարան (Ռուսաստան), Ուկրաինայի Գիտությունների ազգային ակադեմիայի Կիևյան իրավունքի ինստիտուտ (Ուկրաինա), Լե Մանի համալսարան (Ֆրանսիա) և այլն:

Ինչպես և նախորդ տարիներին, 2013/2014 ուստարում Երևանի պետական համալսարանն ակտիվորեն մասնակցել է տարբեր միջազգային գիտաժողովների, սեմինարների և քննարկումների կազմակերպմանը: Միննույն ժամանակ, ԵՊՀ միջազգային համագործակցության վարչությունը աջակցել է ՀՀ-ում գործող միջազգային կազմակերպությունների և ՀՀ-ում հավատարմագրված դեսպանությունների կողմից տարբեր գիտակրթական միջոցառումների, սեմինարների, կրթական ծրագրերի և տեղեկատվական ցուցահանդեսների կազմակերպմանը:

2013/2014 ուսումնական տարում միջազգային միջոցառումներից առավել ուշագրավ էր 2014 թ. հունիսի 9-13-ը ԵՊՀ-ի 95-ամյակին նվիրված միջոցառումների շարքը, որին ներկա էին հյուրեր տարբեր օտարերկրյա բուհերից և միջազգային ընկերություններից: Այդ շրջանակում 2014 թ. հունիսի 11-ին կազմակերպվել է միջազգային գիտաժողով՝ «Կրթությունը 21-րդ դարում. Խնդիրներ և մարտահրավերներ» թեմայով, որին ներկա են եղել հյուրեր Բուլղարիայից, Ռուսաստանից, Մոլդովայից, Ուկրաինայից, Վրաստանից:

Վերջին 5 տարիների ընթացքում Երևանի պետական համալսարանը ակտիվ մասնակցել է «Տեմպուս»-ի շրջանակներում իրականացվող նախագծերի մշակմանն ու իրագործմանը: 2013/2014 ուստարում հաջողությամբ շարունակվել են «Տեմպուս»,

«Էրագմուս Մունդուս» դրամաշնորհային ծրագրերը: Իրականացվել են «Էրագմուս Մունդուս» ծրագրի WEBB, ELECTRA, IANUS, HUMERIA, BACKIS, EMBER նախագծերը, որոնց նպատակն է ընդլայնել ուսանողների, դասախոսների և հետազոտողների փոխանակումները և աջակցել շարժունակությանը ոչ ԵՄ անդամ պետություններից դեպի ԵՄ անդամ երկրներ:

2011 թ-ից ԵՊՀ-ում «Տեմպուս» ծրագրի շրջանակներում իրականացվում է «Հայաստանում, Վրաստանում և Ուկրաինայում համալսարան-ձեռնարկություն գործընկերությանն ուղղված վերապատրաստման հնարավորություններ» դրամաշնորհը, որի հիմնական նպատակն է ընդլայնել համալսարանների հնարավորությունները Հայաստանում, Վրաստանում և Ուկրաինայում՝ համաձայն հասարակության և շուկայական տնտեսության պահանջների՝ հիմնված համապատասխան կրթության վրա: Իրականացվել են նաև «Տեմպուս» ծրագրի այլ դրամաշնորհներ, մասնավորապես՝ La MANCHE, ATHENA, PICASA, SuTomA, ARMENQA, PACT, VERITAS ծրագրերը:

Հաշվետու ուստարում ԵՊՀ մասնագետները, ինչպես նաև բակալավրիատի, մագիստրատուրայի և ասպիրանտուրայի ուսանողները մասնակցել են տարբեր գիտական միջոցառումների, սեմինարների, արտասահմանյան գիտակրթական ծրագրերի: Իրականացվել են նաև միջբուհական փոխանակման ծրագրեր: Միջազգային համագործակցության վարչությունն ապահովել է համալսարանականների՝ արտասահման գործուղվելն ու գիտաուսումնական փոխանակումները: Հաշվետու շրջանում համալսարանականներն առավել հաճախ գործուղվել են Ռուսաստան, Վրաստան, Գերմանիա, ԱՄՆ, Իտալիա:

2013/2014 ուսումնական տարում ընդհանուր առմամբ իրականացվել է 537 անձ/գործուղում: Գործուղվել են 206 մասնագետ, 162 ուսանող և ասպիրանտ: Համալսարանի վարչական կազմից արտասահման է գործուղվել 169 անձ:

2013/2014 ուստարում ԵՊՀ ֆակուլտետներում սովորել են 477 օտարերկրացի ուսանողներ և ասպիրանտներ, այդ թվում՝ 34 ուսանող ԵՊՀ միջազգային կրթական կենտրոնում, բակալավրիատում՝ 253 (224-ը՝ վճարովի, 29-ը՝ անվճար հիմունքներով), մագիստրատուրայում՝ 89 (65-ը՝ վճարովի, 24-ը՝ անվճար հիմունքներով), ասպիրանտուրայում՝ 38 (36-ը՝ վճարովի, 2-ը՝ անվճար հիմունքներով): Հեռակա ուսուցմամբ բակալավրիատում սովորել է 40 ուսանող: Վճարովի հիմունքներով սովորող օտարերկրացիներից գանձված ուսման վարձը կազմել 188.215.000 դրամ: Բացի այդ,

ներկայումս ԵՊՀ ֆակուլտետների տարբեր կուրսերում սովորում են ավելի քան 150 սփյուռքահայ ուսանողներ, որոնք մայր բուհ ընդունվել և սովորում են ՀՀ քաղաքացիների հետ ընդհանուր հիմունքներով:

2013/2014 ուստարում «Գալուստ Գյուլբենկյան» հաստատության կողմից հատուցվել են համալսարանի 32 երիտասարդ գիտնականների արտասահմանյան կարճաժամկետ գործուղումների (գիտաժողովներ, սեմինարներ, դասընթացներ և այլն) ծախսերը՝ ընդամենը՝ 56 000 ԱՄՆ դոլարի չափով:

«Գալուստ Գյուլբենկյան» հիմնադրամի և ՀԲԸՄ-ի կողմից փոխհատուցվել են համալսարանի բակալավրիատում և մագիստրատուրայում սովորող 46 սիրիահայ ուսանողների ուսման վարձերի 60 %-ը:

«Գալուստ Գյուլբենկյան» հիմնադրամի կողմից ֆինանսավորվել են նաև համալսարանական կյանքի այլ բնագավառներ, այդ թվում գիտաուսումնական գրականության հրատարակություն, «Բանբեր Երևանի համալսարանի» գիտական պարբերականի հրատարակության օժանդակություն և այլն:

Կազմակերպվել է գիտական և ուսումնական գրականության առաքումը Լիբանանի, Սիրիայի և Իրանի հայկական համայնքների մշակութային և ուսումնական կենտրոններ, ինչպես նաև «Գալուստ Գյուլբենկյան» հիմնադրամին՝ (Լիսաբոն): 2013/2014 ուստարում նշված հասցեներով առաքվել է շուրջ 400 կտոր գրականություն:

Ձեռքբերումները, անշուշտ, ոգևորիչ են, սակայն այս ոլորտում ևս կան մտահոգիչ խնդիրներ և բացթողումներ: Մասնավորապես՝

- ԵՊՀ ընդունելության համակարգում խիստ ցածր է օտարերկրյա ուսանողների մասնաբաժինը, օտարերկրյա ուսանողների ներգրավման հնարավորությունները լիարժեք չեն օգտագործվում: ԵՊՀ-ն դեռևս չունի բավարար հանրակացարանային պայմաններ:
- Միջազգայնացման զարգացման գործընթացում անգլերենի չիմացությունը լուրջ բացթողում է: Դասախոսական կազմի անգլերեն լեզվի չիմացությունը բավականին ցածր է:
- Քիչ է արտասահման գործուղումների մեկնած ասպիրանտների քանակը:

ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՊԵՐ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐ

1. Հասարակայնության հետ տարվող աշխատանքներ

Հասարակայնության հետ տարվող աշխատանքներն իրականացվել են մի շարք ուղղություններով, մասնավորապես՝

- Հասարակայնության հետ կապերի ոլորտում տարվող քաղաքականության վերաբերյալ առաջարկությունների ներկայացում, համապատասխան ծրագրերի և միջոցառումների մշակում և իրականացում, վարչական այլ աշխատանքների իրագործում,

- Հայաստանյան և արտերկրի ՋԼՄ-ների հետ (տպագիր և էլեկտրոնային) փոխգործակցություն, ԵՊՀ միջոցառումների լուսաբանում,

- Ինտերնետային ռեսուրսների զարգացում, համացանցային տիրույթում ԵՊՀ-ի վերաբերյալ տեղեկատվության և տեսանյութերի տարածում,

- «Երևանի համալսարան» պաշտոնաթերթի և այլ նյութերի հրատարակում,

- Մեթոդական աշխատանքների իրականացում,

- Միջոցառումների ֆոտո և տեսանկարահանում, նյութերի արխիվացում:

Համապատասխան գործունեության առանցքում եղել են ԵՊՀ 95-ամյակին նվիրված ծրագրերին և միջոցառումներին առնչվող աշխատանքները:

Հասարակայնության հետ կապերի ոլորտում տարվող քաղաքականության վերաբերյալ առաջարկությունների ներկայացում, համապատասխան ծրագրերի և միջոցառումների մշակում և իրականացում, վարչական այլ աշխատանքների իրագործում

Համապատասխան աշխատանքները համակարգվում են հասարակայնության հետ կապերի և լրատվության վարչության կողմից: Աշխատանքներ են իրականացվել ԵՊՀ հանրային կապերի, ներքին և արտաքին հաղորդակցության ոլորտներում ԵՊՀ զարգացման ռազմավարությամբ սահմանված խնդիրների իրականացման ուղղությամբ, համապատասխան առաջարկություններ են ներկայացվել ԵՊՀ ռեկտորատ: ԵՊՀ-ում տարվող աշխատանքներին համահունչ մշակվել են ԵՊՀ ինստիտուցիոնալ

հավատարմագրմանն առնչվող փաստաթղթեր, ամփոփվել է ԵՊՀ հակակոռուպցիոն միջոցառումների համառոտ հաշվետվությունը, համակարգվել են ԵՊՀ 2012/2013 ուստարվա հաշվետվության մշակման աշխատանքները: Վարչությունը ներգրավված է եղել գնումների՝ օրենքով նախատեսված պատասխանատու ստորաբաժանմանը վերապահված գործառույթների իրականացման գործում: Պարբերաբար կազմակերպվել են հանդիպումներ ԵՊՀ տարբեր ստորաբաժանումների հանրային կապերի պատասխանատուների հետ, քննարկվել են ստորաբաժանումներում տարվող աշխատանքների առանձնահատկությունները, «ԵՊՀ ձևաթղթերի օգտագործման ուղեցույց»-ում ամրագրված դրույթները սահմանված կարգով օգտագործելուն վերաբերող հարցեր: ԵՊՀ-ում նոր բացված (վերանվանված) ստորաբաժանումների համար մշակվել և շրջանառության մեջ են դրվել համապատասխան ձևաթղթեր:

Վարչությունն ապահովել է տարբեր հասարակական կազմակերպությունների, տեղական ինքնակառավարման մարմինների, միջազգային կազմակերպությունների հետ ԵՊՀ փոխգործակցությունը, ինչպես և ԵՊՀ պատշաճ արձագանքը նրանց նախաձեռնություններին:

Հայաստանյան և արտերկրի ՁԼՄ-ների հետ (տպագիր և էլեկտրոնային) փոխգործակցություն, ԵՊՀ միջոցառումների լուսաբանում

ԵՊՀ-ում կազմակերպվող միջոցառումների լուսաբանումը ՁԼՄ-ներում կարևոր աշխատանքային ուղղություններից մեկն է, որն իրականացվում է «ԵՊՀ-ում հանրային նշանակություն ունեցող միջոցառումների կազմակերպման, իրազեկման և հասարակայնության հետ տարվող աշխատանքների ուղեցույց»-ի դրույթներին համապատասխան: Հետևողական աշխատանք է տարվել ուղեցույցի դրույթների կիրառման (այդ թվում իրազեկման հայտերի պատշաճ կերպով լրացնելու) ուղղությամբ: Հաշվետու ուստարվա ընթացքում վարչությունն ստացել է հանրային նշանակության միջոցառման շուրջ 217 հայտ: Շուրջ 50 մամուլի հաղորդագրություններ են ուղարկվել ՁԼՄ-ներին:

Իրականացվել է տպագիր ՁԼՄ-ներում և ինտերնետային կայքերում համալսարանի, կրթության և գիտության ոլորտի կարևոր խնդիրների մասին հրապարակված նյութերի մոնիթորինգ: Տպագիր լրատվամիջոցներում հաշվետու ժամանակահատվա-

ծում ԵՊՀ-ի մասին հրապարակվել է 589 նյութ, իսկ ինտերնետային կայքերում ԵՊՀ-ին անդրադարձած նյութերի թիվը 936 է: Համապատասխան նյութերը յուրաքանչյուր օր՝ առավոտյան, ներկայացվել են ԵՊՀ ռեկտորատին, իրականացվել է նյութերի վերլուծություն:

ԵՊՀ կենտրոնական մասնաշենքի նախասրահի հեռուստակրաններին յուրաքանչյուր աշխատանքային օր տեղեկատվություն և հայտարարություններ են տեղադրվել համալսարանում կայանալիք միջոցառումների վերաբերյալ: Դրանց ընդհանուր թիվը 217 է: Հետևողական աշխատանք է կատարվել ԵՊՀ խորհրդանշանների (տարբերանշան, դրոշ, օրհներգ) մասսայականացման ուղղությամբ:

Ինտերնետային ռեսուրսների զարգացում, համացանցային տիրույթում ԵՊՀ-ի վերաբերյալ տեղեկատվության և տեսանյութերի տարածում

ԵՊՀ ինտերնետային ռեսուրսների զարգման գործողությունների պլանի համաձայն՝ շարունակվել են ԵՊՀ ինտերնետային պորտալի զարգացման աշխատանքները: Նորաստեղծ պորտալում ընդգրկված են 55 կայք ու ենթակայք: Կայքի «Նորություններ» բաժնում հրապարակվել է հայերեն, ռուսերեն, անգլերեն 1410 նյութ:

Շահառուների հետ ապահովվել է առցանց հետադարձ կապ, ինչպես նաև մշակվել և վերլուծվել են էլեկտրոնային փոստով ստացված նամակները: ԵՊՀ պորտալում գործող «Հարց-պատասխան» բաժնի միջոցով ստացվել են բազմաթիվ նամակներ (936՝ հայերեն, անգլերեն, ռուսերեն), որոնց ԵՊՀ տարբեր ստորաբաժանումների օգնությամբ հնարավորինս սեղմ ժամկետներում տրվել են սպառիչ պատասխաններ:

Ամենօրյա օպերատիվ աշխատանքի շնորհիվ և կայքի այցելուների հետ ինտերակտիվ կապ ապահովելու արդյունքում, նախորդ ուստարվա համեմատ, կայքի այցելուների թիվն աճել է՝ հասնելով օրական միջինը 4700-ի:

Հաշվետու ժամանակահատվածում ֆակուլտետների կայքերում շարունակվել են թարմացվել ու տեղադրվել դասախոսների տվյալները (հայերեն ու անգլերեն), լուսանկարները, խմբագրվել և ավելացել են մոտ 4000 գիտական հրապարակումների մասին տվյալներ: Այս պահին կայքում առկա են 17230 հրապարակումներ:

Վարչական փաստաթղթերի (<http://doc.yzu.am>) կայքը շարունակել է պարբերաբար թարմացվել. տեղադրվել են ԵՊՀ գիտխորհրդի արձանագրություններն ու որո-

շումները, ֆակուլտետային խորհուրդների արձանագրություններն ու որոշումները, կանոնակարգերն ու կանոնադրությունները, հաշվետվությունները, ռեկտորի հրամանները, ուղեցույցները և այլն: ԵՊՀ մասնագիտական աստիճանաշնորհման խորհուրդների (<http://ysu.am/council>) կայքը թարմացվել է 320 անգամ: Աշխատանքներ են տարվել Շրջանավարտների և կարիերայի կենտրոնի (<http://careercenter.ysu.am>), Մշակույթի կենտրոնի և այլ ստորաբաժանումների կայքերի սպասարկման ուղղությամբ: (<http://culture.ysu.am>), դրանցից մի քանիսը ստացել են նոր դիզայն:

Հաշվետու ուստարում շահագործման են հանձնվել ԵՊՀ պորտալում տեղակայված հետևյալ կայքերը և նոր դիզայնով ու հավելումներով համալրված բաժինները՝

- Գենդերային հետազոտությունների և առաջնորդության կենտրոն,
- Որակի ապահովման կենտրոն,
- Կիրառական հոգեբանության կենտրոն,
- Արդիականության մարտահրավերները (Փիլիսոփայական և հոգեբանական հիմնախնդիրներ, միջազգային գիտաժողովի կայք),
- Անգլերենի ուսումնասիրության հայկական ասոցիացիա,
- «Մաթեմատիկա և կիրառություններ» ամառային դպրոցի կայք,
- «Ուսանողական» պորտալ՝ իր 7 առանձին կայքերով,
- Էլ. հեռախոսագիրք:

Փոփոխության են ենթարկվել հետևյալ բաժինները՝ «Պատկերասրահ», «Ռետրո պատկերասրահ», «Տեսադարան», «Հարց-պատասխան», «Օրացույց», Համալսարանականներ»:

Սոցիալական ցանցերում (Facebook, Google+, Twitter) վարվել են ԵՊՀ էջերը, մասնավորապես՝ Facebook-ի (<http://www.facebook.com/ysu.am>) տիրույթում բազմաթիվ այցելուներ բուռն քննարկումներ են ծավալել (ԵՊՀ Facebook-ի էջի հետևորդների թիվը հասել է 18 000-ի), ընդ որում՝ Facebook սոցիալական ցանցի տնօրինությունը պաշտոնապես ճանաչել է ԵՊՀ-ի կողմից վարվող էջը:

Առկա և հեռակա ուսուցման համակարգերի դիմորդների համար ԵՊՀ ինտերնետային կայքում տեղադրվել է համապատասխան տեղեկատվություն, իսկ հեռակա ուսուցման ընդունելության քննությունների պատասխանների 24 ձևաթղթեր տեղադրվել են օրական երկու անգամ օպերատիվ կերպով: Տեղադրվել են նաև 2014 թ. առկա ուսուցման համակարգով ԵՊՀ ընդունված բոլոր ուսանողների տվյալները:

Իրականացված աշխատանքների արդյունքում էապես ավելացել է այցելուների թիվը: 2014 թվականի օգոստոսին «Վեբոմետրիքսի» (Webometrics Ranking of World Universities) հրապարակած բուհական համաշխարհային վարկանիշային աղյուսակում ԵՊՀ-ն 2591-րդ տեղում է՝ նախորդ տարվա 3152-ի համեմատությամբ առաջ ընթանալով 561 նիշով: ԵՊՀ-ն շարունակում է գլխավորել ՀՀ բուհերի ցանկը, իսկ տարածաշրջանում առաջին եռյակում է:

«Երևանի համալսարան» պաշտոնաթերթի և այլ նյութերի հրատարակում

«Երևանի համալսարան» պաշտոնաթերթի հրատարակմանը զուգընթաց տպագրվել են նաև ուղեցույցներ, բուկլետ (անզլերեն) ու տեղեկատվական գրքույկներ: Պատրաստվել և հրատարակվել է ԵՊՀ պատմության և հայ բանասիրության ֆակուլտետները և այլ ստորաբաժանումները ներկայացնող բուկլետներ:

2013/2014 ուստարվա ընթացքում լույս է տեսել «Երևանի համալսարան» թերթի 9 համար՝ միջինը 34 էջ ծավալով, յուրաքանչյուր համարում՝ 50-55 նյութ (ուստարվա կտրվածքով՝ 500-550 նյութ, այդ թվում՝ վերլուծություններ, հարցազրույցներ, կայացած միջոցառումների լուսաբանումներ և այլն): «Երևանի համալսարան» պաշտոնաթերթը հանդես է եկել հստակ խորագրերով՝ «Քաղաքականություն», «Գիտություն», «Կրթություն», «Հասարակություն», «Մարզական», «Մշակույթ», «Միջազգային», «Ուսումնագիտական խճանկար»:

Օպերատիվ թարմացվել է նաև «Երևանի համալսարան» պաշտոնաթերթի կայքը:

Մեթոդական աշխատանքների իրականացում

Անցկացվել են ԵՊՀ արտաքին իմիջի վերաբերյալ Երևանի բնակչության պատկերացումների բացահայտմանն ուղղված և հեռախոսային հարցման մեթոդով իրականացված հետազոտության իններորդ և տասներորդ փուլերը: Հետազոտությունը շարունակական բնույթ ունի և անցկացվում է վեց ամիսը մեկ:

ԵՊՀ արտաքին իմիջին վերաբերող հետազոտության համար ներգրավվել են ԵՊՀ փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի ուսանողներ, ովքեր աջակցել են հետազոտության դաշտային և տվյալների մշակման փուլերի աշխատանքներին՝

ստանալով վերջիններիս իրականացման վերաբերյալ համապատասխան մանրամասն գիտելիքներ և հմտություններ:

ԵՊՀ կարիերայի կենտրոնի հետ համատեղ անցկացվել է կենտրոնի գործառույթների և ուսանողների զբաղվածության վերաբերյալ հետազոտություն:

Անցկացվել են մի շարք որակական թեմատիկ հետազոտություններ ԵՊՀ ուսանողների շրջանում: Կազմակերպական աջակցություն է ցուցաբերվել ՀՀ ԿԳՆ-ի միջոցով ստացված տարբեր կազմակերպությունների ուսումնասիրություններին և հետազոտություններին (ՄԻԱՎ/ՁԻԱՎ, ծխելու դեմ պայքար և այլն):

Լուսանկարների և տեսանյութերի արխիվացում

Հաշվետու ժամանակահատվածում կատարվել են 595 լուսանկարահանումներ (միջոցառումներ, թերթի համար ֆոտոսեսիաներ և այլն), ընդհանուր թվով՝ 24960 լուսանկար: Տեսանկարահանված միջոցառումների տևողությունը կազմել է ավելի քան 1000 րոպե: Տեսաշարն ամբողջությամբ թվանշանայնացվել և արխիվացվել է DVD սկավառակների վրա: Շարունակվել են 1970-ական թվականներից մինչև 2006 թ. գունավոր ֆոտոժապավենով լուսանկարահանված նյութերի թվանշանայնացման և արխիվացման աշխատանքները: Վարչության համապատասխան բաժնի աշխատակիցները ԵՊՀ-ում կայացած միջոցառումների լուսանկարներով ապահովել են ինչպես համալսարանական, այնպես էլ հանրապետական մամուլը:

2. Տեղեկատվական համակարգերի սպասարկում և զարգացում

2013/2014 ուսումնական տարում շարունակվել են աշխատանքները ԵՊՀ տեղեկատվական համակարգերի սպասարկման և զարգացման ուղղությամբ, որոնք պայմանականորեն կարելի է բաժանել հետևյալ հիմնական մասերի՝

- Տեղեկատվական համակարգերի, համակարգչային տեխնիկայի զարգացման և արդիականացման ուղղությամբ համապատասխան վարչական գործառույթների իրականացում,
- Համալսարանում առկա համակարգչային տեխնիկայի սպասարկում և արդիականացում,

- Ներհամալսարանական համակարգչային ցանցի սպասարկում և արդիակա-նացում,
- Համալսարանական տեղեկատվական համակարգերի սպասարկում և զար-գացում:

Տեղեկատվական համակարգերի, համակարգչային տեխնիկայի զարգացման և արդիականացման ուղղությամբ համապատասխան վարչական գործառույթների իրականացում

Տեղեկատվական համակարգերի և համակարգչային տեխնիկայի ոլորտում հա-մապատասխան վարչական գործառույթներն իրականացվել են ԵՊՀ տեղեկատվա-կան համակարգերի սպասարկման և զարգացման վարչության կողմից: Վարչու-թյունն առաջարկություններ է ներկայացրել ԵՊՀ տեղեկատվական համակարգերի ոլորտում տարվող քաղաքականության և ծրագրերի վերաբերյալ, մասնակցել է ԵՊՀ ռազմավարական ծրագրի համապատասխան դրույթների իրականացման աշխա-տանքներին: Վարչության աշխատակիցները ներգրավված են եղել գնումների՝ օրեն-քով նախատեսված և պատասխանատու ստորաբաժանմանը վերապահված գործա-ռույթների իրականացման գործում: Նրանք նաև ներգրավված են «Տեմպուս» ծրագրով իրականացվող HEN-GEAR ծրագրում, որի շրջանակում պետք է ստեղծվեն շրջանա-վարտների տվյալների շտեմարաններ՝ նրանց զբաղվածության և այլ խնդիրների լուծման նպատակով: Արդիականացվել և սպասարկվել են գույքի էլեկտրոնային գույքագրման, վարչական գործառույթների ավտոմատացման համակարգերը:

Համալսարանում առկա համակարգչային տեխնիկայի սպասարկում և արդիականացում

Համակարգչային պահեստամասերից հավաքվել և շահագործման են հանձնվել շուրջ 162 նոր համակարգիչներ: Սպասարկվել է (վերանորոգում, կարգաբերում) շուրջ 600 համակարգիչ:

Տեխնիկական աջակցություն է ցուցաբերվել ԵՊՀ տարբեր ստորաբաժանումների կողմից կազմակերպված ավելի քան 35 միջոցառումների համակարգչային տեխ-նիկայի սպասարկման և ապահովման աշխատանքներին: Ավելացել են պետական և

ավարտական քննությունների ընդունման լսարաններում տեղադրված IP տեսախցիկները (15 նոր տեսախցիկ), որոնց միջոցով բոլոր ֆակուլտետներում ապահովվել են քննությունների ողջ ընթացքի տեսահեռարձակումը ԵՊՀ ներքին ցանցում և սահմանված կարգով քննությունների տեսաձայնագրումը: ԵՊՀ տարբեր ստորաբաժանումներում տեղադրվել են 12 ինտերակտիվ (էլեկտրոնային) գրատախտակներ:

ԵՊՀ աշխատակիցներին տրամադրվել է համակարգչային ծրագրերին և տեխնիկային վերաբերող խորհրդատվություն (շուրջ 1200 այցելություն և խորհրդատվություն), տարվել են բացատրական աշխատանքներ համակարգչային անվտանգության ուղղությամբ:

Ներհամալսարանական ցանցի սպասարկում, կառավարում և զարգացում

Իր չափերով և տեխնիկական հագեցվածությամբ ու համապատասխան որակական բնութագրիչներով ԵՊՀ համակարգչային ցանցն առանձնանում է Հայաստանի բուհական համակարգում և զբաղեցնում առաջատար դիրք: Ապահովվել են ԵՊՀ մասնաշենքերի միջև ստեղծված 1Գբիթ/վ արագությամբ գործող օպտիկամալուխային ցանցի անխափան աշխատանքները, որի միջոցով միմյանց հետ միացված են ԵՊՀ բոլոր ուսումնական մասնաշենքերը, ներառյալ ԵՊՀ Իջևանի մասնաճյուղը:

«Տեմպուս» HEN-GEAR ծրագրի շրջանակներում ԵՊՀ կենտրոնական սերվերային սենյակը համալրվել է երկու նոր սերվերներով, սերվերային մոնիթորով, տվյալների պահպանման (back up) և անխափան սնուցման սարքով: Ապահովվել են սերվերների սպասարկման աշխատանքները:

Հաշվետու ուստարում շարունակվել են աշխատանքները ներհամալսարանական ցանցի ընդլայնման ուղղությամբ. ԵՊՀ ցանցին են միացվել ինչպես նոր ձեռք բերված, այնպես էլ նախկինում ձեռք բերված համակարգիչները (շուրջ 190 համակարգիչ), վերանորոգված մասնաշենքերում և այլ լսարաններում ու աշխատասենյակներում ԵՊՀ համակարգչային ցանցին միանալու նպատակով անցկացվել է նոր համակարգչային ցանց: ԵՊՀ ներքին ցանցին լարանցմամբ միացված ընդհանուր կետերի (սարքերի) թիվը հասել է 2400-ի, իսկ անլար ինտերնետ կապինը (WiFi)՝ 76-ի:

ԵՊՀ-ում ինտերնետային կապից ազատ օգտվելու հնարավորությունը ընդլայնվել է, համալսարանի ինտերնետ կապի թողունակությունն ավելացել է և միջինը կազմել է 50Mb/s (օգտվողների թիվը հասնում է շուրջ 2000-ի):

Հիմնովին վերակառուցվել և արդիականացվել է ԵՊՀ հեռախոսակապի համակարգը, տարբեր մասնաշենքերում տեղադրվել են 6 ժամանակակից ԱՀԿ-ներ: Ներքին և քաղաքային հեռախոսահամարների թվաքանակը կրկնակի աճել է:

Համալսարանական տեղեկատվական համակարգերի սպասարկում և զարգացում

Ապահովվել են առանձին սերվերով ԵՊՀ-ի www.y-su.am պորտալի շուրջ 55 կայքերի հոստինգը (տեղադրում ինտերնետում) և բոլոր կայքերի անխափան աշխատանքն ու անվտանգության բարձր մակարդակը: ԵՊՀ աշխատակիցներին տրամադրվել են շուրջ 150 նոր էլեկտրոնային փոստի հասցեներ ysu.am դոմեյնում (աշխատակիցների էլեկտրոնային փոստի հասցեների ընդհանուր թիվը շուրջ 2000 է):

Մեկնարկել է ԵՊՀ ուսանողների էլ. փոստի հասցեների տրամադրման գործընթացը, նախապատրաստվել են անհրաժեշտ սերվերները, կատարվել են համապատասխան ծրագրային կարգավորումներ՝ շուրջ 19000 օգտագործողներին էլ. փոստի հասցե տրամադրելու նպատակով: Իրականացվել են մշակումներ ԵՊՀ տարբեր ստորաբաժանումներում առկա տվյալների շտեմարանների ինտեգրման և միասնական համակարգի ստեղծման ուղղությամբ (համակցվել են էլ. փոստի և Supervision համակարգերի տվյալների հենքերը):

Շարունակվել են նախորդ ուստարում ներդրված պետական քննությունների և ավարտական աշխատանքների պաշտպանության ողջ ընթացքը ձայնագրող և առցանց վերահսկողությունն ապահովող համակարգի շահագործման աշխատանքները:

Շահագործվել են ԵՊՀ կենտրոնական մասնաշենքի նախասրահում տեղադրված և համակարգչային ցանցին միացված հեռուստամոնիթորները, աշխատանքներ են տարվել այլ մասնաշենքերում մոնիթորներ տեղադրելու ուղղությամբ:

Համալսարանի գործունեության այս ոլորտում ևս առկա են բացթողումներ, մասնավորապես՝

- ԵՊՀ-ում վերջնականապես ձևավորված չեն հանրության տարբեր շերտերի ներկայացուցիչների հետ հետադարձ կապի մեխանիզմները, թույլ են զարգացած անցանց հարցումների գործիքները:
- Ինտերնետային կայքերը չունեն շարժական սարքերի (Android, iOS) համար տարբերակներ, որոշ ֆակուլտետներ և այլ ստորաբաժանումներ ժամանակին կամ պատշաճ բովանդակությամբ չեն մշակում կամ տրամադրում անհրաժեշտ տեղեկատվություն կայքի համար:
- ԵՊՀ կառավարման մեկ միասնական տեղեկատվական համակարգ դեռևս ձևավորված չէ:

ԱՇԽԱՏԱՆՔ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԵՎ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ՀԵՏ

1. Ուսանողական կազմակերպություններ և ուսանողների հետ տարվող աշխատանքներ

Հաշվետու ժամանակահատվածում ԵՊՀ ուսանողական խորհուրդը (ՈԻԽ) շարունակել է գործունեությունն իր կանոնադրական կարևորագույն խնդիրների ուղղությամբ՝ ապահովել ուսանողների ներգրավվածությունը համալսարանի կառավարման գործընթացում, պաշտպանել ուսանողների շահերն ու իրավունքները, խթանել ուսումնական գործընթացի և այլ աշխատանքների առավել արդյունավետ կազմակերպումը և աջակցել ուսանողության համար բարենպաստ միջավայրի ձևավորմանը: Տարին յուրահատուկ էր ուսխորհրդի համար այն առումով, որ 2014 թ. լրացավ ՈԻԽ-ի հիմնադրման 20-ամյակը:

Սահմանված կանոնակարգերի համաձայն՝ իրականացվել են տարբեր մակարդակի ՈԻԽ անդամների ընտրություններ: Ուսանողության կողմից ընտրված անդամների միջոցով ապահովվել է ուսանողների մասնակցությունը համալսարանի կառավարման գործընթացում. ուսանողները ներգրավված են տարբեր մակարդակի կառավարման մարմիններում (ԵՊՀ խորհուրդ, գիտական խորհուրդ, ֆակուլտետների խորհուրդներ և գիտական խորհուրդներ):

ԵՊՀ ուսանողական խորհուրդն իր հանձնաժողովների համակարգված և կանոնավոր աշխատանքի արդյունքում խթանել է ուսանողների ռազմահայրենասիրական, գիտակրթական, հոգևոր, մշակութային, ստեղծագործական և ֆիզիկական զարգացումը, աջակցել է ուսանողների սոցիալական վիճակի բարելավմանը, կազմակերպել է ուսանողների ազատ ժամանցն ու հանգիստը, ինչպես նաև զբաղվել է ուսանողներին հուզող բազմաթիվ այլ խնդիրներով: 2013/2014 ուստարվա ընթացքում ԵՊՀ ՈԻԽ-ն կազմակերպել է շուրջ 250 միջոցառում:

ՈԻԽ աշխատանքներում էական կարևորություն ունի ուսանողներին գործող կրթական համակարգի, նրանց իրավունքների և պարտականությունների և ներհամալսարանական կյանքի մասին իրազեկելու խնդիրը: Կազմակերպվել են քննարկումներ, բանավեճեր, սեմինարներ՝ ԵՊՀ ուսանողներին՝ մասնավորապես 1-ին կուրսեցի-

ներին, իրենց իրավունքներին և պարտականություններին ծանոթացնելու նպատակով, ինչպես նաև ուսուցման բոլոնյան համակարգի մասին նրանց իրազեկելու և այն ավելի մատչելի դարձնելու համար: Առաջին և երկրորդ կուրսեցիների համար անցկացվել է երկփուլ սեմինար-դասընթաց, որի նպատակը ուսանողներին ուսանողական ինքնակառավարման գործընթացի մանրամասների և իրավական նորմերի մասին համընդհանուր գիտելիքներ տալն էր: Ավարտին են հասցվել ՈԻԽ կայքի և ուսանողական պորտալի ստեղծման աշխատանքները: Ներկայումս ԵՊՀ ուսանողական պորտալը ներառում է 8 առանձին գործող կայք:

Ուսանողական կազմակերպությունների գործունեության առաջնայնությունների շարքում են ռազմահայրենասիրական բնույթի միջոցառումները, որոնց թվում՝ հանդիպումներ, քննարկումներ, հուշ-երեկոներ, գիտաժողովներ համալսարանում, ինչպես նաև այցելություններ գորամասեր, պատմամշակութային վայրեր և այլն: Հաշվետու ժամանակաշրջանում ԵՊՀ ուսանողներն ու պրոֆեսորադասախոսական կազմը հինգ տարբեր մեծ ծրագրերով այցելել են Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն: Բացի ավանդաբար աշնանը և գարնանը ԼՂՀ Քաշաթաղի շրջանի Համալսարանական պուրակում կազմակերպվող երկու ծառատունկ-ծրագրերից՝ Հաղործի շրջանում կազմակերպվել է ամառային ճամբար-բանակում 70 ուսանողների մասնակցությամբ, ինչպես նաև այցել ԼՂՀ պատմաճարտարապետական հուշարձաններ, գորամասեր, դպրոցներ և այլն:

Հետևողական աշխատանքներ են իրականացվել ուսանողների սոցիալական վիճակը բարելավելու ուղղությամբ, մասնավորապես՝ իրականացվել են ամառային հանգստի, ազատ ժամանցի ծրագրեր, ուսանողների ուսման վարձերի զեղչեր, կրթաթոշակներ, ցուցաբերվել է այլ աջակցություն (ՈԻԽ վերոհիշյալ ծրագրերում ներգրավված է եղել շուրջ 1000 ուսանող): Իսկ ընդհանուր հաշվարկով՝ շուրջ 4050 ուսանող հաշվետու ուստարում օգտվել է ուսման վարձերի զեղչերից:

Աշխատանքներ են տարվել ուսանողների ազատ ժամանցը կազմակերպելու ուղղությամբ: Անցկացվել են բանավեճի, «Ի՞նչ, որտե՞ղ, ե՞րբ»-ի և այլ ինտելեկտուալ մրցակցային առաջնություններ: Ուսանողության միջազգային օրվա առթիվ կազմակերպվել է «Լավագույն ուսանող-2013» մրցանակաբաշխությունը. նույն օրը կայացել է նաև ամենամյա «Ուսանողական ռեկտորատ» միջոցառումը, երբ ուսանողական շա-

րադրությունների մրցույթի հաղթողները մեկ օրով ստանձնում են «համալսարանը ղեկավարելու» պարտականությունները:

Կազմակերպվել է ԵՊՀ ուսանողական սպարտակիադան, որի շրջանակում տեղի են ունեցել ֆուտբոլի, սեղանի թենիսի, շախմատի, բասկետբոլի մրցումներ: ԵՊՀ ուսանողական խորհուրդը մասնակցել է նաև միջբուհական «Ունիվերսիադա»-ին, որտեղ բոլոր մրցույթների արդյունքում զբաղեցրել է երկրորդ հորիզոնականը:

Աշխատանքներ են ծավալվել նաև ՀՀ տարբեր կազմակերպությունների հետ համագործակցության շրջանակներում: Հաշվետու ուստարում ակտիվ է եղել համագործակցությունը Հայաստանի երիտասարդական հիմնադրամի և հասարակական բազմաթիվ այլ կազմակերպությունների հետ, որի շրջանակներում կազմակերպվել են մի շարք միջոցառումներ՝ այցելություններ Արցախ, սեմինար-դասընթացներ, ՀՀ բարձրագույն կրթության որակի վերաբերյալ քննարկումներ և այլն:

2013/2014 ուստարում ԵՊՀ ուսանողական գիտական ընկերությունը (ՈԻԳԸ) իրականացրել է իր կանոնադրային պահանջներից բխող միջոցառումներ, նպաստել է ուսանողության գիտական, կրթական, ստեղծագործական և հոգևոր զարգացմանը, ինչի նպատակով կազմակերպվել է 484 միջոցառում, այդ թվում՝ հանրապետական, միջբուհական և ֆակուլտետային գիտաժողովներ, սեմինար-քննարկումներ, հանդիպում-դասախոսություններ, ֆիլմերի դիտումներ, օլիմպիադաներ, ինտելեկտուալ խաղեր, դատախաղեր, բանավեճեր, գիտաճանաչողական էքսկուրսիաներ, դասախոսություններ դպրոցներում և այլն:

Հանրապետական և միջբուհական գիտաժողովներից կարելի է առանձնացնել ԵՊՀ հիմնադրման 95-ամյակին նվիրված հոբելյանական գիտական նստաշրջանը, սոցիոլոգիայի ֆակուլտետի հիմնադրման 9-ամյակին, իրավագիտության ֆակուլտետի հիմնադրման 80-ամյակին, գորավար Անդրանիկի ծննդյան 149-րդ տարեդարձին, Բիշքեկի զինադադարի կնքման 20-ամյակին և ֆիզիկայի արդի հիմնախնդիրներին նվիրված գիտաժողովները:

ԵՊՀ ՈԻԳԸ-ի կազմակերպած գիտաժողովների ընթացքում հնչել է շուրջ 1000 գիտական զեկուցում: Զեկուցումների թիվը, նախորդ ուստարվա համեմատությամբ, գրեթե անփոփոխ է մնացել, ինչը պայմանավորված է նախորդ ուստարվա Հայ գրատպության 500-ամյակին և ԵՊՀ ՈԻԳԸ հիմնադրման 65-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովի օրինակով այս ուստարում ԵՊՀ հիմնադրման 95-ամյա

հոբեյանին նվիրված գիտական նստաշրջանի անցկացմամբ (ներկայացվել է մոտ 400 զեկուցում, որից շուրջ 120-ը՝ ՀՀ և ԼՂՀ այլ բուհերից ու ԳԱԱ-ից):

ՈԻԳԸ միջոցառումներից կարևոր նշանակություն ունի գիտական աշխատանքներ կատարելու հմտությունների ուսուցման ամենամյա ծրագիրը, որի շրջանակներում ուսանողները սովորում են ինչպես կատարել գիտական աշխատանք: Կազմակերպվել է նաև Javascript լեզվի երկամսյա դասընթաց:

2013/2014 ուստարվա ընթացքում ՈԻԳԸ անդամներից շատերն արժանացել են տարաբնույթ մրցանակների: 2013 թ. հոկտեմբերի 16-ին շնորհվել են SS ոլորտում ՀՀ Նախագահի կրթական պարգևները, և մրցանակակիրների թվում էին ռադիոֆիզիկայի և ֆիզիկայի ֆակուլտետների շուրջ մեկ տասնյակ ներկայացուցիչներ: 2013 թ. նոյեմբերի 15-16-ը տեղի է ունեցել ՄԱԿ-ի հանրապետական մոդել-կոնֆերանս, որում ԵՊՀ ՈԻԳԸ-ն ներկայացրած մասնակիցների ցուցաբերած փայլուն ելույթի շնորհիվ ԵՊՀ-ն ճանաչվել է ծրագրին մասնակից լավագույն բուհ:

Անցած ուստարվա ընթացքում ՈԻԳԸ մեծ թվով անդամներ մասնակցել են միջազգային գիտաժողովների ու համաժողովների Մոսկվայում (ՌԴ), Լայպցիգում (Գերմանիա), Վարշավայում (Լեհաստան), Մադրիդում (Իսպանիա), Մինսկում (Բելառուս), Եկատերինբուրգում (ՌԴ), Կազանում (ՌԴ), Օմսկում (ՌԴ) և այլուր: Մասնավորապես՝ 2014 թ. ապրիլի 6-12-ը ԵՊՀ 8 ուսանողներ և ասպիրանտներ մասնակցել են Մոսկվայի պետական համալսարանի կազմակերպած «Լոմոնոսով-2014» միջազգային երիտասարդական գիտական համաժողովին:

ՈԻԳԸ գործունե աջակցությամբ ապահովվել է ԵՊՀ ուսանողների մասնակցությունը ՀՀ պետական բուհերի կողմից կազմակերպված գիտաժողովներին և տարաբնույթ միջոցառումներին: Միևնույն ժամանակ ապահովվել է այլ բուհերի ուսանողների մասնակցությունը ԵՊՀ ՈԻԳԸ-ի կողմից կազմակերպված գիտաժողովներին:

ՈԻԳԸ-ն հաշվետու ուստարում հրատարակել է գիտական հոդվածների 3 և թեզների 1 ժողովածու, 113 գիտական հոդված, 55 թեզիս, ուսումնամեթոդական 2 ձեռնարկ: Կարևոր ձեռքբերում է 2013 թ. հոկտեմբերի 23-ին ՀՀ ԲՈՀ-ից ստացված գրությունը, որով Հայ գրատպության 500-ամյակին և ԵՊՀ ՈԻԳԸ հիմնադրման 65-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովի հոդվածների ժողովածուի հինգհատորյակում ներառված աշխատանքները հաստատվում են որպես ընդունելի՝ թեկնածուական ատենախոսությունների պաշտպանության գործընթացի համար: Հրատարակ-

ման է ներկայացվել Գ. Հովհաննիսյանի, Ն. Գալստյանի, Մ. Սողոմոնյանի և Մ. Մալխասյանի կողմից կազմված «Գիտահետազոտական աշխատանք կատարելու հիմնական սկզբունքները. մեթոդական ցուցումներ» խորագրով մեթոդական ձեռնարկ-ուղեցույցը, որը կարող է դառնալ ՌԻԳԸ աշխատանքների կազմակերպման համար ուղենիշ:

ՌԻԳԸ աշխատանքներին մասնակցում է մոտ 1400 սովորող, որից ՌԻԳԸ կառուցվածքային ստորաբաժանումների անդամ է շուրջ 350-ը: Այլ բուհերից ու գիտահետազոտական կենտրոններից ԵՊՀ ՌԻԳԸ աշխատանքներում ներգրավված է շուրջ 400 սովորող: Հետաքրքրական է, որ ՌԻԳԸ աշխատանքներին անմիջականորեն աջակցած (գիտական հոդվածների ղեկավարում կամ գրախոսում, գիտաժողովների նիստերի նախագահում, սեմինարավարություն, լրացուցիչ դասախոսությունների անցկացում և այլն) դասախոսների թիվը ավելացել է՝ հասնելով 500-ի, ինչը գերազանցում է նախորդ տարվա ցուցանիշը 200-ով:

ԵՊՀ ուսանողների հետ տարվող աշխատանքների բաժինը ԵՊՀ ուսանողական կազմակերպությունների աշխատանքներին մշտապես ցուցաբերել է կազմակերպչական և մեթոդական աջակցություն: Աշխատանքներն ընթացել են երկու հիմնական ուղղություններով՝ աջակցություն ԵՊՀ ՌԻԽ և ՌԻԳԸ նախաձեռնություններին և ծրագրերին, ինչպես նաև ուսանողական կառույցների կարողությունների զարգացում:

Բաժնի և համապատասխան կառույցների համատեղ իրականացրած աշխատանքներից հարկ է առանձնացնել մեծածավալ ծրագրերը Լեոնային Ղարաբաղի Հանրապետությունում (ՀՀ ազգային հերոս Թաթուլ Կրպեյանին նվիրված հուշ-ցերեկույթ Կովսականում, ծառատունկ Քաշաթաղի շրջանի Բերձոր քաղաքի Համալսարանական պուրակում, Արցախի հերոս Պետրոս Ղևոնդյանին նվիրված հուշ-ցերեկույթի կազմակերպում Շահումյանի շրջանի Եղեգնուտ գյուղում, ուսանողական ամառային բանակում), ուսանողական ամենամյա գիտական հոդվածների ժողովածուի հրատարակում, ուսանողների ամառային հանգստի կազմակերպում և այլ ծրագրեր ու նախաձեռնություններ: Ապահովվել է ԵՊՀ ջոկատի մասնակցությունը «Բազե-2014» ամենամյա երիտասարդական հավաքին: Ուսանողների հետ տարվող աշխատանքներում ներառված են նաև ուսանողների տարբեր խնդիրների քննարկումներն ու ներկայացումը ռեկտորատին:

2. Մշակույթի կենտրոն

ԵՊՀ մշակույթի կենտրոնը շարունակել է իր բազմամյա մշակութային գործունեությունը՝ կազմակերպելով 17 միջոցառում և 15 կինոդիտում-քննարկում: «Համալսարանական» թատրոն-ստուդիան բեմադրել է 2 նոր ներկայացում՝ «Ռոմեո և Ջուլիետ», «Ամանորյա հրաշքներ»: Վերը նշված միջոցառումներին մասնակցել է շուրջ 9000 ուսանող, իսկ կազմակերպչական աշխատանքներին՝ շուրջ 260 ուսանող:

Ավանդական միջոցառումների շարքում պետք է առանձնացնել ԵՊՀ կենտրոնական մասնաշենքի բակում անցկացված «ԵՊՀ մեծարման և առաջին կուրսեցիների երդման արարողությունը»: Ուսանողության միջազգային օրվա առիթով ԵՊՀ ուսանողական խորհրդի և մշակույթի կենտրոնի համատեղ ջանքերով կազմակերպվել է «Լավագույն ուսանող-2013» համերգ-մրցանակաբաշխությունը: Մշակույթի կենտրոնի դահլիճում կազմակերպվել է Ապրիլի 1-ին՝ Հումորի օրվան նվիրված «Կատակում է ԵՊՀ մշակույթի կենտրոնի ՈւՀԱ «ԵԿԿ» թիմը» ցերեկույթ, որով ազդարարվել է ԵՊՀ մշակույթի կենտրոնի հումորի ակումբի բացումը: ՀՀ-ում անցկացվող Ֆրանկոֆոնիայի օրերի շրջանակում կենտրոնը կազմակերպել է ֆրանսիական երգի ամենամյա փառատոն, ինչպես նաև Հայաստանի ազգային կինոկենտրոնի և «Ալիազ Ֆրանսեզի» հետ համատեղ «Ամենակարճ օրը» կարճամետրաժ ֆիլմերի շրջանակներում ցուցադրվել են ֆրանսիական ֆիլմեր՝ Ս. Կեսմի «Այսօր կիրակի է», Ն. Էնջլ «Առագաստներ Լյուքսեմբուրգից»: Կազմակերպվել է նաև Նոր տարվան ընդառաջ «Ամանորյա հրաշքներ» խորագիրը կրող տոնական համերգ-ներկայացումը:

ԵՊՀ հիմնադրման 95-ամյակին նվիրված միջոցառումների շրջանակներում կենտրոնը կազմակերպել է «95-ամյա Մայր բուհը» թեմայով ցուցահանդես, որին մասնակցել էին ԵՊՀ դասախոսներ, աշխատակիցներ և ուսանողներ: Ներկայացվել են գեղանկարներ, լուսանկարներ, փայտի փորագրություններ, գորելեն, այլ ձեռքի աշխատանքներ: Կազմակերպվել էր Պոեզիայի փառատոնի թատերականացված երեկո, նվիրված Համո Սահյանի, Հովհաննես Շիրազի 100- և Պարույր Սևակի 90-ամյակներին, ինչպես նաև ԵՊՀ 95-ամյակին նվիրված ուսանողական տոնական համերգ: Տեղի ունեցավ «Ռոմեո և Ջուլիետ» երաժշտական ներկայացման պրեմիերան (ռեժիսոր՝ Կ. Դավթյան), որ նվիրված էր նաև Վ. Շեքսպիրի 450-ամյակին:

ԵՊՀ մշակույթի կենտրոնի դահլիճում տեղի է ունեցել Գրիգոր Նարեկացու «Մատյան ողբերգության» պոեմի հիման վրա մոնոներկայացում՝ ՀՀ վաստակավոր արտիստ Սամվել Բաղինյանի մասնակցությամբ (ռեժիսոր՝ Կ. Դավթյան):

Հաշվետու ուստարում մշակույթի կենտրոնի սաները մասնակցել են հանրապետական ու միջազգային մի շարք մրցույթների և փառատոների: Կենտրոնի մեներգիչները մասնակցել են «Խորհրդային երգեր» հանրապետական մրցույթ-փառատոնին, համալսարանը ներկայացնող երկու մասնակից արժանացել են երկրորդ, մեկը՝ առաջին մրցանակների: Մշակույթի կենտրոնի մեներգիչ Արծրուն Խանգելոյանը մասնակցել է «Հայաստանի ձայն» հեռուստանախագծին և անցել կիսաեզրափակիչ:

Մշակույթի կենտրոնը սերտորեն համագործակցում է ինչպես ԵՊՀ ստորաբաժանումների, այնպես էլ ՀՀ նախարարությունների և պետական ու հասարակական հաստատությունների հետ: Երգի և երաժշտության միջազգային օրվան նվիրված՝ կենտրոնի մեներգիչները մասնակցել են Հայաստանում Ֆրանսիայի դեսպանատանը անցկացված երգի փառատոնին: ՀՀ շախմատի ակադեմիայի հրավերով կենտրոնի երգիչներն ու պարային համույթը մասնակցել են Մարտունիում անցկացվող «Սևանա լիճ-2013» և «Սևանա լիճ-2014» միջազգային մրցաշարի բացման և փակման արարողություններին, Երևանում անցկացվող «Եվրոպայի շախմատի անհատական առաջնության» փակման արարողությանը:

Մշակույթի կենտրոնի և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գևորգյան հոգևոր ճեմարանի համատեղ ջանքերով արդեն 5-րդ տարին անընդմեջ կազմակերպվել է Սբ. Վարդանանց տոնին նվիրված միջոցառում: ՀՀ սփյուռքի նախարարության «Սփյուռքի ամառային դպրոց» ծրագրի շրջանակում ազգային երգի և պարի դասընթացներն արդեն 3-րդ տարին կազմակերպում է ԵՊՀ մշակույթի կենտրոնը:

Հաշվետու ուստարում կենտրոնի կինոակումբի և Հայաստանի ազգային կինոկենտրոնի կողմից «Կինոաշուն» փառատոնի շրջանակում մեկ ամիս շարունակ՝ յուրաքանչյուր չորեքշաբթի, ցուցադրվել են հայկական արտադրության նոր ֆիլմեր, որոնց ցուցադրությունից հետո քննարկումներ են եղել ֆիլմարտադրողների հետ (ռեժիսորներ, դերասաններ, պրոդյուսերներ, սցենարիստներ): Փառատոնի ավարտից հետո էլ ամիսը 2 անգամ ցուցադրվել են ինչպես հայկական, այնպես էլ արտասահմանյան արդեն հայտնի ու հռչակավոր ֆիլմեր, որոնց քննարկման ժամանակ հրա-

վիրվել են կինոգետներ: Փառատոնի շրջանակներում կազմակերպվել են նաև Սոս Սարգսյանի կինոյի ժառանգությանը նվիրված կինոդիտումներ, հանդիպում նրա ընտանիքի և Սոս Սարգսյանի անվան համազգային թատրոնի տնօրենի հետ: Ցուցադրվել են ժողովրդական դերասանի մասին և նրա իսկ մասնակցությամբ ֆիլմեր:

3. Շրջանավարտների և կարիերայի կենտրոն

Շրջանավարտների և կարիերայի կենտրոնի՝ 2013/2014 ուսումնական տարվա գործունեությունը կարելի է բաժանել հետևյալ բաժինների՝

- Համալսարան-ձեռնարկություն փոխգործակցության խթանում և ընդլայնում,
- Շրջանավարտների «HEN GEAR» պորտալի ստեղծման աշխատանքների համակարգում,
- Պարբերական բնույթ կրող սեմինար-դասընթացների կազմակերպում,
- Ուսանողների կարիերայի զարգացմանը նպաստող ձեռնարկությունների ներկայացուցիչների հետ հանդիպումների իրականացում,
- Ինտերնշիփերի և լրացուցիչ ուսանողական պրակտիկաների կազմակերպում,
- Աշխատանքային հնարավորությունների ընձեռում,
- Գիտագործնական հանդիպում, համագործակցության ընդլայնում:

Համալսարան-ձեռնարկություն փոխգործակցության ընդլայնման շրջանակներում՝ 2013 թ. համալսարանի գիտական խորհրդի հաստատմամբ ստեղծվել է ԵՊՀ գիտական խորհրդին կից ձեռնարկությունների հետ համագործակցությունն ապահովող մշտական հանձնաժողով: Հանձնաժողովի նախագահը ԵՊՀ ռեկտորն է, աշխատակազմում ընդգրկված են բոլոր պրոռեկտորները, ֆակուլտետների դեկաններ, վարչական ենթակառուցվածքների մի շարք ղեկավարներ, ուսանողական կառույցների ներկայացուցիչներ: Հանձնաժողովի քարտուղարությունն իրականացվում է Շրջանավարտների և կարիերայի կենտրոնի կողմից:

Հաշվետու ուստարվա ընթացքում ԵՊՀ գիտական խորհրդի կողմից հաստատվել են ձեռնարկությունների հետ աշխատանքները խթանող հետևյալ փաստաթղթերը.

- ԵՊՀ ձեռնարկությունների հետ համագործակցության ռազմավարության նախագիծ,
- Ձեռնարկությունների հետ ԵՊՀ ֆակուլտետի համագործակցության խորհուրդների կանոնակարգի նախագիծ,
- ԵՊՀ ուսանողների լրացուցիչ պրակտիկայի կազմակերպման կանոնակարգի նախագիծ:

Կենտրոնը 2013 թ-ից հանդիսանում է Եվրոպական միության ֆինանսավորմամբ ստեղծված «HEN GEAR» ծրագրի շրջանակներում հիմնված պորտալի շրջանավարտների գրանցման, ինչպես նաև վիճակագրական տվյալների հետազոտական մասի համակարգողը: Սույն ծրագիրը արդյունավետ գործիք է շրջանավարտ-գործատու անմիջական կապի հաստատման և մի շարք վիճակագրական տվյալների ձեռքբերման համար:

Շարունակելով սեմինար-դասընթացների կազմակերպման գործունեությունը՝ համագործակցության շրջանակներում մի շարք գործընկերների կողմից ԵՊՀ ուսանողների և շրջանավարտների համար կազմակերպվել են անվճար սեմինար-դասընթացներ, որոնց թվում հարկ է նշել «Այվազյան ընդ Փարթներս», «Ակադեմիքս Թիմ», «Մակադամիան ԱՌ», «ՄԻԻԴ» և «Գոյ» կազմակերպությունների հետ համատեղ անցկացված սեմինար-դասընթացները: Ընդհանուր առմամբ, կենտրոնի կողմից կազմակերպված սեմինար-դասընթացներին մասնակցել է 380 համալսարանական:

Ուսանողների կարիերայի զարգացմանը նպաստող հանդիպումների շարքում հարկ է առանձնացնել «Կոնվերսանկ» և «Ինգո Արմենիա» ընկերությունների ներկայացուցիչների հետ անցկացված հանդիպումները, որոնց ակտիվ մասնակցություն է ցուցաբերել տարբեր ֆակուլտետների 145 ուսանող:

Կենտրոնը կազմակերպել է նաև բազմաթիվ ինթերնշիփեր և պրակտիկաներ, որոնցից են, մասնավորապես, հետևյալները. 5 ուսանող՝ ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակում, 32 ուսանող՝ «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ-ում, 7 ուսանող՝ «Լույս» հիմնադրամում, 16 ուսանող՝ «Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա ՓԲԸ»-ում, 32 ուսանող՝ «ՎիվաՍել-ՄՏՍ» ընկերության տարբեր բաժիններում, 17 ուսանող՝ «Պրոկրեդիտ» բանկում, 5 ուսանող՝ ՀՀ կառավարությունում, 7 ուսանող՝ «Օրանժ Արմենիա» ՓԲԸ-ում և այլն: Կենտրոնն աջակցել է 150 ուսանողի տարատեսակ ինթերնշիփ-պրակտիկաների մասնակցությանը:

Հաշվետու շրջանում 25 ուսանող աշխատանքի է ընդունվել կենտրոնի հետ համագործակցող մի շարք ձեռնարկություններում:

2013/2014 ուսումնական տարում կենտրոնի կողմից ընդլայնվել են համագործակցության շրջանակները, որի արդյունքում կնքվել են մի շարք փոխգործակցության հուշագրեր: «Աշխատաշուկայի և բարձրագույն կրթության արդի փոխգործակցության խնդիրները» խորագրով հանրապետական գիտագործնական հանդիպման ընթացքում համագործակցության հուշագրեր են կնքվել հայաստանյան 9 բուհերի կարիերայի հարցերը համակարգող կառույցներ հետ: Համագործակցության հիմնական շրջանակներն են՝ ամենամյա հանրապետական միջբուհական աշխատանքի տոնավաճառի կազմակերպումը, գիտաժողովների, սեմինարների, խորհրդակցությունների իրականացումը, տեղեկատվության փոխանակումը և այլ ծրագրերի մշակումը:

Վերոնշյալով հանդերձ՝ ուսանողների և շրջանավարտների հետ տարվող աշխատանքներում ևս առկա են թերացումներ ու բացթողումներ: Մասնավորապես՝

- Դեռևս լիարժեք չեն կատարվում մասնագիտական աշխատաշուկայի պահանջարկի և հիմնական գործատուների բավարարվածության ուսումնասիրություններ, թույլ է շրջանավարտների զբաղվածության վիճակագրական բազան, ինչպես նաև շրջանավարտների հետ հետադարձ կապի մեխանիզմը:
- Ձեռնարկությունների հետ համագործակցության զարգացման բնագավառում թույլ է ֆակուլտետների անմիջական ներգրավումն ու մասնակցությունը:
- Հատուկ կարիքներ ունեցող (շարժունակության սահմանափակումներ ունեցող և այլ անձինք) ուսանողների համար անհրաժեշտ պայմանները գրեթե բացակայում են:
- Մի շարք կրթական ծրագրեր իրականացնող ստորաբաժանումներում (կենտրոններ, ինստիտուտ) դեռևս ամբողջովին ձևավորված չեն ուսանողական կազմակերպությունների համապատասխան օղակներ, այդ ստորաբաժանումների կառավարման գործընթացում ապահովված չէ ուսանողների մասնակցությունը:

- Ուսանողական կազմակերպությունների գործունեության պլանավորման բաղադրիչը, միջոցառումների նախապատրաստման և կազմակերպչական որոշ աշխատանքների փուլերը բարելավման կարիք ունեն:
- Մշակութային խմբերը մասնակցության հնարավորություն են ընձեռում խիստ սահմանափակ թվով ուսանողների կամ շրջանավարտների:

ՄՈՑԻԱԼԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Հաշվետու ժամանակահատվածում ԵՊՀ վարչակազմն ու արհեստակցական կազմակերպությունը մի շարք աշխատանքներ են իրականացրել սոցիալական քաղաքականության ուղղությամբ՝ առավել ուշադրություն դարձնելով համալսարանի աշխատակիցների հանգստի, առողջության պահպանման, սոցիալական այլևայլ խնդիրների լուծմանն ուղղված ծրագրերի իրագործմանը: Այդ նպատակով ԵՊՀ արհեստակցական կազմակերպությունն իր միջոցներից օգնության կարգով համալսարանի 388 աշխատակիցների, առանձին դեպքերում նաև սոցիալապես խիստ անապահով և հասարակական ակտիվություն ցուցաբերած ուսանողների հատկացրել է 16186000 (տասնվեց միլիոն հարյուր ութսունվեց հազար) դրամի օգնություն:

Աշխատողների և ուսանողների 2200 երեխաների և թոռնիկների համար կազմակերպվել և իրականացվել են ամանորյա միջոցառումներ՝ ամանորյա ներկայացման տոմսերի և նվերների հատկացմամբ, իսկ Հունիսի 1-ի՝ Երեխաների պաշտպանության օրվա առթիվ ձեռք է բերվել կրկեսային-երաժշտական ներկայացման 1000 տոմս:

Իրականացվել է Կանանց միջազգային օրվան՝ Մարտի 8-ին նվիրված համահամալսարանական միջոցառում 1587 կին աշխատակիցների համար՝ ծախսելով երեք միլիոն դրամ գումար:

Նպատակ ունենալով համալսարանականներին անմասն չթողնել քաղաքային մշակութային կյանքից՝ հաշվետու ժամանակահատվածում ձեռք է բերվել և կոլեկտիվի անդամներին անվճար հատկացվել է համերգային և թատերական տարբեր ներկայացումների 3431 տոմս:

Հաշվետու շրջանում համալսարանի աշխատակիցների, նրանց ընտանիքի անդամների և ուսանողների հանգիստը կազմակերպվել է միայն Ծաղկաձորի ուսումնաարտադրական բազայում, որտեղ հատկացված ուղեգրերով հանգստացել է մոտ 715 մարդ (3035 մարդ-օր): Իսկ Բյուրականի ուսամնաարտադրական բազայում ուսանողական խորհրդի աջակցությամբ սեփական ուժերով իրենց հանգիստն են կազմակերպել միայն ուսանողները: Իրականացվել է հանգստյան մեկնողների համար ուղեգրերի արժեքի մասնակի զեղչման անհատական մոտեցման համակարգ՝

սոցիալապես առավել անապահով աշխատակիցների նկատմամբ կիրառելով ուղեգրերի արժեքը 50 և 100 տոկոսով զեղչելու սկզբունքը:

Շարունակվել է 2010 թվականի հունիսի 1-ից ԵՊՀ արհեստակցական կազմակերպության կողմից մեկնարկած «Ծննդոգնություն համալսարանականներին» ծրագիրը: Հաշվետու ժամանակահատվածում 55 աշխատակցի ընդհանուր առմամբ հատկացվել է երեք միլիոն վեց հարյուր յոթանասունհինգ հազար դրամ գումար (21-ը առաջին երեխայի համար, 23-ը՝ երկրորդի, 9-ը՝ երրորդի, 1-ը՝ չորրորդի և 1-ը՝ երրորդ գույգ երեխայի համար):

2013/2014 ուսումնական տարում ԵՊՀ արհեստակցական կազմակերպությունը մի շարք ֆակուլտետների կոլեկտիվների համար մեկօրյա և բազմօրյա արշավներ է կազմակերպել դեպի Հայաստանի և Արցախի տարբեր տեսարժան վայրեր:

2011 թվականից ԵՊՀ արհեստակցական կազմակերպությունում գործող անվճար իրավաբանական խորհրդատվության ծառայությունից հաշվետու ժամանակաշրջանում օգտվել է թվով 113 ԵՊՀ աշխատակից՝ ստանալով իրավաբանական խորհրդատվություն ոչ միայն աշխատանքային, այլև քաղաքացիաիրավական, ընտանեկան, վարչական և այլ իրավական խնդիրների վերաբերյալ:

ԵՊՀ արհեստակցական կազմակերպության և «Ինգո Արմենիա» ապահովագրական ՓԲ ընկերության միջև կնքված փոխհամաձայնության շնորհիվ հաշվետու ուստարում ԵՊՀ 183 աշխատակից և ուսանող իրենց և ընտանիքի անդամներին պատկանող ավտոտրանսպորտային միջոցների ապահովագրությունը իրականացրել է սահմանվածից 10 % զեղչով: Սա և՛ ժամանակի, և՛ ֆինանսական խնայողություն է:

2013/2014 ուստարում իր ակտիվ գործունեությունն է շարունակել ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի արհիբյուրոն: Պարբերաբար կազմակերպվել են տարբեր միջոցառումներ:

Հաշվետու շրջանում շարունակվել է ակտիվ համագործակցությունը ինչպես Հայաստանի պետական բուհերի արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության, Հայաստանի արհմիությունների հանրապետական կոնֆեդերացիայի, այնպես էլ Եվրասիական համալսարանների արհմիութենական կազմակերպությունների ասոցիացիայի և Արհմիությունների համընդհանուր կոնֆեդերացիայի հետ:

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Հաշվետու ուսումնական տարում էապես բարելավվել է ԵՊՀ նյութատեխնիկական բազան: Մոտ 85 մլն դրամի չափով աճել է համակարգիչների, համակարգչային պահեստամասերի, պատճենահանող սարքերի, շարժական և պլանշետային համակարգիչների թվաքանակը: 33,5 մլն դրամի չափով գնվել է կահույք (պահարաններ, սեղաններ, աթոռներ, ուսանողական նստարաններ, գրատախտակներ և այլն), 7,5 մլն դրամի չափով՝ կենցաղային տեխնիկա (սառնարաններ, օդորակիչներ, փոշեկուլներ, հեռուստացույցներ, հեռախոսներ և այլն): Ձեռք են բերվել նաև քիմիական նյութեր (15 մլն դր.), բենզին, դիզվառելիք և քսայուղեր (17,9 մլն դր.), ավտոպահեստամասեր (5,5 մլն դր.), սպորտային գույք (2,8 մլն դր.), մասնագիտական հագուստ և բեմական հանդերձանք (2 մլն դր.), անվտանգության դարպասներ թիվ 7 ուսումնական մասնաշենքի համար (9,39 մլն դր.):

Հիմնովին վերակառուցվել է ԵՊՀ կապի համակարգը, ձեռք է բերվել 6 նոր թվային հեռախոսակայան, մեծացել է ներքին և ֆիքսված հեռախոսահամարների թիվը: Շարունակվել են ԵՊՀ մասնաշենքերը WiFi ազատ ինտերնետ կապով ապահովելու աշխատանքները:

Լայնածավալ աշխատանքներ են տարվել վերակառուցման և վերանորոգման ուղղությամբ (384,9 մլն դրամի չափով): Վերակառուցվել է թիվ 2 ուսումնական մասնաշենքի ձեղնահարկը, թիվ 1 ուսումնական մասնաշենքի դահլիճը վերակառուցվել է 2 հարկի, տանիքը՝ ձեղնահարկի: Վերանորոգման աշխատանքներ են իրականացվել թիվ 3 և 4 ուսումնական մասնաշենքերի մի շարք լսարաններում, ինչպես նաև թիվ 6 ուսումնական մասնաշենքի 1-ին և 0 հարկերում:

ԵՊՀ հյուրերի սպասարկման, գիտաժողովների, գիտաճանաչողական էքսկուրսիաների, ուսումնաարտադրական պրակտիկայի, մշակութային և ռազմահայրենասիրական միջոցառումների նպատակով ԵՊՀ ավտոպարկի կողմից կատարվել է շուրջ 300 ուղերթ:

ԵՊՀ ուսանողների ուսումնաարտադրական պրակտիկան լիարժեք կերպով կազմակերպել են Հանքավանի և Բյուրականի ուսումնաարտադրական բազաները,

իսկ աշխատակիցների և ուսանողների հանգիստը՝ Ծաղկաձորի ուսումնաարտադրական բազան:

ԵՊՀ բոլոր մասնաշենքերում բարձրացել է սանիտարական մաքրության որակը:

Հետևողական և բարեխիղճ աշխատանքների շնորհիվ ակնհայտ է դարձել համալսարանի շրջակայքի ծառերի խնամքի, կանաչապատման ու ծաղկազարդման արդյունքը: Կենտրոնական մասնաշենքի պուրակում ավելացվել է մոտ 2000 թուփ ու ծաղիկ:

ԵՊՀ անվտանգության ծառայության աշխատանքների կատարումը ստանձնել է «ԼԵԳԵՈՆ Ե.Ս.Է.» ՍՊԸ-ն՝ ըստ 2014 թ. ապրիլին կնքված պայմանագրի: Ծառայությունը համալրվել է լիցենզավորված մասնագետներով, ընդլայնվել են տեսահսկման ցանցն ու ժամանակակից տեխնիկական միջոցների կիրառումը:

ԵՊՀ ԻԶԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ

Հաշվետու ժամանակաշրջանում ԵՊՀ Իջևանի մասնաճյուղը իր գործունեությունն իրականացրել է՝ ելակետ ունենալով մասնաճյուղի 2011-2015 թթ. զարգացման ռազմավարական ծրագրի դրույթները: Դրանք մասնավորապես նպատակաուղղված են եղել մասնաճյուղում բարձրորակ կրթության տրամադրմանը, կրթական ծրագրերի կառուցվածքային և բովանդակային վերափոխմանը, հանրային ներգրավման և ծառայությունների զարգացմանը, կադրային ներուժի կատարելագործմանը և այլն:

2013/2014 ուստարում մասնաճյուղում իրականացվել են առկա ուսուցման 10 բակալավրական և 1 մագիստրոսական, հեռակա ուսուցման 7 բակալավրական կրթական ծրագրեր: Տարածաշրջանի աշխատաշուկայի պահանջներին համապատասխան իրականացվել է մասնագիտությունների ճշգրտում: Առաջնորդվելով ԵՊՀ մեթոդական ուղենիշներով՝ ֆակուլտետներում վերանայվել և բարելավվել են, իսկ նոր մասնագիտությունների համար կազմվել են կրթական վերջնարդյունքների վրա հիմնված կրթական ծրագրերը, լրամշակվել է ուսանողների համար նախատեսված «Կրեդիտային համակարգով ուսումնառության ուղեցույց և դասընթացների տեղեկագիրք»-ը:

Կարևորելով իրականացվող կրթական ծրագրերից արտաքին և ներքին շահակիցների բավարարվածությունը՝ իրականացվել են տարբեր ուսումնասիրություններ հարցումների և հանդիպումների միջոցով:

2013/2014 ուստարում մասնաճյուղի առկա ուսուցմամբ 10 մասնագիտությունների գծով բակալավրիատ ընդունվել է 205 ուսանող (39-ը՝ անվճար, 166-ը՝ վճարովի), մագիստրատուրա՝ 4 (2-ը՝ անվճար, 2-ը՝ վճարովի), իսկ հեռակա ուսուցմամբ 7 մասնագիտությունների գծով բակալավրիատ ընդունվել է 190 դիմորդ: Նշենք, որ առկա ուսուցման համակարգ ընդունված ուսանողների թիվը 27-ով գերազանցում է նախորդ ուստարվա ընդունելությունը:

Մասնաճյուղը շարունակաբար ընդլայնում է համագործակցությունը մարզի միջնակարգ և ավագ դպրոցների հետ՝ նպատակ ունենալով ոչ միայն պահպանել, այլև ընդլայնել ընդունելության համակազմը, ինչը մասնաճյուղի զարգացման ռազմավարական ծրագրի առանցքային դրույթներից մեկն է: Մասնաճյուղն պայմանա-

գրեր ունի մարզի 4 ավագ դպրոցների, բոլոր քոլեջների և Արարատի քոլեջի հետ: Պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչները պարբերաբար այցելում են մարզի դպրոցներ, ակնարկային դասախոսություններ կարդում աշակերտների համար, տալիս են անհրաժեշտ խորհրդատվություն, իսկ յուրաքանչյուր ուստարվա հոկտեմբեր և մարտ ամիսներին մասնաճյուղում կազմակերպվում են բաց դռների օրեր:

Հաշվետու ուստարում ԵՊՀ-ի հետ համատեղ, մասնաճյուղի դասախոսների և ուսանողների անմիջական մասնակցությամբ, դպրոցների բարձր դասարանների աշակերտների համար կազմակերպվել են հանրակրթական տարբեր առարկաների գծով օլիմպիադաներ, որոնց մասնակցել են մարզի 4 ավագ դպրոցների և 23 միջնակարգ դպրոցների 257 աշակերտներ, տարբեր պարգևատրումներ են ստացել 20 աշակերտներ, որոնցից 3-ը՝ 2-րդ և 3-րդ կարգի դիպլոմներ:

Ուսումնական գործընթացի բարելավման և արդյունավետ կազմակերպման համար մասնաճյուղում պարբերաբար գնահատվում է լսարանային ֆոնդի և ուսումնագիտական լաբորատորիաների վիճակի համապատասխանությունը կրթական ծրագրերի իրականացման պահանջներին: Անցած ուստարում կատարվել են լսարանների, արվեստանոցների, լաբորատորիաների և այլ ուսումնական տարածքների տեխնիկական վերազինման և վերանորոգման աշխատանքներ, պլանավորվել է դրանց նպատակային և կանոնավոր օգտագործումը: Ձևավորված է տեխնոլոգիական կարողությամբ էլեկտրոնային (On-line) ուսուցման 1 լսարան, տեսասարքով ապահովված է 2 լսարան, 3-րդի ձևավորման աշխատանքներն ընթացքի մեջ են, գործում է 3 համակարգչային սրահ, 4-րդ սրահի ձևավորման աշխատանքները ընթացքի մեջ են, այդ սրահներում գործում է ներքին միասնական ցանց: Հիմնվել են անզլերենի և ֆրանսերենի մասնագիտական լսարաններ: Գործում է ներքին համակարգչային ցանց, որը միավորում է մասնաճյուղի համակարգիչների մեծ մասը (122 համակարգիչ):

Մասնաճյուղի մասնագիտական կրթության որակի ապահովման բաժնի կողմից անցած ուստարվա 2-րդ կիսամյակում մշակվել է «Դասընթացի փաթեթ»-ի (պորտֆոլիո) կազմման մեթոդական ուղեցույցը, որի հիման վրա բոլոր դասախոսները կազմել են մեկական փաթեթ: Կրթական գործընթացում կիրառվող այդ ժամանակակից տեխնոլոգիան դասախոսի որոշակի ժամանակահատվածի գործունեության և ձեռքբերումների հավաքածու է, որը բովանդակում է դասընթացի պլանավորման և

իրականացման անհրաժեշտ նյութերը, դասավանդողի և ուսումնառողի ձեռքբերումների գնահատումը:

2013/2014 ուստարում մասնաճյուղի բակալավրիատի առկա և հեռակա ուսուցման համակարգերում սովորել են 1595, մագիստրատուրայում՝ 9 ուսանողներ, որոնցից 1463-ը՝ վճարովի ուսուցման համակարգում: Հաշվետու ժամանակահատվածում մասնաճյուղը տվել է 392 շրջանավարտ, որոնցից 226-ը՝ առկա ուսուցման համակարգից, 176-ը՝ հեռակա ուսուցման համակարգից: Առկա ուսուցման համակարգի 34 շրջանավարտ ուսումնառությունն ավարտել է գերազանցության դիպլոմով:

Ուսանողական նպաստներ, պետական և ներքուհական կրթաթոշակներ են հատկացվել մասնաճյուղի 112 ուսանողի: Անվանական կրթաթոշակ է ստացել 4 ուսանող: 1-ին կիսամյակում զեղչվել են առկա ուսուցման համակարգի 73, հեռակա ուսուցման համակարգի 60 ուսանողի ուսման վարձավճարները, 2-րդ կիսամյակում՝ համապատասխանաբար 97 և 69:

Հաշվետու ժամանակաշրջանում մասնաճյուղում դասավանդել են հիմնական և համատեղությամբ 107 դասախոսներ, այդ թվում՝ 3 պրոֆեսոր (2.6 %), 32 դոցենտ (26.1 %), 72 ասիստենտ և դասախոս (71.3 %), որոնցից գիտական աստիճանով՝ 3 դոկտոր և 50 թեկնածու, ընդ որում՝ գիտական աստիճան ունեցող դասախոսների հաշվեկշիռը հասել է 50 %-ի: Մասնաճյուղում դասախոսների միջին տարիքը 48 է. մինչև 35 տարեկան դասախոսների թիվը 30 է (28 %), 36-65 տարեկան՝ 68 (63.6 %), 65-ից բարձր՝ 9 (8.4 %): Կանայք կազմում են հիմնական դասախոսական կազմի 57 % -ը (61):

Լրիվ հաստիքային համարժեքով ուսանող-դասախոս հարաբերակցությունը 2013/2014 ուստարում կազմել է 20.54 (նախորդ ուստարում՝ 17.27): Դասախոսների տարեկան ուսումնական բեռնվածության համահամալսարանական միջինը հաշվետու ուստարում կազմել է 770 ժամ (նախորդ ուստարում՝ 693 ժամ):

Մասնաճյուղում կարևորվում են որակի ներքին ապահովման և որակի մշակույթի ձևավորման գործընթացները: Մասնաճյուղն առաջնորդվում է ԵՊՀ որակի ապահովման հայեցակարգով, կրթության որակի բնագավառում իր քաղաքականությամբ և ձևավորել է որակի ներքին ապահովման իր կազմակերպական կառուցվածքը: Մասնագիտական կրթության որակի ապահովման բաժնի հիմնական նպատակը մասնաճյուղում որակի ներքին ապահովման մեխանիզմների մշակումը և ներդրումն է, որակի շարունակական բարելավման խթանումը և կրթական ծառայու-

թյունների շուկայում բուհի բարձր մրցունակության ապահովումը: Բաժինը ներդնում է տարբեր գործընթացների արդյունավետության գնահատման գործիքներ և վերլուծելով ձեռքբերումներն ու բացթողումները՝ աջակցում մյուս կառույցների հետագա գործունեության բարելավմանը:

Հաշվետու ժամանակահատվածում բաժինն աշխատանքներ է իրականացրել մասնաճյուղում կրթության որակի ապահովման, ուսանողակենտրոն միջավայրի ձևավորման գործընթացների փաստաթղթային հիմքի ապահովման, հարցումների արդյունքների վերլուծության և համապատասխան գործընթացների բարելավմանը միտված առաջարկությունների ներկայացման, տարբեր խորհրդատվությունների կազմակերպման ուղղությամբ: Մասնաճյուղում մշակվել և ներդրվել են մի շարք քաղաքականություններ, կարգեր, ձևաթղթեր:

Համալրվել է մասնաճյուղի 2009-2014 թթ. գնահատման առանցքային ցուցանիշները (ԳԱՑ), որում ներկայացված են մասնաճյուղի վերջին 4-5 տարիների գործունեությունը, ձեռքբերումները և տարբեր խնդիրների ինքնագնահատումը:

Մասնաճյուղը կարևորում և աջակցում է դասախոսական կազմի գիտամանկավարժական արդյունավետ գործունեությանը: Հաշվետու ուստարում թեկնածուական ատենախոսություն են պաշտպանել մասնաճյուղի 5 երիտասարդ դասախոսներ, որին նպաստում է նաև մասնաճյուղի «Ակունք» գիտական հոդվածների ժողովածուն, որտեղ անվճար տպագրվում են աշխատակիցների հոդվածները:

Մասնաճյուղի դասախոսները «Կրեդիտային համակարգով դասախոսների որակավորման բարձրացման» կրթագիտական ծրագրի շրջանակներում շարունակում են հավաքել սահմանված կրեդիտները՝ մասնակցելով մայր բուհի աջակցությամբ ու սեփական նախաձեռնությամբ մասնաճյուղում պարբերաբար իրականացվող որակավորման բարձրացման դասընթացներին: Հաշվետու ուսումնական տարում որակավորման բարձրացում են անցել 95 դասախոսներ՝ մասնագիտական, մանկավարժական, համակարգչային և այլ ուղղություններով:

Քանի որ մասնաճյուղը հիմնականում իրականացնում է բակալավրական կրթություն, ուստի հետազոտական նախագծեր, գիտահետազոտական ծրագրեր չեն իրականացվում, սակայն մասնաճյուղի դասախոսներն ակտիվ մասնակցում են հանրապետական և միջազգային բազմաթիվ գիտաժողովների, գիտական ծրագրերի: Մասնաճյուղի դասախոսները (հիմնականում ԵՊՀ-ից հրավիրված) մասնակցում են

տարբեր հետազոտական նախագծերի (10 դասախոսներ): Ընդհանուր տնտեսագիտության ամբիոնի 2 դասախոսներ ֆակուլտետի բարձր կուրսի ուսանողների հետ համատեղ ընդգրկված են «Միգրացիայի և մարդկային կապիտալի վերարտադրության փոխառնչությունները ՀՀ-ում» միջազգային դրամաշնորհային ծրագրում:

Հաշվետու ուստարում դասախոսների կողմից հրատարակվել են 6 մենագրություն, 8 ուսումնական և ուսումնամեթոդական ձեռնարկ, 98 գիտական հոդված և 15 զեկուցումների թեզիս:

Դասախոսների (հատկապես երիտասարդ) գիտական և մասնագիտական գործունեությունը գտնվում է մասնաճյուղի տնօրենության ուշադրության կենտրոնում: Աջակցվում և խրախուսվում են նրանց ինքնակրթության և ինքնազարգացման գործընթացները (գործուղումներ տարբեր վերապատրաստման դասընթացների, պարզևատրումներ (78 դասախոս), աջակցություն դասախոսներին ուսումնական և մեթոդական ձեռնարկների անվճար հրատարակության գործում (4 ձեռնարկ) և այլն):

Հարկ է նշել, որ առկա և հեռակա ուսուցման համակարգերում դասախոսների մեծամասնությունը դասընթացները վարում է տեղեկատվական և տեխնիկական համապատասխան միջոցների և համակարգերի կիրառմամբ:

Մասնաճյուղն իրականացրել և շարունակում է իրականացնել մի շարք հանրապետական և միջազգային համագործակցային ծրագրեր «Թոշակառու մանկավարժներն առանց սահմանների» (GREF) հասարակական կազմակերպության, «Զիկատար» բնապահպանական կենտրոն» ՊՈԱԿ-ի, Եվրամիության կողմից ֆինանսավորվող և WWF-ի կողմից իրականացվող «Հայաստան» ՊՈԱԿ-ի հետ, ինչպես նաև Մոսկվայից հրավիրված ՀՀ ժողովրդական վարպետ Յու. Ս. Հովսեփյանի հետ: Անց են կացվել վերապատրաստման դասընթացներ, տրամադրվել են արժեքավոր բուհական դասագրքեր և մեթոդական ուղեցույցներ, ֆինանսական օգնություն է տրամադրվել «Ֆրանսերեն լեզու և գրականություն» մասնագիտության բարձր առաջադիմությամբ սոցիալապես անապահով ուսանողներին, բարձր կուրսերի ուսանողների համար իրականացվել են գործնական պարապմունքներ և վարպետության դասեր և այլն:

2013/2014 ուստարում կիրառական արվեստի ֆակուլտետի դասախոսների և ուսանողների կողմից մասնաճյուղում, Իջևանի քաղաքային պատկերասրահում, ԵՊՀ-ում, ՀՀ նկարիչների միությունում կազմակերպվել են շուրջ 12 ցուցահենդեսներ՝ նվիրված Մեծ եղեռնի անմեղ զոհերի հիշատակին, Կանանց միջազգային տոնին,

Գեղեցկության և մայրության տոնին, Շուշիի ազատագրմանը, ԵՊՀ-ի կազմավորման 95-ամյակին և այլն:

Տարբեր կազմակերպությունների և հիմնական գործատուների հետ իրականացվել են փոխշահավետ համագործակցային հանդիպումներ՝ ուսանողների արտադրական և մանկավարժական պրակտիկաները առավել արդյունավետ իրականացնելու համար: Ակտիվացվում և ընդլայնվում է համագործակցությունը մասնաճյուղի հիմնական գործատու և նվիրատու կազմակերպությունների հետ՝ VivaCell MTS, Orange, ՀՕՖ և այլն:

Մասնաճյուղն իր հեղինակության պահպանման և ամրապնդման, հասարակական վարկանիշի բարձրացման նպատակով վարում է տեղեկատվության տարածման, գովազդային-լրատվական, քարոզչական համապատասխան քաղաքականություն:

ԵՊՀ ԻՄ-ի բոլոր ստորաբաժանումների գործընթացների, իրադարձությունների, կազմակերպված միջոցառումների, հարցազրույցների, անհրաժեշտ հայտարարությունների, ուսանողական կյանքին և միջավայրին վերաբերող նորությունների լուսաբանումը, տեղեկատվության մատչելիությունն ապահովվում է մասնաճյուղի ինտերնետային կայքի /<http://www.ijevan.yasu.am/>, «Facebook» սոցիալական ցանցում գործող ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի էջի միջոցով: Մասնաճյուղի մասին տեղեկատվություն ներկայացվում է նաև տարբեր տեղեկագրքերում, ժողովածուներում, կայքերում:

Կայքում առանձին բաժնով տեղադրվում են ՀՀ ԲՈՀ-ի կողմից հաստատված «Ակունք» գիտական հոդվածների բոլոր ժողովածուները (2013/2014 ուստարում՝ 2 ժողովածու), խորհրդատվություններ և հայտարարություններ շրջանավարտների համար: Կայքը պարբերաբար կատարելագործվում է: Այն այսօր ունի 156 էջ, տեղադրված է 710 նյութ՝ հայտարարություններ, նորություններ և այլն, 2700 ֆայլ, որոնցից 1923-ը նկարներ են: Նշենք, որ կայքի վարկանիշը բավականին բարձր է, ինչը բնութագրվում է նրա այցելությունների քանակով (միայն 2013/2014 ուստարում՝ 424234):

Մասնաճյուղը համագործակցում է 1-ին լրատվականի թղթակիցների հետ և լուսաբանում տեղի ունեցած կարևոր իրադարձությունները: Տեղական լրատվական ալիքով նույնպես ներկայացվում են մասնաճյուղում անցկացված միջոցառումները:

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում տարեցտարի բարձրացվում է ներքին և արտաքին տեղեկատվական ռեսուրսների մատչելիությունը, որին աջակցում է անվճար ինտերնետ կապը, էլեկտրոնային ընթերցասարահի հիմնումը, էլեկտրոնային պաշարների

հարստացումը: Ուսանողներն ազատորեն օգտվում են ինչպես ԵՊՀ, այնպես էլ հանրապետության ֆունդամենտալ գրադարանների էլեկտրոնային պաշարներից: 2014 թ. հունվարին ստեղծվել է ԵՊՀ ԻՄ գրադարանային խորհուրդը: 2013 թ. սեպտեմբերից գրադարանը վարում է իր իսկ իրականացրած տարատեսակ ծառայությունների ամենօրյա հաշվառում՝ վիճակագրական վերլուծություն իրականացնելու նպատակով: Նշենք, որ 2013 թ. մասնաճյուղը ձեռք է բերել 1059 նոր գիրք, 120 ամսագիր:

Մասնաճյուղում ուսանողական և ուսումնագիտական միջավայրի ձևավորման ուղղությամբ իրենց ներդրում ունեն ուսանողական համապատասխան կառույցները: Ուսանողական խորհուրդը համակարգված աշխատում է ուսանողների հետ: Նրանք կազմակերպում են բազմաթիվ միջոցառումներ՝ նվիրված տարբեր տոների, հիշատակների, մասնակցում են նաև ԵՊՀ ուսանողական ձեռնարկումներին, տարբեր մարզական և մշակութային միջոցառումների:

2014 թ. մայիսին մասնաճյուղի ուսանողները մասնակցել են «WRITE ON! COMPETITION 2014» միջազգային մրցույթին (12 պետությունների մասնակցությամբ), որի ազգային փուլում մասնաճյուղի 3 ուսանողուհիներ գրավել են 1-ին և 2-րդ տեղերը, իսկ միջազգային փուլում մասնաճյուղի «Անգլերեն լեզու և գրականություն» մասնագիտության ուսանողուհին գրավել է 1-ին տեղը:

Հայաստանի երիտասարդական հիմնադրամի կազմակերպած ամենամյա «Հայկյան 2013» մրցանակաբաշխության «Լավագույն մարզային ուսանողական ինքնակառավարման մարմին» անվանակարգում հաղթող է ճանաչվել մասնաճյուղի ՈԻԳԸ-ն:

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղը, իր գործունեության բոլոր ոլորտներում, մշտապես գտնվում է ԵՊՀ-ի ուշադրության կենտրոնում՝ ունենալով նրա աջակցությունն ու հովանավորությունը:

* * *

Հարգելի՛ ներկաներ, ձեզ ներկայացվեց Երևանի պետական համալսարանի 2013/2014 ուսումնական տարվա գործունեության ամփոփ պատկերը, որով փաստվեց, որ մայր բուհն իր գործունեության այդ ժամանակահատվածում ունեցել է զգալի ձեռքբերումներ, հասել լուրջ հաջողությունների, որոնք կազմակերպված ու նպատակասլաց աշխատանքի արդյունք են: Միաժամանակ, եղել են նաև բազմաթիվ բացթողումներ ու վրիպակներ, որոնք աշխատանքի մեջ թերանալու հետևանք են, և որոնք կարելի է և անհրաժեշտ է վերացնել, շտկել: Այնուհանդերձ, Երևանի պետական համալսարանի հաշվետու ուստարվա գործունեությունը՝ բոլոր ուղղություններով, միտված է եղել մայր կրթօջախի զարգացմանը, հանրապետական և միջազգային գիտակրթական ասպարեզում նրա դերի և հեղինակության բարձրացմանը, հայրենի կրթության և գիտության ավանդներին հավատարիմ մնալով՝ ժամանակի հրամայականին համահունչ գործելուն:

ԵՊՀ ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԵՐԵՎՈՒՅԹՆԵՐԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ 2013-2014 ԹԹ.

ՀԱՄԱԼԻՐ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ

Կոռուպցիոն երևույթների դեմ պայքարի 2013-2014 թթ. ծրագրի մասին

2009 թ. դեկտեմբերի 25-ին ԵՊՀ խորհրդի կողմից հաստատված «ԵՊՀ զարգացման ռազմավարական ծրագրով (2010-2014 թթ.)» հակակոռուպցիոն միջոցառումները համարվել են գործունեության կարևոր ուղղություն: Ռազմավարական նպատակների և ընթացիկ գերակայությունների շարքում նախատեսված է առանձին խնդիր՝ նվազեցնել կոռուպցիոն ռիսկերը, նպաստել համալսարանում բարոյահոգեբանական առողջ մթնոլորտի հետագա զարգացմանը: Հարկ է նշել նաև, որ կրթության որակի բարձրացմանը, հանրային կապերի զարգացմանը, կադրային քաղաքականությանը, տեղեկատվական ռեսուրսների զարգացմանը, կառավարման արդյունավետության բարձրացմանը, ուսանողական ինքնավարության ընդլայնմանը և մի շարք այլ հարցերին վերաբերող ռազմավարության բազմաթիվ դրույթներ միաժամանակ ունեն հակակոռուպցիոն կարևոր ազդեցություն:

Նպատակ ունենալով առավել արդյունավետ դարձնել կոռուպցիոն երևույթների դեմ պայքարը՝ 2011 թ. մարտի 31-ին ԵՊՀ գիտական խորհուրդը հաստատեց 2011-2012 թթ. «ԵՊՀ կոռուպցիոն երևույթների դեմ պայքարի համալիր միջոցառումների ծրագիրը», իսկ 2013 թ. մայիսի 30-ին՝ «ԵՊՀ կոռուպցիոն երևույթների դեմ պայքարի 2013-2014 թթ. համալիր միջոցառումների ծրագիրը»: Վերջինս ապահովում է նախորդ (2011-2012 թթ.) հակակոռուպցիոն ծրագրով նախանշված աշխատանքների շարունակական բնույթը և հիմնված է այդ ծրագրի իրականացման ընթացքում ԵՊՀ-ի կողմից ձեռք բերված դրական փորձի վրա:

ԵՊՀ՝ կոռուպցիոն երևույթների դեմ պայքարի 2013-2014 թթ. համալիր միջոցառումների ծրագիրը, ըստ էության, ԵՊՀ զարգացման ռազմավարական ծրագրի հետ համատեղ Երևանի պետական համալսարանում կոռուպցիոն երևույթների դեմ արդյունավետ պայքարի հիմնական ուղենիշն է, քանի որ դրանում արտացոլված են հա-

մալսարանական միջավայրում գոյություն ունեցող կոռուպցիոն դրսևորումների դեմ նպատակային պայքարի հիմնական միջոցառումները, դրանց իրականացմամբ ակնկալվող ուղղակի արդյունքները, սահմանված են պատասխանատու ստորաբաժանումները, պաշտոնատար անձինք և գործողությունների իրականացման ժամկետները: Ծրագիրը պահանջում է հակակոռուպցիոն գործիքակազմի ճշգրիտ ընտրություն, արդյունավետ ու համապարփակ միջոցառումների համալիր իրականացում՝ հնարավորինս ապահովելով հստակ, գնահատելի և իրատեսական արդյունքներ:

ԵՊՀ կոռուպցիոն երևույթների դեմ պայքարի 2013-2014 թթ. համալիր միջոցառումների ծրագրով սահմանված է, որ ԵՊՀ հակակոռուպցիոն միջոցառումների շրջանակը ներառում է ուղղակի միջոցառումները (հակակոռուպցիոն խնդիրներին ուղղակիորեն առնչվող) և անուղղակի միջոցառումները (աշխատանքներ, որոնք իրականացվում են այլ հիմնախնդիրների լուծման նպատակով, սակայն միաժամանակ կարող են զգալի հակակոռուպցիոն ազդեցություն ունենալ): Վերոնշյալ ծրագրով սահմանված են նաև ԵՊՀ-ում առկա կոռուպցիոն ռիսկերը (գիտելիքի գնահատում, մուտք դեպի կրթական համակարգ, ուսանողի շարժունակություն, անձնակազմի կառավարում և համալսարանի ֆինանսական կառավարում):

Ծրագրի մշակման և համապատասխան միջոցառումների իրականացման աշխատանքները համակարգվում են ԵՊՀ ռեկտորի 22.02.2013 թ. հրամանով ստեղծված ԵՊՀ հակակոռուպցիոն միջոցառումները համակարգող հանձնաժողովի կողմից: Հանձնաժողովի աշխատանքները ղեկավարում է ԵՊՀ ռեկտորը (հանձնաժողովի նախագահ), իսկ հանձնաժողովի կազմում ընդգրկված են ԵՊՀ պրոռեկտորները, ուսումնամեթոդական վարչության պետը, հասարակայնության հետ կապերի և լրատվության վարչության պետը, որակի ապահովման կենտրոնի տնօրենը, արհեստակցական կազմակերպության նախագահը, գիտական քարտուղարը, իրավաբանական բաժնի վարիչը, ուսանողների հետ տարվող աշխատանքների բաժնի վարիչը, որոշ ֆակուլտետների ղեկաններ, դասախոսներ, ուսանողական խորհրդի և ուսանողական գիտական ընկերության ներկայացուցիչները:

ԵՊՀ ռեկտորի կողմից յուրաքանչյուր տարի ներկայացվող ԵՊՀ՝ նախորդ ուսումնական տարվա գործունեության մասին զեկույցում հակակոռուպցիոն միջոցառումների կատարողականը՝ որպես առանձին աշխատանքային ուղղություն, ներկայացվում է 2010/2011 ուսումնական տարվանից:

**Կոռուպցիոն երևույթների դեմ պայքարի ծրագրի իրականացումն ըստ
համապատասխան ուղղությունների**

Համալսարանականների կողմից բազմիցս ընդգծվել է, որ բուհական համակարգում կոռուպցիոն երևույթների դեմ պայքարն իր բնույթով բավականին բարդ գործընթաց է, ներառում է ինչպես օբյեկտիվ, այնպես էլ սուբյեկտիվ հիմնախնդիրներ՝ միաժամանակ փոխկապակցված լինելով մի շարք այլ՝ բարձրագույն կրթության հետ չառնչվող հիմնահարցերի հետ: Այնուամենայնիվ, նմանօրինակ ծրագրերի արդյունավետությունը կախված է համալսարանականների ակտիվ մասնակցությունից, համալսարանի կոլեկտիվի անդամների կողմից (դասախոսներ, ուսանողներ, վարչական աշխատակիցներ) խնդրի կարևորության գիտակցումից և համագործակցության պատրաստակամությունից:

Թեև իրականացված բազմաթիվ միջոցառումներն ու աշխատանքները փոխկապակցված են և առնչվում են համալսարանական գործունեության տարբեր բնագավառներին, այնուամենայնիվ ստորև ներկայացվում է դրանց համառոտ նկարագրությունը՝ ըստ առանձին ուղղությունների:

Գիտելիքների գնահատում, ուսումնական գործընթացի վերահսկում.

փոխաստեղծում, տեղափոխություններ

Ուսումնական տարվա յուրաքանչյուր կիսամյակի համար ՀՀ կրթության և գիտության նախարարության և ԵՊՀ ներքին իրավական ակտերի հիման վրա կազմվել է ուսումնական գործընթացի կազմակերպման ժամանակացույց՝ ուսումնական գործընթացը հստակ կանոնակարգելու համար:

Ուսանողների գիտելիքների գնահատման գործընթացում հնարավոր կոռուպցիոն ռիսկերի նվազեցման նպատակով ԵՊՀ ուսումնամեթոդական վարչությունն իր գործունեությունն իրականացրել է՝ հետևելով ՀՀ կառավարության, ԿԳ նախարարության և ԵՊՀ սահմանած կանոնակարգերին ու պահանջներին: 2013/2014 ուստարվա ընթացքում, հատկապես քննաշրջաններին նախորդող ժամանակահատվածում, ուսանողների և դասախոսների շրջանում աշխատանքներ են տարվել քննությունների

անցկացման ընթացակարգերի, ուսանողների պարտականությունների և իրավունքների վերաբերյալ:

Յուրաքանչյուր քննաշրջանից հետո ուսումնամեթոդական վարչության բակալավրիատի, մագիստրատուրայի և ուսումնական գործընթացի վերահսկման բաժինները ֆակուլտետներում ստուգել են քննական տեղեկագրերում ամրագրված գնահատականների և գրավոր աշխատանքների տետրերի գնահատականների համապատասխանությունը, ինչպես նաև ուսանողների՝ դասերին մասնակցության միավորի համապատասխանությունը տեղեկագրի միավորին: Կիսամյակի ընթացքում բոլոր քննությունների արդյունքները սքանավորվել են ԵՊՀ-ում գործող «Supervision» համակարգի օգնությամբ, որն անհնարին է դարձնում գնահատականների կամայական փոփոխությունները:

Քննական բոլոր տոմսերը պարտադիր ստորագրվել են ամբիոնների վարիչների կողմից՝ ապահովելով դասընթացի ծրագիր-քննական հարցաշար-քննական տոմս կապը:

Լուծարքային շրջանի բոլոր քննությունները, այդ թվում առարկայական տարբերությունների վերահանձնումները կատարվել են ռեկտորի հրամանով ստեղծված հանձնաժողովներով:

Ինչպես և նախորդ տարիներին, ԵՊՀ բակալավրիատի և մագիստրատուրայի բոլոր մասնագիտությունների ամփոփիչ ատեստավորումը (ամփոփիչ քննություն, ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզի պաշտպանություն) իրականացվել է տեսաձայնագրմամբ: Բողոքարկումներն անցկացվել են տեսանյութի քննարկման հիման վրա: Լրացուցիչ աշխատանքներ են տարվել նոր լսարաններում տեսախցիկներ տեղադրելու ուղղությամբ: Աշխատանքներ են տարվել նաև ձայնագրման որակը բարձրացնելու ուղղությամբ, որը որոշ լսարաններում դեռ բավարար չէ:

Հնարավոր կոռուպցիոն ռիսկերի նվազեցման նպատակով ԵՊՀ ուսումնամեթոդական վարչության ստորաբաժանումները (բակալավրիատի, մագիստրատուրայի, ուսումնական գործընթացի վերահսկման, կազմակերպչական, պրակտիկայի) իրականացրել են ստուգումներ ԵՊՀ-ում ուսումնական գործընթացին առնչվող գործառույթների շրջանակներում: Կիսամյակի ընթացքում կատարվել են մատյանների ստուգումներ (լրացումներ, բացակայությունների նշումների առկայություն, դասա-

խոսի ստորագրություն): Քննաշրջանի ընթացքում և քննաշրջանից հետո ստուգվել են քննական տոմսերի առկայությունը, ծրագրերին նրանց համապատասխանելիությունը և ամբիոնի վարիչների կողմից ստորագրված և կնքված լինելը:

Ուսումնական տարվա ընթացքում ուսումնական գործընթացի վերահսկման բաժնի կողմից ստուգվել են դասերի կայացման ընթացքը, դասախոսների և ուսանողների բացակայությունները և փոխարինումները: Ստուգումների արդյունքում արձանագրված անհարգելի բացակայողների ցուցակը ներկայացվել է հաշվապահություն՝ պահումներ կատարելու համար: Ուսանողների բացակայությունների պատճառով չկայացած դասերի վերաբերյալ քննարկումներ են կազմակերպվել ֆակուլտետների ղեկանների հետ:

Փոխատեղման արդյունքները բոլոր ֆակուլտետներում հրապարակվել են՝ փակցվելով ֆակուլտետների հայտարարությունների տախտակներին:

ԵՊՀ-ում ուսանողների տեղափոխությունները մեկ մասնագիտությունից մեկ այլ մասնագիտություն իրականացվել են «ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորողների ակադեմիական շարժունության», իսկ հեռացումները և վերականգնումները՝ «ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսանողների հեռացման (ազատման) և վերականգնման» կարգերի համաձայն: Տեղափոխությունները քննարկվել են մանդատային հանձնաժողովներում:

Այլ պետությունների բուհերի հետ ուսանողների փոխանակումների համար դիմած հավակնորդների մրցույթներն իրականացվել են հանձնաժողովների միջոցով: Հանձնաժողովներում ընդգրկվել են պրոռեկտորները, ֆակուլտետների ղեկանները կամ փոխղեկանները և համապատասխան մասնագիտության ծրագրերի ղեկավարները:

Մշակվել է «ԵՊՀ ուսանողի գնահատման ուղեցույցը» (35 էջ), որն անդրադառնում է այնպիսի հարցերի, ինչպիսիք են գնահատման չափանիշները և դրանց որոշումը, գնահատման մեթոդները և դրանց ընտրությունը, գնահատման չափորոշիչները և դրանց սահմանումը, չափորոշիչների մակարդակների որոշումը և այլն: Մշակված մեթոդաբանության հիման վրա իրականացվել է ԵՊՀ մոտ 50 դասախոսների վերապատրաստում:

Մշակվել է «ԵՊՀ ուսանողների գիտելիքների գնահատման բողոքարկման ընթացակարգը» (2 էջ): Ուսանողների գիտելիքների գնահատման և ստուգման լրամշակ-

ված կարգում ներկայացվել են գնահատման համակարգի հիմնադրույթները, գնահատման մեթոդաբանությունը, գնահատման կարգի կիրարկման ընթացակարգը, գնահատման սանդղակը և նշագրման ձևերը, ուսանողի ակադեմիական տեղեկագիրը և ուսման առաջադիմության չափման ձևերը: Մշակվել է «ԵՊՀ ուսումնառության ռեսուրսները և ուսանողների աջակցության ծառայությունները. Գնահատում և բարելավում» փաստաթուղթը: Այն ներառում նաև ուսումնառության ռեսուրսների և ուսանողների աջակցության ծառայությունների բարելավման խնդիրների կազմը և միջոցառումների (գործողությունների) ծրագիրը:

*Քարոզչական աշխատանքների իրականացում, տեղեկացվածության
մակարդակի բարձրացում*

Համալսարանականները հանդես են գալիս որպես մեկ միասնական կոլեկտիվ, որից էլ բխում է բուհում բազմաթիվ հարցերի և խնդիրների՝ կառուցվածքային ստորաբաժանումների կողմից համատեղ լուծումը: Այս առումով հակակոռուպցիոն միջոցառումների պլանում կարևորվել է ընդհանուր դրական մթնոլորտի ձևավորումը, որին միտված են եղել իրականացված մի շարք քայլեր:

Համալսարանականների շրջանում կոռուպցիոն երևույթների նկատմամբ անհանդուրժողական մթնոլորտ ձևավորելու նպատակով իրականացվել են մի շարք միջոցառումներ, որոնք միտված են եղել վերացնելու առկա մի շարք խնդիրների հանդեպ անտարբերությունը և խթանելու ուսանողների ու դասախոսների ակտիվությունը հակակոռուպցիոն պայքարում: Ուսանողների մասնակցությունը հակակոռուպցիոն գործընթացին էական նշանակություն ունի վերջինիս արդյունավետության համար. այդ իսկ պատճառով մշտապես միջոցառումներ են ձեռարկվում ուսանողների ակտիվությունը բարձրացնելու նպատակով:

Ռեկտորի, պրոռեկտորների և դեկանների՝ ուսանողների հետ հանդիպումների, գիտական խորհրդի և ռեկտորատի նիստերի և մի շարք այլ միջոցառումների ժամանակ առանձնակի ուշադրություն է դարձվել կոռուպցիոն երևույթների նկատմամբ անհանդուրժողականության ձևավորմանը:

Ուսանողների տեղեկատվածությունն ապահովելու նպատակով ԵՊՀ կայքում տեղադրված է կրեդիտային համակարգով ուսումնառության ուղեցույցը և դասըն-

թացնների տեղեկագիրքը և՛ բակալավրիատի, և՛ մագիստրատուրայի առկա և հեռակա ուսուցման համակարգով սովորող ուսանողների համար:

Վերջին տարիներին ֆակուլտետներում ներդրված է ուսումնական խորհրդատուների (կուրատորների) համակարգը, որի նպատակն է աջակցել ուսանողներին (առավելապես ցածր կուրսերի)՝ լուծելու համալսարանում ուսումնառության ընթացքում ծագող տարբեր խնդիրներ:

Քննաշրջանից հետո քննությունների արդյունքները փակցվել են ֆակուլտետներում, իսկ փոխատեղման արդյունքները հրապարակել են՝ գործող կարգի համաձայն: Ամփոփույց քննությունների արդյունքները քննություններից հետո առավելագույնը մեկ շաբաթվա ընթացքում հրապարակվել են ֆակուլտետների կայքերում:

Անվանական կրթաթոշակ ստացող ուսանողների թեկնածությունները քննարկվել են ֆակուլտետների գիտական խորհուրդներում և հաստատվել են ԵՊՀ գիտական խորհրդի նիստում: Անվանական կրթաթոշակ ստացող ուսանողների ցանկը հրապարակվել է ԵՊՀ կայքում:

Հեռակա ուսուցման ընդունելության քննությունների պատասխանների 30 ձևաթուղթ օրական երկու անգամ օպերատիվ կերպով տեղադրվել է կայքում:

Համալսարանական համակազմի իրավագիտակցության և իրազեկվածության մակարդակը բարձրացնելու նպատակով ակտիվորեն օգտագործվել են համալսարանի ինտերնետային ռեսուրսների հնարավորությունները՝ ընդունվող ներքին իրավական ակտերը էլեկտրոնային փոստի միջոցով ուղարկվել են բոլոր կառուցվածքային ստորաբաժանումներին, ինչպես նաև տեղադրվել են իրավական ակտերի և փաստաթղթերի պահպանման և դյուրին ներկայացման նպատակով հատուկ ստեղծված ԵՊՀ փաստաթղթերի կայքում (<http://doc.ySU.am>):

Հակակոռուպցիոն աշխատանքներում մեծ նշանակություն ունի երկկողմ պատշաճ շփումների մշակույթի արմատավորումը: Այս նպատակով արդիականացվել են ԵՊՀ էլեկտրոնային փոստի սերվերային համակարգերը, գրեթե բոլոր դասախոսներին և ուսանողներին տրամադրվել է համալսարանական էլեկտրոնային փոստի հասցե:

Շարունակվել է ֆակուլտետների կայքերի զարգացման աշխատանքները: Հնարավորություն է ընձեռվել ընդլայնելու կայքի օգտագործումն ուսումնական գործընթացում: Նախատեսված է դասընթացների ծրագրերը և հարցաշարերը տեղադրել ֆակուլտետի ինտերնետային կայքում:

Հետևողական աշխատանքներ են տարվել հանրային կապերի, ԵՊՀ-ին վերաբերող տեղեկատվության մատչելիության և թափանցիկության ապահովման ուղղությամբ: «Երևանի համալսարան» ամսաթերթի համարներում պարբերաբար տպագրվել են կոռուպցիոն խնդիրների կանխարգելմանը վերաբերող նյութեր:

Հիմնովին նորացվել է ԵՊՀ պաշտոնական ինտերնետային կայքը՝ www.ysu.am հասցեով, որը վերափոխվել է պորտալի՝ նոր դիզայնով և ծրագրային լուծումներով: Պորտալում առկա են 55 կայքեր ու ենթակայքեր: ԵՊՀ կայքի միջոցով իրականացվում է տեղեկատվության տրամադրման՝ առցանց հետադարձ կապի աշխատանք: Բոլոր անձինք ունեն առցանց հարց տալու հնարավորություն (կայքում գործում է «Հարց-պատասխան» բաժինը, որի միջոցով միայն 2014 թ. ընթացքում ստացվել է շուրջ 1000 նամակ, որոնց ԵՊՀ տարբեր ստորաբաժանումների օգնությամբ հնարավորինս սեղմ ժամկետներում տրվել են սպառիչ պատասխաններ): Հետադարձ կապ է ապահովվում նաև ԵՊՀ ֆեյսբուքյան էջի և էլեկտրոնային փոստի միջոցով:

Երևանի պետական համալսարանի ներկայացուցիչները հաշվետու ժամանակահատվածում պարբերաբար մասնակցել են հայաստանյան և միջազգային տարբեր կազմակերպությունների կողմից կազմակերպված հակակոռուպցիոն սեմինար-քննարկումներին, ներկայացրել են «ԵՊՀ կոռուպցիոն երևույթների դեմ պայքարի համալիր միջոցառումների ծրագրի (2013-2014 թթ.)» դրույթները, կատարված աշխատանքները:

ՀՀ կրթության և գիտության նախարարության ու ԵԱՀԿ երևանյան գրասենյակի համատեղ կազմակերպած «Հայաստանում բարձրագույն կրթության կարիքներն ու մարտահրավերները» խորագրով միջազգային համաժողովում ներկայացվել է Երևանի պետական համալսարանի հակակոռուպցիոն փորձը:

Ուսանողական հարցումներ

Յուրաքանչյուր կիսամյակ իրականացվել են ԵՊՀ-ում դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողական հարցումներ (ուսուցման հետ առնչվող տարբեր ասպեկտներից բավարարվածության գնահատում), ինչպես նաև յուրաքանչյուր տարի՝ ԵՊՀ-ում ուսումնառության վերաբերյալ շրջանավարտների

հարցումներ: Տեղի են ունեցել ուսանողների և շրջանավարտների հարցումների արդյունքների քննարկումներ ԵՊՀ գիտական խորհրդում և ֆակուլտետներում:

Դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողական հարցումների կատարելագործման ուղղությամբ կատարվել են որոշակի աշխատանքներ: Ստեղծվել է հանձնաժողով, որը վերանայել և ԵՊՀ գիտական խորհրդի հաստատմանն է ներկայացվել հարցման նոր կանոնակարգը՝ որոշակի փոփոխություններով և լրացումներով: Վերանայվել է նաև հարցաթերթի բովանդակությունը: Ավելացվել է հարց դասախոսների բացակայությունների և ուշացումների վերաբերյալ:

Դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ամեն կիսամյակ իրականացվող ուսանողական հարցումների հարցաթերթի տեղեկատվական հատվածը պարունակել է կոռուպցիոն դրսևորումներին վերաբերող 2 հարց (դրամի դիմաց գնահատական ստանալու և հարկադրված մասնավոր պարապմունքների մասին): Հարցաթերթի տեղեկատվական հատվածի արդյունքներն ամփոփվել և տրամադրվել են ֆակուլտետներին՝ ամբիոններում քննարկելու համար: Այդ արդյունքները ներկայացվել են նաև ԵՊՀ գիտական խորհրդին (Հավելված 1-ի թիվ 1 ներդիրում ներկայացված են 2013/2014 ուստարվա 1-ին և 2-րդ կիսամյակների հարցումների արդյունքները):

Առկա ուսուցման համակարգում հարցմանը մասնակցած ուսանողների 1.9 %-ը դրական է պատասխանել դրամի դիմաց գնահատական կամ ստուգարք ստանալու հարցին, իսկ մասնավոր պարապմունքների համար հարկադրված վճարելու հարցին դրական է պատասխանել 2.5 %-ը: Հարկ է նշել, որ մագիստրատուրայի ուսանողների շրջանում դրամի դիմաց գնահատական կամ ստուգարք ստանալու հարցին դրական է պատասխանել 1.4 %-ը, իսկ մասնավոր պարապմունքների համար հարկադրված վճարելու հարցին՝ 1.9 %-ը:

ԵՊՀ-ում ուսումնառության վերաբերյալ շրջանավարտների հարցումը ընդգրկում է ողջ ուսումնառության ընթացքը և արտացոլում է ցուցանիշների գրեթե նույն պատկերը (Հավելված 1-ի թիվ 2 ներդիրում ներկայացված են 2013/2014 ուստարվա շրջանավարտների հարցումների արդյունքները): Կոռուպցիոն երևույթների վերաբերյալ շրջանավարտների հարցման թերթիկում, ի լրումն վերը նշված երկու հարցերի, առկա է նաև հարց բարեխոսությամբ (հովանավորչությամբ) գնահատական կամ ստուգարք ստանալու մասին: Դրամի դիմաց գնահատական ստանալու հարցին

դրական է պատասխանել հարցմանը մասնակցած շրջանավարտների շուրջ 2.5 %-ը, իսկ բարեխոսությամբ (հովանավորչությամբ) գնահատական կամ ստուգարք ստանալու հարցին՝ 3.6 %-ը: Հարկադրված մասնավոր պարապմունքների համար վճարելու հարցին դրական է պատասխանել շրջանավարտների 3.4 %-ը:

Տվյալ հարցումների պրակտիկան շարունակվելու է հետաքրքիր է նաև դիտարկել համապատասխան տվյալների դինամիկան: Նախկին երկու տարիներին առկա ուսուցման համակարգում հարցումներին մասնակցած ուսանողների 2.5-3 %-ն էր դրական պատասխանել դրամի դիմաց գնահատական կամ ստուգարք ստանալու հարցին: Այսպիսով՝ վերջին 2 տարիների ընթացքում, ըստ իրականացված ուսանողական հարցումների արդյունքների, նկատվում է կոռուպցիոն երևույթների դրսևորման նվազում:

Մշակվել են ԵՊՀ դասընթացների և կրթական ծրագրերի գնահատման առցանց համակարգ և որակի ապահովման էլեկտրոնային շտեմարան: Համակարգը գործարկվել է համացանցում և փորձարկվել ԵՊՀ իրավաբանական ֆակուլտետի 2-րդ կուրսի ուսանողների կողմից: Առաջիկա տարիներին համակարգի գործարկումն էապես կնպաստի կրթության որակի բարձրացմանը և մի շարք այլ խնդիրների լուծմանը:

Ներքին իրավական ակտեր

Շարունակաբար իրականացվել է համալսարանի ներքին իրավական ակտերի կիրառման գործընթացում ծագող խնդիրների մոնիթորինգ, որի արդյունքում բացահայտված թերություններն անմիջապես շտկվել են, իսկ այլաբանություն, երկիմաստ և անհստակ կանոնակարգումներ պարունակող դրույթները՝ փոփոխվել: Այդ ուղղությամբ ակտիվ համագործակցություն է ծավալվել ֆակուլտետների գիտական խորհուրդների և դեկանատների հետ:

Շարունակվել է համալսարանի ներքին իրավական ակտերի վերանայման և բարելավման գործընթացը: Ամբողջությամբ փոխվել են Երևանի պետական համալսարանի ներքին կարգապահական կանոնները և համապատասխանեցվել համալսարանի ներքին կարգապահության արդի պահանջներին:

Ապահովվել է կրթական գործընթացը կանոնակարգող իրավական ակտերի ընդունման, դրանում փոփոխությունների և լրացումների կատարման գործընթացը:

Ուսանողական կազմակերպություններ, աշխատանք ուսանողների հետ

Կազմակերպվել են «Կրթական համակարգում կոռուպցիոն երևույթների բացասական ազդեցությունը և հետևանքները» և «Կրթական համակարգում կոռուպցիոն երևույթների դեմ պայքարի մեխանիզմներ» թեմաներով սեմինար-քննարկումներ: ԵՊՀ ուսխորհրդի «Ուսանողական ռեկտորատ» ծրագրի ընթացքում քննարկվել են կոռուպցիոն երևույթների դեմ պայքարին վերաբերող խնդիրներ:

Աշխատանքներն արդյունավետ կազմակերպելու հարցերով ուսանողական կազմակերպություններին մեթոդական աջակցություն է ցուցաբերվել: Քայլեր են ձեռնարկվել միջազգային համագործակցության ասպարեզում ուսանողական կառույցների կարողությունների զարգացման ուղղությամբ:

Ուսանողական կազմակերպությունների կողմից իրականացված մի քանի տասնյակ միջոցառումներին մասնակցել են պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչներ: Համահամալսարանական գրեթե բոլոր մեծ հանդիսություններին (ԵՊՀ մեծարման և առաջին կուրսեցու երդման արարողություն, Ուսանողների միջազգային օր, «Լավագույն ուսանող» մրցանակաբաշխություն) մասնակցել են ռեկտորը, պրոռեկտորները, դեկանները: Ֆակուլտետներում կազմակերպվել են դասախոս-ուսանող երկխոսությանն ուղղված տարբեր հանդիպումներ, խորհրդակցություններ, բարոյահոգեբանական և բարոյագիտական թեմաներով տեղեկատվության տարածում, էքսկուրսիաներ և այլն, որոնք միտված են եղել ուսանողների և դասախոսների միջսերնդային երկխոսությանը:

Կազմակերպվել են բազմաթիվ հանդիպումներ և սեմինարներ ուսանողների՝ պարտադիր կրթամասային հետազոտական աշխատանքների կատարման նրբությունների իրազեկման և գիտահետազոտական աշխատանք կատարելու իրավունքների ու ընթացակարգերի վերաբերյալ: Ուսանողների՝ հետազոտական աշխատանքներում ներգրավման իրավունքների և պարտականությունների իրազեկման ու գիտական գրագրության բարելավման նպատակով մշակվել է «Գիտահետազոտական աշխատանք կատարելու հիմնական սկզբունքները. մեթոդական ցուցումներ» ձեռ-

նարկը, որը միտված է նաև ուսանողների կողմից կուրսային և դիպլոմային աշխատանք «պատվիրելու» ռիսկը նվազեցնելուն:

ԵՊՀ պորտալի զարգացման շրջանակներում ստեղծվել է «Ուսանողական պորտալ», որն ամփոփում է 7 կայք: Մշակվել է նաև «Ուղիղ կապ ՈԻԽ-ի հետ» ենթակայքը, որի միջոցով ուսանողները կարող են ուղիղ կապ հաստատել ուսանողական խորհրդի հետ և ներկայացնել իրենց հուզող հիմնախնդիրները, այդ թվում կոռուպցիոն ռիսկ պարունակող հարցերը:

Անձնակազմի կառավարում, գնումների գործընթաց

Իրականացվել են պաշտոնների տեղակալման կանոնակարգերով համապատասխան մրցույթների անցկացման, դրանցում սուբյեկտիվ գործոնների ազդեցության նվազեցման և մրցակցային գործընթացի խրախուսման աշխատանքներ. ԵՊՀ-ում թափուր աշխատատեղերի մրցույթի հայտարարությունները տարածվել են հնարավորինս լայն շրջանակներում՝ ԵՊՀ ինտերնետային պորտալում, հանրապետական մամուլում (անկախ կանոնակարգի պահանջից):

Աշխատանքներ են իրականացվել ԵՊՀ վարչական և օժանդակ պաշտոնների համակարգի սահմանման և դասակարգման կարգի մշակման, ինչպես նաև վերոհիշյալ պաշտոններն զբաղեցնող անձանց ատեստացիայի կարգի մշակման ուղղությամբ:

Հստակեցվել են օրենսդրությամբ սահմանված գնումների գործընթացին առնչվող նորմերի, համալսարանում գնումների իրականացման ընթացակարգի ու այդ համատեքստում ստորաբաժանումների կողմից պարտականությունների ճիշտ և ժամանակին կատարման պահանջները:

Համալսարանի ֆինանսական կառավարման հաշվետվողականությունն ու հրապարակայնությունը բարձրացնելու նպատակով ամենամյա եկամուտների ու ծախսերի նախահաշիվն ու նախորդ տարիների կատարողականը ներկայացվել են համալսարանի գիտխորհրդի քննարկմանը:

Հավելված 1-ի ներդիր 1.

**Երևանի պետական համալսարան
Ուսանողական հարցման «Տեղեկատվական հատված»-ի արդյունքներ**

Առկա ուսուցում

2013/2014 ուստարի, 1-ին կիսամյակ

Հարցմանը մասնակցել է 8356 ուսանող

Հարց	Այո	Ոչ	Գումարային
Արդյո՞ք անցած քննաշրջանի ընթացքում դրամի դիմաց ստացել եք գնահատական (ստուգարք)	151	7884	8035
Արդյո՞ք անցած քննաշրջանի ընթացքում հարկադրված եք եղել վճարել մասնավոր պարապմունքների համար՝ գնահատական (ստուգարք) ստանալու նպատակով	196	7698	7894

Բակալավրիատ

Հարցմանը մասնակցել է 6642 ուսանող

Հարց	Այո	Ոչ	Գումարային
Արդյո՞ք անցած քննաշրջանի ընթացքում դրամի դիմաց ստացել եք գնահատական (ստուգարք)	128	6260	6388
Արդյո՞ք անցած քննաշրջանի ընթացքում հարկադրված եք եղել վճարել մասնավոր պարապմունքների համար՝ գնահատական (ստուգարք) ստանալու նպատակով	165	6124	6289

Մագիստրատուրա

Հարցմանը մասնակցել է 1714 ուսանող

Հարց	Այո	Ոչ	Գումարային
Արդյո՞ք անցած քննաշրջանի ընթացքում դրամի դիմաց ստացել եք գնահատական (ստուգարք)	23	1624	1647
Արդյո՞ք անցած քննաշրջանի ընթացքում հարկադրված եք եղել վճարել մասնավոր պարապմունքների համար՝ գնահատական (ստուգարք) ստանալու նպատակով	31	1574	1605

Բակալավրիատ

1-ին կուրս

Հարցմանը մասնակցել է 2396 ուսանող

Հարց	Այո	Ոչ	Գումարային
Արդյո՞ք անցած քննաշրջանի ընթացքում դրամի դիմաց ստացել եք գնահատական (ստուգարք)	22	2294	2316
Արդյո՞ք անցած քննաշրջանի ընթացքում հարկադրված եք եղել վճարել մասնավոր պարապմունքների համար՝ գնահատական (ստուգարք) ստանալու նպատակով	48	2242	2290

2-րդ կուրս

Հարցմանը մասնակցել է 2189 ուսանող

Հարց	Այո	Ոչ	Գումարային
Արդյո՞ք անցած քննաշրջանի ընթացքում դրամի դիմաց ստացել եք գնահատական (ստուգարք)	53	2056	2109
Արդյո՞ք անցած քննաշրջանի ընթացքում հարկադրված եք եղել վճարել մասնավոր պարապմունքների համար՝ գնահատական (ստուգարք) ստանալու նպատակով	56	2006	2062

3-րդ կուրս

Հարցմանը մասնակցել է 512 ուսանող

Հարց	Այո	Ոչ	Գումարային
Արդյո՞ք անցած քննաշրջանի ընթացքում դրամի դիմաց ստացել եք գնահատական (ստուգարք)	7	478	485
Արդյո՞ք անցած քննաշրջանի ընթացքում հարկադրված եք եղել վճարել մասնավոր պարապմունքների համար՝ գնահատական (ստուգարք) ստանալու նպատակով	15	464	479

4-րդ կուրս

Հարցմանը մասնակցել է 1545 ուսանող

Հարց	Այո	Ոչ	Գումարային
Արդյո՞ք անցած քննաշրջանի ընթացքում դրամի դիմաց ստացել եք գնահատական (ստուգարք)	46	1432	1478
Արդյո՞ք անցած քննաշրջանի ընթացքում հարկադրված եք եղել վճարել մասնավոր պարապմունքների համար՝ գնահատական (ստուգարք) ստանալու նպատակով	46	1412	1458

Մագիստրատուրա

1-ին կուրս

Հարցմանը մասնակցել է 873 ուսանող

Հարց	Այո	Ոչ	Գումարային
Արդյո՞ք անցած քննաշրջանի ընթացքում դրամի դիմաց ստացել եք գնահատական (ստուգարք)	11	830	841
Արդյո՞ք անցած քննաշրջանի ընթացքում հարկադրված եք եղել վճարել մասնավոր պարապմունքների համար՝ գնահատական (ստուգարք) ստանալու նպատակով	11	814	825

2-րդ կուրս

Հարցմանը մասնակցել է 841 ուսանող

Հարց	Այո	Ոչ	Գումարային
Արդյո՞ք անցած քննաշրջանի ընթացքում դրամի դիմաց ստացել եք գնահատական (ստուգարք)	12	794	806
Արդյո՞ք անցած քննաշրջանի ընթացքում հարկադրված եք եղել վճարել մասնավոր պարապմունքների համար՝ գնահատական (ստուգարք) ստանալու նպատակով	20	760	780

2013/2014 ուստարի 2-րդ կիսամյակ

Հարցմանը մասնակցել է 6773 ուսանող

Հարց	Այո	Ոչ	Գումարային
Արդյո՞ք անցած քննաշրջանի ընթացքում դրամի դիմաց ստացել եք գնահատական (ստուգարք)	172	6339	6511
Արդյո՞ք անցած քննաշրջանի ընթացքում հարկադրված եք եղել վճարել մասնավոր պարապմունքների համար՝ գնահատական (ստուգարք) ստանալու նպատակով	200	6220	6420

Բակալավրիատ

Հարցմանը մասնակցել է 5993 ուսանող

Հարց	Այո	Ոչ	Գումարային
Արդյո՞ք անցած քննաշրջանի ընթացքում դրամի դիմաց ստացել եք գնահատական (ստուգարք)	164	5595	5759
Արդյո՞ք անցած քննաշրջանի ընթացքում հարկադրված եք եղել վճարել մասնավոր պարապմունքների համար՝ գնահատական (ստուգարք) ստանալու նպատակով	187	5482	5669

Մագիստրատուրա

Հարցմանը մասնակցել է 780 ուսանող

Հարց	Այո	Ոչ	Գումարային
Արդյո՞ք անցած քննաշրջանի ընթացքում դրամի դիմաց ստացել եք գնահատական (ստուգարք)	8	744	752
Արդյո՞ք անցած քննաշրջանի ընթացքում հարկադրված եք եղել վճարել մասնավոր պարապմունքների համար՝ գնահատական (ստուգարք) ստանալու նպատակով	13	738	751

Բակալավրիատ

1-ին կուրս

Հարցմանը մասնակցել է 1958 ուսանող

Հարց	Այո	Ոչ	Գումարային
Արդյո՞ք անցած քննաշրջանի ընթացքում դրամի դիմաց ստացել եք գնահատական (ստուգարք)	45	1843	1888
Արդյո՞ք անցած քննաշրջանի ընթացքում հարկադրված եք եղել վճարել մասնավոր պարապմունքների համար՝ գնահատական (ստուգարք) ստանալու նպատակով	77	1785	1862

2-րդ կուրս

Հարցմանը մասնակցել է 2088 ուսանող

Հարց	Այո	Ոչ	Գումարային
Արդյո՞ք անցած քննաշրջանի ընթացքում դրամի դիմաց ստացել եք գնահատական (ստուգարք)	67	1941	2008
Արդյո՞ք անցած քննաշրջանի ընթացքում հարկադրված եք եղել վճարել մասնավոր պարապմունքների համար՝ գնահատական (ստուգարք) ստանալու նպատակով	59	1898	1957

3-րդ կուրս

Հարցմանը մասնակցել է 533 ուսանող

Հարց	Այո	Ոչ	Գումարային
Արդյո՞ք անցած քննաշրջանի ընթացքում դրամի դիմաց ստացել եք գնահատական (ստուգարք)	15	499	514
Արդյո՞ք անցած քննաշրջանի ընթացքում հարկադրված եք եղել վճարել մասնավոր պարապմունքների համար՝ գնահատական (ստուգարք) ստանալու նպատակով	12	498	510

4-րդ կուրս

Հարցմանը մասնակցել է 1414 ուսանող

Հարց	Այո	Ոչ	Գումարային
Արդյո՞ք անցած քննաշրջանի ընթացքում դրամի դիմաց ստացել եք գնահատական (ստուգարք)	37	1312	1349
Արդյո՞ք անցած քննաշրջանի ընթացքում հարկադրված եք եղել վճարել մասնավոր պարապմունքների համար՝ գնահատական (ստուգարք) ստանալու նպատակով	39	1301	1340

Մագիստրատուրա

1-ին կուրս

Հարցմանը մասնակցել է 780 ուսանող

Հարց	Այո	Ոչ	Գումարային
Արդյո՞ք անցած քննաշրջանի ընթացքում դրամի դիմաց ստացել եք գնահատական (ստուգարք)	8	744	752
Արդյո՞ք անցած քննաշրջանի ընթացքում հարկադրված եք եղել վճարել մասնավոր պարապմունքների համար՝ գնահատական (ստուգարք) ստանալու նպատակով	13	738	751

Հավելված 1-ի ներդիր 2.

**Երևանի պետական համալսարան
Կոռուպցիայի դրսևորումների վերաբերյալ
շրջանավարտների հարցման արդյունքներ**

2014 թ.

Բակլավրիատ

Հարցմանը մասնակցել է 1571 ուսանող

Հարց	Այո	Ոչ	Գումարային
Արդյո՞ք ուսումնառության ընթացքում դրամի դիմաց ստացել եք գնահատական (ստուգարք)	35	1377	1412
Արդյո՞ք ուսումնառության ընթացքում բարեխոսությամբ (հովանավորչությամբ) ստացել եք գնահատական (ստուգարք)	51	1340	1391
Արդյո՞ք ուսումնառության ընթացքում հարկադրված եք եղել վճարել մասնավոր պարապմունքների համար՝ գնահատական (ստուգարք) ստանալու նպատակով	47	1322	1369

Մագիստրատուրա

Հարցմանը մասնակցել է 690 ուսանող

Հարց	Այո	Ոչ	Գումարային
Արդյո՞ք ուսումնառության ընթացքում դրամի դիմաց ստացել եք գնահատական (ստուգարք)	5	605	610
Արդյո՞ք ուսումնառության ընթացքում բարեխոսությամբ (հովանավորչությամբ) ստացել եք գնահատական (ստուգարք)	6	583	589
Արդյո՞ք ուսումնառության ընթացքում հարկադրված եք եղել վճարել մասնավոր պարապմունքների համար՝ գնահատական (ստուգարք) ստանալու նպատակով	5	578	583